

ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2016/2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ – 2017



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	5
Կրթական գործունեություն .....	8
Գիտահետազոտական գործունեություն .....	38
Գիտական գրադարան .....	47
Հրատարակչական գործունեություն .....	50
Միջազգային համագործակցություն .....	55
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր.....	59
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ.....	69
Սոցիալական քաղաքականություն .....	85
Տնտեսական գործունեություն.....	89
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ.....	91
Հավելված .....	102



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ժողովրդի տարեգրության մեջ պատմական իրադարձություններ նշանավորող էջերը շատ են: Այդպիսիներից է 1919 թվականը, որը խորհրդանշում է Երևանի պետական համալսարանի ծնունդը: Եվս մեկուկես տարի, և համայն հայությունը կտոնի հայոց մայր բուհի հիմնադրման 100-ամյակը: Պանծալի հոբելյանի շեմին մոտեցող համալսարանն արդեն այսօր նախապատրաստվում է արժանավայել դիմավորելու և մեծ շուքով նշելու ծննդյան տարեդարձը, որը նաև լուրջ ստուգատես կլինի՝ ներկայացնելու մեկդարյա գործունեության տարբեր փուլերի արդյունքը, ձեռքբերումներն ու հաջողությունները, մեր երկրի ու ժողովրդի բարօրությանը միտված ձեռնարկումները, հայրենական և միջազգային բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ունեցած մեծ ավանդը և շարունակվող արժեքավոր ներդրումները: ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծվել է բուհի 100-րդ տարեդարձին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողով, հաստատվել է այդ միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը:

Հիրավի, ԵՊՀ-ն բազմապրոֆիլ դասական համալսարան է, որի գործունեությունը նպատակամղված է հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության և հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը:

2016/2017 ուսումնական տարում համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Ձեռնարկվել և իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ և ծրագրեր, որոնք կոչված էին ապահովելու համալսարանի գործունեության արդյունավետությունը, խթանելու նրա առաջընթացը և մրցունակությունը միջազգային գիտակրթական ասպարեզում:

Ծավալուն և նպատակալաց աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման և մեթոդների նորացման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործման, դասավանդման որա-

կի բարձրացման, կրթության բովանդակության հարստացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման, ուսուցման տեխնոլոգիական հենքի նորացման և զարգացման և այլ ուղղություններով :

Լուրջ ձեռքբերումներ են գրանցվել գիտահետազոտական բնագավառում. իրականացվել են գիտական տարբեր նախագծեր, համալսարանականներն ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ դրամաշնորհային ծրագրերի, ընդլայնվել է ուսանողների և ասպիրանտների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում: Տարբեր ֆակուլտետներում, գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում կատարվել են արժեքավոր ուսումնասիրություններ, կազմակերպվել և անցկացվել են տարբեր բնագավառների վերաբերող թեմաներով բազմաթիվ գիտաժողովներ (այդ թվում՝ նաև միջազգային), կոնֆերանսներ, գիտագործնական սեմինարներ ու քննարկումներ:

Ակտիվ է եղել ԵՊՀ գործունեությունը միջազգային կապերի բնագավառում: Ընդլայնվել է համագործակցությունը արտերկրի գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքվել են մի շարք նոր պայմանագրեր, վերակնքվել ու շարունակվել են նախկինները: Իրականացվել են համատեղ կրթական, գիտական, մշակութային ծրագրեր ու միջոցառումներ, դասախոսների և ուսանողների փոխանակություն, փոխայցելություններ և այլն:

Արդյունավետորեն շարունակվել է հրատարակչական գործունեությունը. հրատարակվել են տասնյակ գրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, ուղեցույցներ, անխախտ պարբերականությամբ լույս են տեսել գիտական հանդեսները:

Համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման նպատակով աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ՝ ուշադրության կենտրոնում պահելով նրանց հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործումը:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել նաև տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: ԵՊՀ տարբեր մասնաշենքերում, ուսումնասիրատարական և հանգստի բազաներում կատարվել են բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ, ձեռնարկվել են միջոցառումներ նյութատեխնիկա-

կան բազայի հարստացման ուղղությամբ, բարելավվել են ներքին տեղեկատվական ցանցի աշխատանքները, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ և այլն:

Համալսարանական կյանքի բոլոր բնագավառներում իրականացվող աշխատանքներում ակտիվորեն ընդգրկվել են ուսանողական կառույցները:

Արդյունավետ գործունեություն է ծավալել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

\* \* \*

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Երևանի պետական համալսարանի 2016/2017 ուսումնական տարվա գործունեությունը՝ ըստ ոլորտների:

## ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ ուղենիշ ունենալով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով այդ ուղղությամբ նախատեսված նպատակներն ու համապատասխան խնդիրները: Շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի զարգացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

### 1. Որակի ապահովում

2016/2017 ուստարում համալսարանում շարունակվել են որակի ապահովմանը նպատակաուղղված գործընթացները, որոնք համատեղ կազմակերպել և իրականացրել են ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը և համալսարանական այլ ստորաբաժանումներ:

Ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակով սահմանված է տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթություն: Նշված նպատակի իրագործմանը միտված՝ ձեռնարկվել և հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք գործողություններ: Մասնավորապես մշակվել է առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթուղթը, որը հաստատվել է համալսարանի ԳԽ 2017 թ. մայիսի 4-ի նիստում և տեղադրվել ԵՊՀ պաշտոնական կայքում:

«Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» միասնական փաստաթուղթ է առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար, որով սահմանվում են բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատաձևավալնե-



րը՝ արտահայտված ECTS կրեդիտներով: Այս փաստաթուղթը էականորեն տարբերվում է իր նախորդներից: Մասնավորապես, եթե նախկինում առկա ուսուցման ուսումնական կիսամյակի տևողության համար սահմանված 20 շաբաթից 16-ը հատկացվում էր տեսական ուսուցմանը, իսկ 4-ը՝ քննաշրջանին, ապա ներկա փաստաթղթի համաձայն՝ 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 5-ը՝ քննաշրջանին (2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգարքներին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին): Հեռակա ուսուցման ուսումնական կիսամյակի համար սահմանված 16-շաբաթյա տևողությունը հիմնականում բաշխվում է նախկինի պես՝ 4 շաբաթ հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ուսումնական վերջին կիսամյակում (առկա ուսուցման՝ 8-րդ, հեռակա ուսուցման՝ 10-րդ) լսարանային դասընթացներ նախատեսված չեն:

Էապես փոխվել է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը: Մասնավորապես ծրագրի ընդհանուր կրթական կառուցամասում կամրնտրական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 6 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտանոց 3 դասընթաց, որոնք իրականացվում են 2-րդ կուրսում: Մասնագիտական կառուցամասը ներառում է նաև հատուկ մասնագիտական դասընթացներ և կրթական այլ մոդուլներ: Կառուցամասային փոփոխություններով պայմանավորված՝ կատարվել է նաև դասընթաց-մոդուլների փոփոխություն. որոշ դասընթացներ վերափոխվել են, ներմուծվել են նորերը: Օրինակ՝ «Հայոց լեզու և գրականություն» դասընթացը փոխարինվել է «Հայոց լեզու և խոսքի մշակույթ»-ով, «Համակարգչից օգտվելու հմտություններ»-ը՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ»-ով և այլն: Ներմուծվել են «Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք», «Գործարարության հիմունքներ», «Սոցիոլոգիայի հիմունքներ» և այլ դասընթացներ: Առանձնակի ուշադրություն է դարձվել ավարտական աշխատանքին, որի աշխատածավալը 12 կրեդիտից հասցվել է 20 կրեդիտի:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը», որի նախագիծը քննարկվել է ֆակուլտետներում և կրթական կենտրոններում ու ինստիտուտներում, այնուհետև ստացված առաջարկությունների հիման վրա արված համապա-

տասխան փոփոխություններով հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում և գործողության մեջ մտել 2017 թ. սեպտեմբերի 1-ից: Կարգում սահմանված են մագիստրոսական թեզը՝ որպես ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակության ավարտուն աշխատանք, դրան ներկայացվող պահանջները, թեզի օրինակելի կառուցվածքը, որում տրված են թեզի կառուցվածքային յուրաքանչյուր բաղադրիչի համար ներկայացվող պահանջները: Հստակորեն նկարագրված են նաև թեզի ձևավորման պահանջները: Հանգամանորեն ներկայացված են թեզի պատրաստման և պաշտպանության գործընթացները, դրանց իրականացման ժամանակացույցը: Առանձին կետով սահմանված է մագիստրոսական թեզի գնահատումը, որն իրականացվում է համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների, որոնք նույնպես հստակորեն ներկայացված են աղյուսակով:

Հաշվետու ուստարում աշխատանքներ են տարվել նաև «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի» մշակման ուղղությամբ, որոնք ամփոփվել են ընթացիկ ուստարվա սեպտեմբերին, և կարգը ներկայացվել է ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը (հաստատվել է ԳԽ-ի 2017 թ. հոկտեմբերի 12-ի նիստում): Ինչպես մագիստրոսական թեզին վերաբերող կարգում, այս փաստաթղթում ևս հանգամանորեն ներկայացված են ավարտական աշխատանքի պատրաստմանը և գնահատմանը վերաբերող բոլոր պահանջները, չափանիշները և չափորոշիչները, համապատասխան գործընթացների նկարագրությունը:

Վերանայվել են կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը, որոնց հիման վրա մշակվել և հաստատվել է նոր՝ միասնական «Բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»: Այն սահմանում է Երևանի պետական համալսարանում առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները, ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը և այլն: Նախկին երկու կարգերի հիման վրա ստեղծված միաս-

նական այս փաստաթուղթը կազմվել է՝ հաշվի առնելով անցած տարիների փորձը, ինչպես նաև կատարված դիտարկումների արդյունքները: Փոփոխություններ են կատարվել նաև սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգում. օրինակ՝ մասնագիտական դասընթացներում ներմուծվել է 4 խումբ գնահատման ձև՝ եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգաբային: Ընդ որում՝ առանց ընթացիկ գնահատման (միայն եզրափակիչ քննությամբ) և առանց եզրափակիչ գնահատման կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները, իսկ եզրափակիչ գնահատումով կարող են լինել միայն այն դասընթացները, որոնք կիսամյակում ունեն առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն: Փոփոխությունները վերաբերում են նաև քննությունների վերահանձնման և դասընթացի կրկնման գործընթացներին: Օրինակ՝ եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողին չի թույլատրվում այն վերահանձնել, քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողը ռեկտորատի որոշմամբ հեռացվում է համալսարանից, մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով և այլն:

Կարգում ներառված է առանձին դրույթ՝ առցանց դասընթացի կազմակերպման վերաբերյալ, որով սահմանվում է, որ ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով: Ընդ որում՝ առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը:

Ուսումնական աշխատանքների և գործընթացների բարելավման նպատակով նոր կարգում տեղ են գտել պահանջներ ուսանողի անձնական գործի և ուսումնական քարտի, պրակտիկայի կազմակերպման, կուրսային աշխատանքի պատրաստման և գնահատման վերաբերյալ և այլն: Կարգում առկա են նաև կամընտրական դասըն-

թացնների ընտրության ընթացակարգին և կրթական ծրագրի ղեկավարին վերաբերող բաժինները:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները լրամշակվել, համապատասխանեցվել են վերոնշյալ կարգին և կրթական ծրագրերին ու տեղադրվել ԵՊՀ կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել են առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի և բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական պլանների օրինակելի ձևաթերթերը:

Ելնելով ԵՊՀ-ում մագիստրոսների պատրաստմանը վերաբերող փաստաթղթերի պահանջներից՝ հաշվետու ժամանակաշրջանում վերամշակել են մագիստրոսի կրթական ծրագրերը՝ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան: Այս ուղղությամբ աշխատանքներն ընթացել են համակարգված և համաձայն ռեկտորի հրամանով սահմանված ժամանակացույցի: Յուրաքանչյուր կրթական ծրագրի լրամշակման համար նախ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը լրացրել և ֆակուլտետի ԳԽ-ի հաստատմանն է ներկայացրել տվյալ կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը, ինչն այնուհետև ներկայացվել է Որակի ապահովման կենտրոն՝ հայտի գնահատման և ծրագրի հետագա մշակումն արտոնելու համար: Այնուհետև ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի մշտական հսկողության ներքո իրականացվել են աշխատանքային բոլոր փուլերը. ստեղծվել են սահմանված ձևաչափերով և գործող պահանջներին համապատասխան ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթները, որոնք ընդգրկում են ծրագրի ուսումնական պլանը, ծրագրի մասնագիրք՝ ներառյալ ուսումնական մոդուլների համառոտագրերը: Դրանք լիովին համապատասխանեցվել են «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթի պահանջներին: Ծրագրերի փաստաթղթային փաթեթները ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից ստուգվելուց հետո տրամադրվել են փորձաքննական հանձնաժողովներին, որոնք անցկացրել են փորձաքննություն և համապատասխան եզրակացությունը ներկայացրել ՈԱ

կենտրոն: Գործընթացի հաջորդ փուլում փորձաքննության և ՈԱԿ-ի եզրակացությունները ներկայացվել են ԵՊՀ ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար: Լրամշակված կրթական ծրագրերի վերաբերյալ վերջնական եզրակացությունների հիման վրա ԵՊՀ գիտական խորհուրդը 2017 թ. մարտի 2-ի նիստում հաստատել է առկա ուսուցման 115 և հեռակա ուսուցման 23 մագիստրոսի կրթական ծրագիր, որոնք իրականացվում են ընթացիկ՝ 2017/2018 ուստարվանից:

Համալսարանի գործունեության կարևոր ուղղություններից մեկը դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները բարելավելն է, ինչը սահմանված է նաև ռազմավարական ծրագրով: Գործընթացն իրականացնելու համար նախատեսվել է ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով, ինչպես նաև ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և Եվրամիության «Էրազմուս պլյուս» ծրագրի ֆինանսավորմանն է ներկայացվել համապատասխան նախագիծ՝ «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» անվանումով: Նախագիծը հավանության է արժանացել Եվրահանձնաժողովի համապատասխան գործակալության կողմից և ստացել եռամյա ֆինանսավորում 2018-2020 թթ. համար:

Նախագծի հիմնական նպատակներն են.

1. Ուսանողի ուսումնական փորձառության բարելավում գործընկեր երկրներում ET 2020 խնդիրներին համահունչ՝ օժանդակելով դասավանդման և ուսումնառության զարգացմանը և նորարարությանը, աջակցելով տեխնոլոգիաների և հետազոտության ինտեգրացիային ու լավագույն փորձի տարածմանը:
2. Արդիականացնել բարձրագույն կրթությունը Հայաստանում, Վրաստանում և Բելառուսում՝ Բոլոնիայի օրակարգին համապատասխան, և կրթության ու

ուսուցման բնագավառում ստեղծել համագործակցություն ԵՄ և գործընկեր կրկրների միջև և գործընկեր կրկրներում՝ օժանդակելով դասախոսների և ուսանողների վիրտուալ շարժունությանը և զարգացնելով հարատև ուսումնառության ռեսուրսներն ու միջոցները:

Նշված նպատակներին հասնելու համար նախագծում նախատեսված է հետևյալ խնդիրների լուծումը.

1. Նպաստել դասախոսների վերապատրաստման կենտրոնների հզորացմանը գործընկեր բուհերում՝ զարգացնելով աշխատակազմի և վերապատրաստողների (հրահանգիչների) կարողությունները, արդիականացնելով ենթակառուցվածքները և ներմուծելով դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև ակադեմիական առաջնորդության նորարարական ծրագրեր:
2. Բարձրացնել գործընկեր բուհերի դասախոսական կազմի կարողությունները՝ զարգացնելով նրանց դասավանդման և ուսումնառության նորարարական ու տեխնոլոգիապես ուժեղացված հմտությունները և կոմպետենցիաների ու հետազոտության վրա հիմնված դասավանդման ունակությունները:
3. Հիմնել դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիա՝ որպես դասախոսների, վարչական կազմի և ուսանողների միջազգային հանրույթ, որոնք հետաքրքրված են բաց կրթական ռեսուրսների օգտագործմամբ և փոխանակմամբ՝ տեխնոլոգիապես ուժեղացված դասավանդման և ուսումնառության բարելավման նպատակով:
4. Օժանդակել դասավանդման և ուսումնառության նորարարական և տեխնոլոգիապես ուժեղացված տեսակների և մեթոդների մասին ավելի մեծ իրազեկվածությանը և տարածել լավագույն փորձը գործընկեր կրկրների բուհերում և այդ բուհերի միջև:

Նախագծի գործընկերներն են Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի, Բելգիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի և Ավստրիայի մի շարք առաջատար համալսարաններ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել և ավարտին են հասցվել աշխատանքները ՀՀ և արտասահմանյան գործընկեր մի շարք կազմակերպությունների

հետ համատեղ իրականացվող TEMPUS “ARMENQA” ազգային նշանակության եռ-ամյա ծրագրի շրջանակներում՝ միտված ՀՀ-ում որակավորումների ազգային (ՈԱՇ) և ոլորտային (ՈՈՇ) շրջանակների իրականացմանը բուհական համակարգում: Նախագծի իրականացմամբ ստացվել են հետևյալ արդյունքները.

1. Մշակվել և 2016 թ. հունիսին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ ԲԿ ՈԱՇ-ը:
2. Մշակվել և ՀՀ ԿԳՆ-ի կողմից ընդունվել են բարձրագույն կրթության 5 ոլորտային որակավորումների շրջանակներ (ՈՈՇ), այդ թվում՝ ԵՊՀ-ում մշակված «Ֆիզիկա» և «Իրավագիտություն» ՈՈՇ-ները:
3. Մշակվել են ՀՀ ԲԿ ՈԱՇ-ի իրականացման ռազմավարությունը և օգտագործման ուղեցույցը, տերմինաբանական բառարանը, ինչպես նաև ՈԱՇ-ի իրականացման համար պատասխանատու մարմնի գործունեության հայեցակարգը:
4. Մշակվել և 800 տպաքանակով հրատարակվել է «Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում» դասախոսի ձեռնարկը, որը բաժանվել է նաև ԵՊՀ բոլոր ամբիոններին:
5. Իրականացվել է դասախոսական կազմի վերապատրաստում ՈԱՇ-ի և ՈՈՇ-ների կիրառման համար՝ արդյունահեն կրթական ծրագրեր մշակելու նպատակով:

Համալսարանի գործունեության ռազմավարական կարևոր մեկ այլ խնդրով պահանջվում է բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը: Խնդրի իրականացման նպատակով ձեռնարկվել են մի շարք գործողություններ: Մասնավորապես ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում գործադրելու ուղղությամբ հաշվետու ուստարում աշխատանքներն սկսվել են, և որոշ գործընթացների արդյունքում արդեն նոր մեթոդներ են կիրառվում: Այսպես, գործարկվում է դասախոսական կազմի հաշվետվողականության նոր մեթոդ՝ ներդրված «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթի»՝ ԵՊՀ ինտրանետ համակարգի միջոցով: Վերջինիս նպատակներից մեկն էլ ԵՊՀ հաշվետվողականության գործընթացները ավտոմատացնելը և առավել արդյունավետ դարձնելն է:

Գործողության հետագա իրականացման նպատակով ձեռնարկվում են նաև այլ քայլեր:

Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները հաշվետու ուստարվանից սկսած՝ իրականացվում են առցանց եղանակով: Դեռևս 2016 թ. ձեռնարկվել էին գործընթացներ հեռակա ուսուցման համակարգում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները փորձնական կարգով առցանց եղանակով կազմակերպելու ուղղությամբ: Ելնելով այդ փորձից՝ լրամշակվել և ԵՊՀ ԳԽ 2017 թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/2 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգը», և 2016/2017 ուստարում կիսամյակային հարցումները թե՛ հեռակա և թե՛ առկա ուսուցման համակարգերի ուսանողների շրջանում իրականացվել են առցանց եղանակով:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները առցանց կազմակերպելու նպատակով նույնպես լրամշակվել են համապատասխան կանոնակարգը (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/3 որոշմամբ) և հարցաթերթերը: Անցած ուստարվա շրջանավարտների հարցումները (և՛ հեռակա, և՛ առկա ուսուցման համակարգերում) իրականացվել են առցանց եղանակով:

Տպագրվել են համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածները առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

Որակյալ մասնագետների պատրաստման գործընթացում կարևորվում է նաև արտաքին շահակիցների՝ մասնավորապես գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը: Այս տեսակետից արդեն բարի ավանդույթ է դարձել Համալսարան - «Սինոփսիս-Արմենիա» փոխշահավետ համագործակցությունը, որի շրջանակներում իրականացվող կրթական գործընթացներում ընդգրկվում են ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի մի քանի տասնյակ սովորողներ:



## 2. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

Շարունակվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ու բարելավմանն ուղղված աշխատանքները: Կատարվել են աշխատանքներ ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Կատարելագործվել է էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision YSU» ծրագրի ավտոմատացված համակարգը, կարևորվել են աշխատանքներն ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման ուղղությամբ: Նույն համակարգի միջոցով յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են աշխատանքներ ամբիոնների կատարողականների վերահսկման ուղղությամբ, որոնց արդյունքները հաշվի են առնվել ամբիոնային բեռնվածությունների հաստատման ժամանակ:

Տարվել են աշխատանքներ ուսանողների՝ դասերի (մասնավորապես «Ֆիզդաստիարակություն» դասընթացի) հաճախելիությունը էլեկտրոնային եղանակով «SuperVision YSU» ավտոմատացված համակարգում գրանցելու ուղղությամբ:

Կրթության որակի բարելավման և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 4.1. խնդրի 4-րդ կետի համաձայն ձևավորված աշխատանքային խմբի կողմից լրամշակվել, ապա ԵՊՀ գիտական խորհրդի 30.03.17 թ. 6/2 որոշմամբ հաստատվել է «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական հաշվարկի նորմերը»: Նորմերի նախագիծը հաստատվել է բուհի ստորաբաժանումների դիտողությունները և առաջարկությունները քննարկելուց հետո:

Հարկ է նշել, որ նորմերի փոփոխման հիմքում ընկել են ԵՊՀ նախորդ տարիների փորձն ու մշտադիտարկումները, ինչպես նաև ՀՀ պետական և միջպետական բուհերում գործող համանման կարգերի ու նմանատիպ նորմերի ուսումնասիրությունները:

Նախկինում գործող նորմերի համեմատ ավելացվել, պակասեցվել ու փոփոխությունների են ենթարկվել որոշ դրույթներ, որոնք կա՛մ արդեն կորցրել են իրենց արդիականությունը, կա՛մ այլևս չեն բավարարում նախանշված պահանջները: Նախկինում գործող նորմերի համեմատ ներկայումս ունենք առանձնացված կրթական

ծրագրերի ղեկավարների, ԵՊՀ և ֆակուլտետային գիտական, ինչպես նաև ԵՊՀ և ֆակուլտետային մեթոդական խորհուրդների անդամների (նախագահ, քարտուղար, անդամ) ու դրանց կից ձևավորվող հանձնաժողովների աշխատանքները չափելու մեխանիզմներ, որոնք արտահայտված են հստակ ժամաքանակներով:

Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների ու փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

2016/2017 ուստարում ևս ֆակուլտետներում, ինստիտուտներում և կենտրոններում ղեկանատների գործավարությունը հստակեցնելու, վերահսկելի դարձնելու, ինչպես նաև գործառույթների օպտիմալացման նպատակով շարունակվել են ուսանողների անձնական գործերի՝ էլեկտրոնային եղանակով վարման գործընթացները:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ դրա արդյունավետ օգտագործման և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու ուստարում ևս տարվել են աշխատանքներ ուսումնական գործընթացին վերաբերող գործառույթներն ավտոմատացնելու ուղղությամբ: Օրինակ՝ ավտոմատացվել են ընթացիկ հրամանների, ինչպես նաև քննաշրջանից ու լուծարքային շրջանից հետո առարկայական պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփման գործընթացները:

«SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացված եղանակով անվանական ցուցակների ամփոփումը կիրառվել է նաև մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման գործընթացի դեպքում:

Ձեռնարկվել են աշխատանքներ վերականգնվող ուսանողների առարկայական տարբերությունների հաշվարկի ձևաթուղթը «SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացնելու ուղղությամբ:

2016 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների նոր ցանկը և դրա հետ կապված՝ նոր որակավորումները ԵՊՀ-ին 2016/2017 ուստարվանից հնարավորություն չեն տալիս շրջանավարտներին շնորհել նաև մանկավարժի որակավորում: Այս կապակցությամբ ԿԳՆ-ի հետ տարված աշխատանքների շնորհիվ (հաշվետու ուստարում մշակվել, ԵՊՀ գիտխորհրդի 2016 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 3 նիստում հաստատվել, ապա ԿԳ նախարարության կողմից հավանության է արժանացել «Երևանի պետական համալսարանի Բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու» կանոնակարգը՝ իր հավելված-ուսպլանով) լրացուցիչ կրեդիտների կուտակման ճանապարհով հնարավորություն ընձեռվեց մի շարք մասնագիտությունների գծով շրջանավարտներին շնորհելու նաև մանկավարժի լրացուցիչ որակավորում:

2017/2018 ուստարվանից սկսվել են մանկավարժի լրացուցիչ որակավորման դասընթացները, որոնց մասնակցելու համար դիմում-հայտ է ներկայացրել ԵՊՀ մոտ 450 ուսանող:

Հաշվետու ուստարվա արդյունքներով իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը՝ ելնելով կրթության որակի ապահովման պահանջներից և առաջնորդվելով գործող կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ առաջադիմության արդյունքների՝ նպաստ է տրվել Բակալավրիատի և մագիստրատուրայի 1528 ուսանողի, որոնցից 418-ը Բակալավրիատի 1-ին, 394-ը 2-րդ, 339-ը 3-րդ կուրսերից են, իսկ 377-ը մագիստրատուրայի 1-ին տարվա սովորողներ են: Համակարգի փոփոխման են ենթարկվել Բակալավրիատի 1-ին կուրսի 115 (27,5 %), 2-րդ կուրսի 60 (15,2 %), 3-րդ կուրսի 71 (20,9 %) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 67 (17,8 %) ուսանողներ:

Բարձր առաջադիմությամբ ուսանողներին, ովքեր ցուցաբերել են նաև հասարակական ակտիվություն, հատկացվել է կրթաթոշակ: Բացի պետական կրթաթոշակից՝ հատկացվել են նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ, որոնց թիվը 55 է, իսկ ստացողների թիվը՝ 61: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներ-

րին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից 1-ին կիսամյակում օգտվել է 1893 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 2691: Նրանցից 1-ին կիսամյակում 1643-ը եղել են բակալավրիատի, 89-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 161-ը՝ աշխատողների երեխաներ, իսկ 2-րդ կիսամյակում 2230-ը եղել են բակալավրիատի, 322-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 139-ը՝ աշխատողների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի գումարը կազմում է ավելի քան 387 մլն դրամ: Ինչպես նախորդ, հաշվետու ուստարում ևս իրականացված գործընթացն ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների՝ մանրամասն ամփոփվել է առանձին գրքի տեսքով, որը ներկայացվել է նաև ԿԳՆ:

Զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով շարունակվել են առաջադիմության վերահսկման աշխատանքները: Հաշվետու ուստարում ՏՏԿՀ կենտրոնում և Ուսումնամեթոդական վարչությունում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների ղեկնաստների և կենտրոնների աշխատողների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով բոլոր գործողություններն իրականացվել են ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության պահանջների և ԵՊՀ կանոնակարգերի համաձայն:

Ամփոփիչ ատեստավորման ընթացքը տեսագրելու և արդյունքների բողոքարկման գործընթացն անխափան իրականացնելու նպատակով շարունակվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքները՝ դրանց թիվը հասցնելով 67-ի:

Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2016/2017 ուստարում լրացվել և շրջանավարտներին է հանձնվել 4607 դիպլոմ, որից 2606-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 677-ը՝ մագիստրա-

տուրայում, 926-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 320-ը՝ մագիստրատուրայում, 25-ը՝ նախորդ տարիների (որոնցից 1-ը՝ նախկին 5-ամյա ուսուցման) շրջանավարտների: Վերականգնվել և տրվել է 53 դիպլոմի կրկնօրինակ:

Հաշվետու ուսումնական տարում ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները, ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի և տեղափոխությունների տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից իրականացվող ՀՀ բուհերի վարկանշավորման ամենամյա գործընթացի համար հաշվետու ուստարում ևս հավաքագրվել են ԵՊՀ վարկանշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները, ամփոփվել և ներկայացվել են ԿՏԱԿ: Ինչպես նախորդ տարիներին, 2016 թ-ին ևս բուհերի վարկանշավորման արդյունքում ԵՊՀ-ն իր ցուցանիշներով առաջինն էր:

Բանկերի կողմից ուսման վարձի վճարման համար ուսանողներին տրամադրվող վարկի գործընթացը ավելի հստակ կազմակերպելու համար ԵՊՀ-ն հաշվետու ուստարում ևս ՀՀ բանկերի միություն է ուղարկել ուսումն ընդհատած ուսանողների տվյալները՝ նրանց վարկեր չտրամադրելու համար:

2016/2017 ուստարում շարունակվել է համագործակցությունը ՀՀ ՊՆ բարձրագույն կրթական հաստատությունների հետ՝ նրանց ցուցաբերելով մեթոդական աջակցություն ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման ու իրականացման ուղղությամբ: ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԵՊՀ դասախոսների կողմից այդ բուհում մի շարք առարկաների դասավանդման գործընթացի կազմակերպումը, որոնց թիվը 2016/2017 ուստարում 6 էր:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են աշխատանքներ ԵՊՀ անվճար համակարգի արական սեռի ու-

սանողների՝ ՊՆ համապատասխան ինստիտուտներում կազմակերպվող դասընթացների կամավորության սկզբունքով մասնակցելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 50 ուսանող ընդգրկվել է այդ գործընթացում:

Շարունակելով համագործակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության հետ՝ 2017/2018 ուստարում ԵՊՀ-ում մի շարք կրթական ծրագրերով նպատակային ընդունելություն է կատարվել պաշտպանության նախարարության համար նախատեսված տեղերով: Մասնավորապես «Ռադիոֆիզիկա», «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Իրանագիտություն» և «Թյուրքագիտություն» կրթական ծրագրերով ընդհանուր առմամբ ընդունվել է 16 հոգի, ովքեր համալսարանն ավարտելուց հետո պայմանագրային աշխատանքի կանցնեն ՀՀ զինված ուժերում:

2017/2018 ուստարում «Թյուրքագիտություն» կրթական ծրագրով ընդունելություն է կազմակերպվել նաև Ազգային անվտանգության ծառայության համար ՀՀ կառավարության կողմից հատկացված 5 նպատակային տեղերով:

Համալսարանում ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է պրակտիկան, որի արդյունավետ իրականացման համար ավելին քան 100 պայմանագիր է կնքված պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, նախարարությունները, ԶԼՄ խմբագրությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները): Պրակտիկայի վայրերն ընտրվում են աշխատաշուկայի և գործատուների պահանջները հաշվի առնելով, քանի որ պրակտիկան պիտի նպաստի ուսանողի տեսական գիտելիքների գործնական կիրառությանը, նոր կարողությունների ու հմտությունների ձեռքբերմանը, դրանով իսկ նպաստի ուսանողի առավել մրցունակ լինելուն: Իսկ պրակտիկաների անցկացման վայրերը դիտարկվում են նաև որպես պոտենցիալ աշխատատեղեր: Որոշ շրջանավարտներ արդեն աշխատանքի են անցել ՀՀ Ազգային ժողովում, Պաշտպանության նախարարությունում, դպրոցներում, դեղագործական կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում: Առանձին դեպքերում անհատական կարգով պրակտիկաներ են կազմակերպվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող այլ պե-

տությունների առաջատար բուհերում և գիտահետազոտական կենտրոններում: Բացված նոր կրթական ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաների ծրագրերի կազմմանը: Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև անցած տարիների ընթացքում ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները: Նոր կրթական ծրագրերին համապատասխան ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 5190 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա՝ 1180 ուսանող: Դաշտային պրակտիկաներն անցկացվել են ռեկտորատի կողմից հաստատված երթուղիներով:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի «ԳԲՀ ռադիոֆիզիկա» մասնագիտացման ուսանողները արտադրական պրակտիկան անցկացրել են «Նեյշնլ-ինստրումենթս»-ի հայաստանյան մասնաճյուղում: Ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնի ուսանողները արտադրական պրակտիկան անցկացրել են ՀԱԷԿ ՓԲԸ-ում:

Համալսարանականների ուսումնական (դաշտային) պրակտիկան անցկացվել է ԵՊՀ-ի Բյուրականի և Հանքավանի հանգրվաններում (Աշխարհագրության և երկրաբանության, Կենսաբանության ֆակուլտետների ուսանողների համար): Վերոնշյալ ֆակուլտետների, ինչպես նաև Պատմության, Աստվածաբանության ֆակուլտետների և Ֆարմացիայի ինստիտուտի մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-ից 4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով՝ ՀՀ տարածքում: Սոցիոլոգիայի ֆակուլտետի արտադրական պրակտիկան ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ուստարում նույնպես անցկացվել է Շուշիում:

### **3. Ընդունելության նախապատրաստում**

Նկատի ունենալով Հայաստանում դպրոցների շրջանավարտների տարեցտարի նվազող թիվը և մրցակցային միջավայրի ուժեղացող ազդեցությունը՝ ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը շարունակել է հետևողական աշխատանք տանել դպրոցների 2016/2017 ուստարվա ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, իրազեկության մակարդակը

բարձրացնելու և դեպի ԵՊՀ ուղղորդելու ուղղությամբ: Վարչության առջև գերակա խնդիր էր դրված ստեղծել բոլոր անհրաժեշտ նախադրյալները դիմորդների կայուն հոսքը ապահովելու համար՝ հնարավորինս գնահատելով ժողովրդագրական բացասական միտումները և միջավայրային այլ գործոնների ազդեցությունը: Այդ գործոններից են՝

- ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայությունը:
- Հայաստանի Ամերիկյան, Հայ-ռուսական (Սլավոնական), Ֆրանսիական համալսարանների և Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի հետ բակալավրիատի ընդունելության մրցակցային անհավասար պայմանները:

Ստեղծված դժվարությունները հաղթահարելու նպատակով համալսարանը բարձրացրել է մի քանի հարց, որոնք, սակայն, դեռ իրենց լուծումը չեն ստացել: Առաջին՝ ԵՊՀ կազմում հենակետային վարժարան ստեղծելու նպատակով վերջին տարիներին բազմիցս դիմել ենք ԿԳ նախարարին և նրա միջոցով ՀՀ կառավարությանը՝ մեր անմիջական հարևանությամբ գտնվող Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցը հանձնելու համալսարանին: Մենք այսօր էլ համոզված ենք, որ օգտագործելով մեր լաբորատոր բազան, մարզահամալիրը և ապահովելով պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին՝ վարժարանը կդարձնենք հանրապետությունում լավագույններից մեկը՝ դրանով իսկ առավելագույնս նպաստելով նաև ավագ դպրոցի կայացման կարևոր գործին: Այս ամենով հանդերձ՝ Երևանի քաղաքապետարանը նպատակահարմար չի գտնում դպրոցի հանձնումը համալսարանին:

Երկրորդ՝ կրթական համակարգի զարգացումների համատեքստում ԵՊՀ-ն խիստ կարևորում է պետական մասնագիտական քոլեջների սովորողներին որակյալ կրթություն տալու և կրթության շարունակականության լուրջ խնդիրների լուծմանն աջակցելը, որն ուղղված է նաև նրանց կրթամակարդակի բարձրացմանը: Համալսարանն այսօր համագործակցության պայմանագրեր ունի Երևան քաղաքի և ՀՀ մարզերի շուրջ 2 տասնյակ քոլեջների հետ:

Անհերքելի փաստ է դարձել, որ արդի գիտության, տեխնիկայի և պաշտպանության ոլորտներին առնչվող ցանկացած արմատական խնդիր անհնար է լուծել առանց



համակարգչային մեթոդների լայն օգտագործման: Գործընթացները կառավարելու, տվյալները գրանցելու, համակարգելու ու մշակելու եղանակները, ինչպես նաև մոդելավորման օգնությամբ ստացված արդյունքների հավաստիությունը բացահայտելու համակարգչային հնարավորությունները անփոխարինելի են: Դա պահանջում է բարձր մակարդակի մասնագիտական հմտություններ, և պատահական չէ գիտատեխնիկական ոլորտում համապատասխան մասնագետների մեծ պահանջարկը: Այդ նպատակով Երևանի պետական համալսարանում, բացի ավանդական դարձած ծրագրավորողի մասնագիտությունից, վերջին տարիներին հարակից ուղղություններով ձևավորվել են նոր մասնագիտություններ, որոնք շրջանավարտին հնարավորություն կտան համատեղել տեխնիկական և ակադեմիական գիտելիքները: Այդ մասնագիտությունների թվում են՝ հեռահաղորդակցությունը, ազդանշանների թվային մշակումը, պրոցեսների ավտոմատացումն ու մոդելավորումը:

Գտնում ենք, որ նշված ուղղություններով մասնագիտացած երիտասարդ կադրերի որակավորման բարձրացմանը էապես կնպաստեր Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ներառումը ԵՊՀ կազմում՝ ընդլայնելով ուսուցանվող մասնագիտությունների ցանկը և վերանվանելով այն «Տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության քոլեջ»-ի: Ի դեպ, քոլեջը համալսարանի կազմում ներառելու հարցով ԵՊՀ-ն դիմել է ԿԳՆ, և հարցի լուծումը ընթացքի մեջ է:

Երրորդ՝ 1995 թվականից մինչև 2008 թվականը ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետները համալրվում էին նաև հարցազրույցով ընդունելությամբ, ինչն ապահովում էր դիմորդների անհրաժեշտ քանակ: Վերջին տարիներին վերոնշյալ ֆակուլտետներում ընդունելությունն իրականացվում է միայն միասնական քննություններով: Այդ տարիներին դիմորդների թվի անընդհատ նվազումը առաջին հերթին իր բացասական ազդեցությունն ունեցավ վերոնշյալ ֆակուլտետների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնարար գիտությունների զարգացումը և դրա արդյունքների կիրառումը կլիթանի ՀՀ տնտեսությունը, առանց որի անհնար է մեր երկրի հետագա առաջընթացը, բազմիցս դիմել ենք ԿԳ նախարարին՝ բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու խնդրանքով: Այդ առումով նկատի ենք ունեցել նաև այն փաստը, որ այս տարի բակա-

լավրիատի միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններից բացի, ՀՀ կառավարության որոշմամբ, ընդունելության քննություն էին համարվել նաև Արարատյան բակալավրիատի քննությունները:

Առկա դժվարությունները հաշվի առնելով՝ Մինչհամալսարանական կրթության վարչությունը հաշվետու ուստարում զգալի աշխատանք է կատարել ընդունելության գովազդային մարքեթինգային գործընթացները զարգացնելու ուղղությամբ՝ հնարավորինս ներգրավելով համալսարանի ֆակուլտետները և մյուս կառուցվածքային ստորաբաժանումները: Մասնավորապես դպրոցներում և քոլեջներում պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-զրույցներ և քննարկումներ աշակերտների, սովորողների, ուսուցիչների, նաև ծնողների հետ, որոնց ընթացքում նրանց ներկայացվել է ԵՊՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ մատչելի և ամբողջական տեղեկատվություն, մանրամասն պարզաբանվել է բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու և շարունակական կրթության կարգերը: Այս գործընթացին վարչության աշխատակիցների հետ մեկտեղ ակտիվորեն մասնակցել են նաև շատ ֆակուլտետների ղեկաններ և տասնյակ հեղինակավոր ու փորձառու դասախոսներ:

2016/2017 ուստարում ևս հրատարակվել են բակալավրիատի կրթական ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող գովազդային նյութեր՝ «Դիմորդի ուղեցույց-2017» ձեռնարկը (2500 տպաքանակով), ինչպես նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետները (8000 տպաքանակով): Դրանք բոլորն անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին:

Կատարելագործվել է ԵՊՀ պաշտոնական կայքում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ բակալավրիատի ընդունելության կարգը և «Դիմորդի ուղեցույց - 2017» կայքում տեղադրելու միջոցով:

ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող դպրոցների շրջանակն ընդլայնվել է ևս 3-ով: Այսօր արդեն ԵՊՀ-ն համագործակցության պայմանագիր ունի Երևանի 24 և ՀՀ մարզերի 17 ավագ դպրոցների հետ:

Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով համալսարանի ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու համար հաշվետու ուստարում մայրաքաղաքի պայմանագրային ավագ դպրոցներում ԵՊՀ 84 փորձառու

դասախոսներ 29 լրացուցիչ կրթական ծրագրերով հատուկ դասընթացներ են վարել: Իսկ ՀՀ մարզերի շուրջ 2 տասնյակ դպրոցներում համալսարանի դասախոսների կողմից իրականացվել է 118 բովանդակային դասախոսություն՝ հանրակրթական տարբեր առարկաներից:

Միաժամանակ որոշակի աշխատանք է կատարվել նաև հանրապետության 28 հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում, որոնց հետ ԵՊՀ-ն ունի համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր:

Ուշագրավ է նաև, որ շարունակական կրթություն ստանալու նպատակով ԵՊՀ 10 կրթական ծրագրերի գծով 130 հայտ է ներկայացվել, որից շուրջ 100-ը՝ համալսարանի հետ պայմանագիր ունեցող քոլեջներից:

Ընդհանուր առմամբ, 2016/2017 ուստարում ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը ֆակուլտետների դեկանների աջակցությամբ և դասախոսական կազմի մի քանի տասնյակ ակտիվ և նվիրված ներկայացուցիչների ուժերով Երևանի և մարզերի շուրջ 76 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպել է 454 ակնարկային և բովանդակային դասախոսություններ: Վարչությունը նաև 11 ավագ դպրոցների գորակոչային տարիքի տղաների ու նրանց ծնողների հետ կազմակերպել է հանդիպում-գրույցներ, որոնք իրականացրել են Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի լավագույն դասախոսները:

Մեր գիտակրթական օջախի առաքելության, նպատակների, գործունեության արդյունքների, ուսանողական կյանքի և ուսումնառության առկա հնարավորությունների մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշումը դեպի համալսարան՝ հաշվետու ուստարում Երևանի և մարզերի 100-ից ավելի դպրոցների շուրջ 3500 աշակերտների համար կազմակերպվել է «Բաց դռների օր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ:

Վարչությունը դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար 9-րդ տարին անընդմեջ կազմակերպում և անց է կացնում օլիմպիադա՝ հանրակրթական տարբեր առարկաների գծով: Այս տարի երկրորդ անգամ օլիմպիադան անցկացվել է 2 փուլով ԵՊՀ-ում և ՀՀ բոլոր մարզերում: Մասնակիցների թիվը 1-ին փուլում 2283 էր, 2-րդ փուլում՝ 397: Օլիմպիադայի անցկացման գործում մեծ է համապա-

տասխան ֆակուլտետների օլիմպիական հանձնաժողովների (դեկանների գլխավորությամբ) կատարած աշխատանքը: Ինչպես նախորդ տարի, 2017 թ. և օլիմպիադայի 2-րդ փուլում հաղթած և 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների արժանացած 86 աշակերտներ վճարովի համակարգ ընդունվելու դեպքում 1-ին կուրսում կատանան ուսման վարձի գեղ՝ համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոսի չափով: Օլիմպիադան հրաշալի խթան է առավել խելացի երեխաներին հայտնաբերելու և դեպի ԵՊՀ ուղղորդելու: Միաժամանակ դա ապագա դիմորդների համար յուրատեսակ քննություն է մինչև ընդունելության քննությունները:

Օլիմպիադան կազմակերպված անցկացնելու, ինչպես նաև մարզերում դիմորդների հավաքագրման գործում իրենց լուրման ունեն նաև այնտեղ գործող ԵՊՀ ներկայացուցչությունները:

Հաշվի առնելով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի պահանջը՝ վարչությունը ԵՊՀ-ի հետ պայմանագիր ունեցող 17 դպրոցների բնագիտական հոսքերի 10-11-րդ դասարանների 46 աշակերտների համար «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներից 2017 թ. հուլիսին Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում և ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում կազմակերպել է «Ամառային դպրոց», որի դասընթացները բարձր մակարդակով վարել են վերոհիշյալ ֆակուլտետների 13 փորձառու դասախոսներ: Անհրաժեշտ ծախսերի 80 %-ը կամ 4 մլն դրամը տրամադրվել է ԵՊՀ միջոցներից:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունը ձգտել է կատարելագործելու նախապատրաստական դասընթացների համակարգը, ձևավորելու դասընթացների լայն ընտրանի (12 հանրակրթական առարկա)՝ ՀՀ բուհերի ընդունելության պահանջներին նախապես համապատասխանեցված ծրագրերով, ապահովելով դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Նախկինում ԵՊՀ-ում օտարերկրյա քաղաքացիների ուսումնառությունը շարունակելու համար նախապատրաստական դասընթացները կազմակերպվում էին Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում, այնուհետ՝ Միջազգային կրթական կենտրոնում: ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 2015 թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ 2016 թ. սեպտեմբերի 1-ից կենտրոնի գործունեությունը դադարեցվեց, և այդ գործառույթը ԵՊՀ ռեկտորի 2016 թ. սեպտեմբերի 9-ի թիվ 162/109

հրամանով հանձնվեց Մինչհամալսարանական կրթության վարչության նախապատրաստական դասընթացների բաժնին և Միջազգային համագործակցության վարչությանը: Նշված փոփոխությունների հետևանքով համալսարանը զգալի ֆինանսական միջոցներ խնայեց, իսկ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման շնորհիվ Չինաստանի, Թուրքիայի, Հորդանանի, Սիրիայի, Իրանի, Տաջիկստանի և Վրաստանի 18 քաղաքացիներ, հաջողությամբ հանձնելով ավարտական քննությունները, ընդունվեցին ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ, 3-ը՝ ՀՀ պետական այլ բուհեր: Բացի նրանցից՝ նախապատրաստական դասընթացներին, ազատ ունկնդրի կարգավիճակով, մասնակցել են նաև Ֆրանսիայի և Ռուսաստանի քաղաքացիներ: Իսկ նախապատրաստական դասընթացների ՀՀ քաղաքացի ունկնդիրների ավելի քան 90 %-ը վերջին տարիներին ընդունվել է ԵՊՀ և այլ բուհերի առկա և հեռակա բաժիններ:

#### **4. Ընդունելություն**

Ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում ընդունելությունը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկի:

2017/2018 ուստարում ԵՊՀ դիմորդների թիվը առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կազմել է համապատասխանաբար 2791 և 1568:

ԵՊՀ բակալավրիատ ընդունվել է 2602 հոգի (անվճար՝ 420, վճարովի՝ 2182), իսկ մագիստրատուրա՝ 1190 (անվճար՝ 406, վճարովի՝ 784):

Համալսարանի բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 30,6 %: ԵՊՀ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իզական սեռի հաշվեկշիռը կազմել է համապատասխանաբար՝ 66,7 % և 66,5 %:

ԵՊՀ բակալավրիատ դիմել է 43, իսկ մագիստրատուրա՝ 15 օտարերկրյա քաղաքացի: Նրանցից ընդունվել են համապատասխանաբար 35-ը և 13-ը:

2017/2018 ուստարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 479, որից ընդունվել է 298-ը, իսկ մագիստրատուրայում՝ 404, որից ընդունվել է 291-ը:

## 5. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2016/2017 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թվակազմը եղել է 13076, որից 11249-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 9524-ը՝ վճարովի), 1747-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 906-ը՝ վճարովի):

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 3909 ուսանող, որից 3101-ը՝ բակալավրիատում, իսկ 808-ը՝ մագիստրատուրայում:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 344, որից 321-ը՝ առկա, 23-ը՝ հեռակա ուսուցմամբ:

ԵՊՀ հիմնական ուսանողական թվակազմում (16955՝ առանց Իջևանի մասնաճյուղի) մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 15,1 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 2,03 % և 23,2 %:

2016/2017 ուստարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 3278 շրջանավարտ, որից 2603-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 675-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 1246 շրջանավարտ, որից 926-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 320-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 455 (17,5 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 197 (29,2 %): Հեռակա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 12 (1,3 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 17 (5,3 %):

## 6. Ղասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2016/2017 ուսումնական տարում համալսարանի հիմնական ղասախոսական կազմում եղել է 1196 ղասախոս, որից պրոֆեսոր՝ 181 (15,1 %), դոցենտ՝ 476 (39,8 %), ասիստենտ և ղասախոս՝ 537 (44,9 %): Այդ կազմի 71,5 %-ն ունի գիտական աստիճան: Իզական սեռի հիմնական ղասախոսների հաշվեկշիռը կազմել է 57,2 %:

Ինչպես և նախորդ տարիներին, իրականացվել է ԵՊՀ ղասախոսական կազմի երիտասարդացման գործընթաց, մասնավորապես բարձր տարիքի ղասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ ղասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու ուստարում ղասախոսական կազմը համալրվել է 25 նոր ղասախոսներով, որոնցից 2-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից:

Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 179, 35-65 տարեկաններինը՝ 752, իսկ 65-ից բարձր՝ 265:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 2016/2017 ուստարում կազմել է 13,3 (նախորդ ուստարում եղել է 13,6):

## **7. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում**

2017 թ. ապրիլին լրացավ ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության ստեղծման 15-ամյակը, և հաշվետու ժամանակաշրջանը նաև վարչության կատարած աշխատանքների ամփոփման հնարավորություն է ընձեռում:

Երևանի պետական համալսարանում եռաստիճան բարձրագույն կրթությանը զուգահեռ իրականացվում է նաև լրացուցիչ կրթություն՝ ԵՊՀ-ում տեսանելի դարձնելով հարատև կրթության գաղափարը: Մեզանում լրացուցիչ կրթությունն ավանդաբար զարգանում է երկու ուղղությամբ՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ-ում լրացուցիչ կրթության զարգացման առանձնահատկություններն են.

1. Բարձրացվել է լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը, ստեղծվել և մեկ տարի է, ինչ գործում է «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքը:
2. Մասնագիտական լրացուցիչ կրթության ծրագրերը լրամշակվում են և համապատասխանեցվում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին:
3. Զարգանում են ԵՊՀ – գործընկերներ հարաբերությունները:

Առաջին ծրագիրը՝ դասախոսների որակավորման բարձրացումը, ԵՊՀ-ի համար ռազմավարական նպատակ է՝ միտված և՛ կրթության որակի բարելավմանը, և՛ համալսարանական ծրագրերի կադրային ապահովմանը:

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման բազմափուլ գործընթաց: 2011-2016 թթ. իրականացվել է ծրագրի առաջին փուլը:

Հաշվետու ժամանակաշրջանում սկսվել է ծրագրի երկրորդ փուլի իրականացումը: Վերջինիս հիմնարար փաստաթղթերը՝ ծրագիրը և կանոնակարգը, հաստատվել են գիտխորհրդի կողմից: Դրանք ուղղված են մի շարք խնդիրների լուծմանը.

1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը դարձնել շարունակական գործընթաց:
2. Վերացնել առաջին փուլում ի հայտ եկած թերացումները:
3. Հաշվի առնելով փորձագետների ու համալսարանականների առաջարկությունները՝ լավագույնս համադրել ծրագրի պարտադիր ու կամընտրական բաղադրիչների հարաբերակցությունը:

Վերոնշյալ նպատակով բազմազանեցվել է ծրագրի կառուցվածքը, ստեղծվել է ծրագրային հարուստ բազա՝ ունկնդիրներին առաջարկելով շուրջ 500 մասնագիտական և ընդհանուր պատրաստության դասընթացներ:

Ծրագրի շրջանակներում նպատակային դասընթացներ են մշակվել նաև սկսնակ (մինչև 5 տարվա ստաժ ունեցող) դասախոսների համար՝ ուղղված նրանց մանկավարժական և հոգեբանական հմտությունների զարգացմանը:

Ծրագրի մի շարք դրույթներ ուղղված էին ԵՊՀ զարգացման ռազմավարական նպատակների իրականացմանը՝ նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: Արդեն ստեղծվել են 30 հեռավար դասընթացների էլեկտրոնային նյութերը:

Որակավորման բարձրացմանը գուզընթաց ծագում է մի կարևոր հարց ևս՝ դասախոսների ձեռք բերած հմտությունները առավել ակտիվորեն ներառել կրթական գործընթացում:

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի երկրորդ կառուցամասը՝ հետազոտական-ուսումնամեթոդական գործունեությունը, խթանելու նպատակով ավելացվել են վերջինիս բաղադրիչներին տրվող կրեդիտները: Դասախոսների հետազոտական մոտիվացիան խթանող հանգամանք է նաև որակավորման բարձրացման ծրագրի և լրավճարների հատկացման կարգի մի շարք դրույթների փոխհամաձայնացումը: Իսկ ԵՊՀ-ում ներդրված Ինտրանետ համակարգը միասնական և արդյունա-



վետ է դարձրել դասախոսների հետազոտական գործունեության հաշվետվողականության գործընթացը:

Ծրագրի իրականացման 2016/2017 ուստարվա արդյունքները վկայում են, որ ակտիվ է դասախոսական կազմի կեսը. կազմակերպված դասընթացներին մասնակցել է շուրջ 450 դասախոս (մոտ 900-ից):

Լրացուցիչ կրթության երկրորդ ծրագիրը մասնագիտական վերապատրաստումն է՝ երկու ենթածրագրերով: Առաջին ենթածրագրով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է պետական կառույցների՝ ՀՀ ԱԺ և ՀՀ ՊՆ աշխատակիցների, ինչպես նաև ՀՀ քաղձառայողների վերապատրաստում (500 ունկնդիր՝ 9 ծրագրով):

Միաժամանակ թարմացվել են վերապատրաստման դասընթացների ուսումնական պլանները և ծրագրերը: Հարկ է նշել կարևոր մի հանգամանք: ԵՊՀ-ն նշված ծրագրերը մշակում և իրականացնում է պատվիրատուների հետ սերտ համագործակցությամբ: Այսպես, ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ մշակվել է «Ռազմական հոգեբանություն» ծրագիրը, որով վերապատրաստվում են ՀՀ զինված ուժերի սպա-հոգեբանները: ԵՊՀ-ի և Հայոց բանակի համագործակցությունը հարստացավ նորագույն դրսևորումով: Թեմատիկ հազեցվածությամբ ծրագիրն ամփոփվեց համատեղ կոնֆերանսով, որին ակտիվորեն մասնակցել են և՛ ՀՀ ՊՆ ներկայացուցիչները, և՛ ԵՊՀ ու ներգրավված այլ բուհերի դասախոսները: Նախատեսվել է նաև համապատասխան ուսումնական ձեռնարկի հրատարակում:

Մասնագիտական վերապատրաստման երկրորդ ենթածրագիրը բացում է համալսարանի դոսերը ֆիզիկական անձանց առջև, քանզի լրացուցիչ կրթության նպատակներից մեկը հասարակայնության հետ կապերի ապահովումն է: Վերջինիս հիմնական դրսևորումներից մեկը «Գործնական հոգեբանություն» դասընթացն է, որի ունկնդրակազմը վկայում է ծրագրի բազմանպատակայնությունը: Դասընթացին մասնակցում են բժիշկներ՝ հարստացնելու իրենց մասնագիտական գիտելիքները հոգեբանական հմտություններով, ֆիզիկական անձինք, որոնք վերափոխվող հասարակական հարաբերություններում հոգեբանական պաշտպանության կարիք ունեն: Այս ոլորտում ԵՊՀ-ի հարուստ փորձն էր, որ հնարավոր դարձրեց ստանձնել սպա-հոգեբանների վերապատրաստման դժվարին և պատասխանատու գործը:

Լրացուցիչ կրթության համակարգի կատարելագործումը ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կարևոր ուղղություններից է և մշտապես ակնկալում է ֆակուլտետների ու ամբիոնների ակտիվությունը:

## **8. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում**

2016/2017 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (ՏՏԿՀԿ) իրականացրել է լայնածավալ գործունեություն:

Շարունակվել են աշխատանքները կրթական նոր տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Ստացվել է մեկ ԱՄՆ արտոնագիր, և էլեկտրոնային սարքերի ու համակարգերի թեստավորման բնագավառում ԱՄՆ երկու արտոնագրի հայտեր ներկայացվել են տպագրության:

Շարունակվել են աշխատանքները 2015 թ-ին Եվրամիության «ERASMUS+» ծրագրի շրջանակում ստացված դրամաշնորհի «Երկու փուլ պարունակող նորարարական ուսումնական ծրագիր միկրոէլեկտրոնային ճարտարագիտության բնագավառում» (“Development of two cycle innovative curricula in microelectronic engineering” - DOCMEN) ուղղությամբ: Դրա շրջանակներում 2016 թ. սեպտեմբերի 22-ին և 23-ին ԵՊՀ-ում անցկացվել է աշխատանքային խորհրդակցություն (մասնակիցների կողմից արդյունավետ գնահատված) միջազգային կոնսորցիումի բոլոր մասնակից համալսարանների հետ: ՏՏԿՀ կենտրոնում և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում դրամաշնորհի շրջանակներում նախատեսվող դասընթացներն անցկացնելու նպատակով վերանորոգվել և ժամանակակից սարքավորումներով կահավորվել է ընդհանուր լսարան: ՏՏԿՀԿ գիտական ղեկավար Սամվել Շուքուրյանը հրավիրվել է 2018 թ. ապրիլին Իսրայելի Բար-Իլլան համալսարանում և Հոլոն տեխնոլոգիական կենտրոնում վար-

պետության դասեր անցկացնելու: Այցելության ժամանակ նախատեսվում են նաև բանակցություններ համատեղ հետազոտական աշխատանքների և կրթական ծրագրերի մեկնարկի վերաբերյալ:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակի խնդրիներից մեկի շրջանակներում իրականացվել է երկկողմանի կապը ԵՊՀ կրթության ղեկավարման և ՏՏԿՀԿ-ում մշակված ուսուցման ղեկավարման համակարգերի միջև: Այն հնարավորություն է տալիս լավագույնս օգտվել երկու համակարգերի առավելություններից և էապես ավելի արդյունավետ դարձնել դասախոսների կողմից ուսումնական նյութերի և առաջադրանքների տեղադրումը ԵՊՀ կրթության ղեկավարման և ՏՏԿՀԿ-ում մշակված ուսուցման ղեկավարման համակարգերում: Արդեն իսկ տեղադրված նյութերը վկայում են այդ մասին:

Շարունակվում են աշխատանքները ծրագրային գործիքների մշակման ուղղությամբ հեռախոսների, թարլետների և այլ շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար: Շարունակվում են նաև Համացանցային համալսարանի ենթակառուցվածքի միջազգային չափորոշիչներին հարմարեցման գործընթացի իրականացումը, մուլտիմեդիա հարթակի վրա ստեղծված էլեկտրոնային գրքերի շարքի մշակումը:

Հայկական համացանցային համալսարանի և Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ շարունակում են իրականացվել միջին մակարդակի շախմատի ռազմավարության էլեկտրոնային անիմացիոն առցանց դասընթացի հերթական մասերը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված դասագրքերի հիման վրա:

## **9. Պլանավորում և կառավարում**

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրն իրականացվում է համաձայն հաստատված ժամանակացույց-պլանի: Ծրագրի իրականացման ընթացքում պարբերաբար անցկացվող մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների հիման վրա կատարվել է հաշվետու ուստարվա համար նախատեսված գործողությունների իրականացման գնահատում: Վերջինիս համապատասխան՝ կազմվել և հրատարակվել է կատարողականի վերաբերյալ զեկույց:

Ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրել համալսարանի գործունեության տարբեր ոլորտների հաջողությունները և բացահայտել թերացումները:

Լրամշակվել և հաշվետու ուստարում հրատարակվել են «Երևանի պետական համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (2010-2015 թթ.)» փաստաթղթի հայերեն և անգլերեն տարբերակները, որոնք ներառում են նշված ժամանակահատվածի ԵՊՀ գործունեության հիմնական վեց ոլորտների ԳԱՑ-երը: Դրանք վեր են հանում ԵՊՀ ձեռքբերումները և բարելավման կարիք ունեցող կողմերը՝ համալսարանի հետագա գործունեությունը ավելի նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու համար:

\* \* \*

2016/2017 ուստարում ԵՊՀ իրականացրած կրթական գործունեությունը ընդհանուր առմամբ եղել է արդյունավետ. արձանագրվել են որոշակի ձեռքբերումներ, հաջողությամբ իրականացվել է նախատեսված գործընթացների մեծամասնությունը: Այդուհանդերձ, եղել են նաև բացթողումներ ու թերացումներ: Մասնավորապես՝

- Նկատելի են թերացումները որակի ներքին մշակույթի ձևավորման գործում՝ պայմանավորված ՈԱ գործընթացներում ֆակուլտետների և ամբիոնների ներգրավվածության ցածր մակարդակով:
- Մի շարք գործընթացներում դեռևս ամբողջովին չի իրականացվում որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում շրջափուլը, քանի որ նոր մշակված կամ լրամշակված կրթական ծրագրերի իրականացման շրջափուլը դեռ ավարտված չէ:
- Որակի ապահովման ոչ բոլոր ընթացակարգերն են լիովին գործում, մասնավորապես ուսանողների գնահատման, ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ոլորտներում:
- Դեռևս չեն գործում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական գնահատման գործընթացները:
- Օրակարգային խնդիր է մնում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:

- Առաջնային է նաև դասախոսական կազմի բավարար վարձատրության հարցը, քանի որ այն դեռևս չի հասել ցանկալի մակարդակին՝ պայմանավորված ցածր պետական ֆինանսավորմամբ և ուսման ցածր վարձաչափերով:
- Բարելավման և ակտիվացման կարիք ունեն ԵՊՀ կարևորագույն արտաքին շահակիցներին՝ շրջանավարտներին, հիմնական գործատու կազմակերպություններին և աշխատաշուկայի ներկայացուցիչներին կրթական ծրագրերի մասնագիտական փորձաքննության գործընթացներում ներգրավելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:
- Դասավանդման նորարարական և տեխնոլոգիապես ուժեղացված մեթոդների ներդրումը համալսարանի պրակտիկայում դեռևս մնում է կարևորագույն խնդիրներից մեկը:

## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2016/2017 ուստարում ԵՊՀ-ն արդյունավետ գիտահետազոտական գործունեություն է ծավալել հիմնականում հետևյալ ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրեր: Բազային ծրագրերի ոլորտում ԵՊՀ-ում ստեղծվել է 2 նոր գիտահետազոտական լաբորատորիա: Մի շարք համալսարանականներ ընգրկվել են գիտական նոր ծրագրերում և դրամաշնորհներում: Հաշվետու ժամանակաշրջանում գիտահետազոտական գործունեություն է իրականացվել Հայագիտության հետազոտությունների ինստիտուտում, Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտում, Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում, 28 գիտահետազոտական կենտրոններում և լաբորատորիաներում: 2016/2017 ուստարում ԵՊՀ-ում իրականացված գիտական գործունեության արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 1636 հոդվածներում, 74 մենագրություններում: Համալսարանականների կողմից ավելի քան 218 թեզիս է ներկայացվել նաև տեղական և միջազգային գիտաժողովներին:

Հաշվետու ժամանակաշրջանում գիտության բնագավառում ակնառու ձեռքբերումների համար մի շարք համալսարանականներ արժանացել են պարգևների և պատվավոր կոչումների: Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահադորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Կարեն Ղամբարյանը նանտեխնոլոգիաների, նանոէլեկտրոնիկայի, կիսահադորդչային նյութագիտության ուսումնասիրության ոլորտում ունեցած մեծ ավանդի համար Ստոկհոլմում Առաջատար նյութերի միջազգային միության կողմից պարգևատրվել է ոսկե մեդալով: Հայ բանասիրության ֆակուլտետի գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժենյա Քալանթարյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ Նախագահի կրթական պարգևների են արժանացել նաև մի շարք համալսարանականներ: Այսպես, «Լավագույն բակալավր» անվանակարգում 1-ին կարգ է շնորհվել Ալբերտ Սահակյանին (Ինֆորմա-

տիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ), 2-րդ կարգ՝ Մհեր Դավթյանին և Մանե Ավետիսյանին (Ֆիզիկայի ֆակուլտետ): «Լավագույն մագիստրանտ» անվանակարգում 1-ին կարգ շնորհվել է Վարդան Ալոյանին (Ֆիզիկայի ֆակուլտետ), «Լավագույն ասպիրանտ» անվանակարգում 2-րդ կարգ՝ Մուսաննա Գագինյանին (Ֆիզիկայի ֆակուլտետ) և Տիգրան Հախվերդյանին (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ): «Լավագույն սփյուռքահայ ուսանող» անվանակարգում 2-րդ կարգի արժանացել է Ակոպ Կիրակոսյանը (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ): Վերջին 5 տարում առաջին անգամ ՏՏ ոլորտում շնորհվել է նաև հեղինակավոր «Գրան-պրի» մրցանակը, որին արժանացել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Թորգոմ Եզեկյանը:

2016/2017 ուստարում ԵՊՀ-ում շարունակվել են ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորվող 2, «Հորիզոն 2020»-ի շրջանակներում՝ 2, CRDF՝ 1, ԵԱՀԿ-ի կողմից՝ 1 գիտական ծրագրերը: Դրանք են՝

- Խմբակային գրգռումները հեռանկարային նանոկառուցվածքներում (նախագիծն իրականացվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Կրյուչկյան Գ. Յու. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Ծովային, քաղցրահամ և երկրաջերմային ջրային էկոհամակարգերում ֆագով պայմանավորված հակաբիոտիկների նկատմամբ կայուն գեների տեղափոխումը (ծրագիրը ֆինանսավորվում է CRDF-ի կողմից): Ղեկավար՝ Փանոսյան Հ. Հ. (Կենսաբանության ֆակուլտետ)
- Դեղանյութերի առաքման հիբրիդային համակարգեր՝ հիմնված մեզոպորային նյութերի, վիրոսոմների վրա (նախագիծն իրականացվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Առաքելյան Վ. Բ. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Պինդմարմնային գազային սենսորներ անվտանգության համար և ռազմական սպառնալիքների դեմ (ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորված ծրագիր): Ղեկավար՝ Հարությունյան Վ. Մ. (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
- Բիոսենսորների նախագծում ածխածնային նանո խողովակների օգտագործման միջոցով (ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորված ծրագիր): Ղեկավար՝ Մամասախլիսով Ե. Շ. (Ֆիզիկայի ֆակուլտետ)

- Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում (ԵԱՀԿ նախագիծ): Ղեկավար՝ Մովսեսյան Ռ. Ս. (Կայուն զարգացման կենտրոն)

Հաշվետու ուսումնական տարվանից ԵՊՀ-ում գործում է Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնը՝ իր 3 լաբորատորիաներով, որոնց նպատակն է հնարավորություն տալ և ուղղորդել ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքները: Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցության միջոցով ստեղծվել է Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարական կենտրոն: Կենտրոնը ներառում է ինչպես կրթական, այնպես էլ գիտահետազոտական բաղադրիչ: Այն գտնվում է վերջնական կահավորման փուլում:

Դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական, հայ-ռուսական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի շրջանակներում ստացված արդյունքների գիտական ու գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը գնահատելու համար գիտական փորձաքննության են ներկայացվել վերջիններիս հաշվետվությունները: ԵՊՀ-ում 2016/2017 ուսումնական տարում շարունակվել են 48 թեմատիկ և 1 նպատակային դրամաշնորհային ծրագրեր, 8 հայ-ռուսական դրամաշնորհային ծրագրեր, որոնցից 6-ը բարեհաջող ավարտվել են: 2017 թվականից գործում են հետևյալ դրամաշնորհային ծրագրերը՝ ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության՝ 10, հայ-ռուսական՝ 5, հայ-բելառուսական՝ 5, թեմատիկ՝ 3: Ընդհանուր առմամբ, վերջին 3 տարվա կտրվածքով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի մոտ 30 %-ը բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին, իսկ բուհերի կողմից մրցութային շեմը հաղթահարած ծրագրերում այդ մասնաբաժինը կազմում է մոտ 55 %: Այժմ ԵՊՀ գիտական ենթակառուցվածքներում աշխատողների թիվը 456 է, որից 346-ը գիտաշխատողներ են, նրանցից 140-ը ընդգրկված են նաև պետական դրամաշնորհային ծրագրերում: Եվս 136 համալսարանական ընդգրկված են պետական դրամաշնորհային ծրագրերում: Գիտական քաղաքականության վարչության կողմից շարունակաբար կազմակերպվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների համար մրցութ-



ներ: Հաշվետու ժամանակաշրջանում վարչության աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում է ստացել 11 արտոնագիր, որից 4-ը՝ ֆիզիկայի բնագավառում, 2-ը՝ երկրաբանության, 5-ը՝ քիմիայի: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

ԵՊՀ ՏՏԿՀ կենտրոնն ակտիվորեն մասնակցել է Երևանում 2016 թ. հոկտեմբերի 14-17-ը կայացած “IEEE EAST-WEST DESIGN & TEST SYMPOSIUM (IEEE EWDTSS-2016)” միջազգային սիմպոզիումի նախապատրաստական աշխատանքներին, որին միաժամանակ մասնակցում էին և՛ Արևմուտքի, և՛ Արևելքի էլեկտրոնային նախագծման և թեստավորման մասնագետները: Աշխարհի առաջատար համալսարաններում և ընկերություններում աշխատող 20-ից ավելի ճանաչված փորձագետներ (ԱՄՆ, Շվեդիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Կանադա, Չինաստան և այլ երկրներ) հանդես եկան զեկույցներով: Սիմպոզիումին մասնակցեցին 30-ից ավելի երկրների ներկայացուցիչներ:

ՏՏԿՀ կենտրոնի աշխատակիցները 2017 թ. 12 զեկույցներով հանդես են եկել 7 միջազգային գիտաժողովներում: Այդ գիտաժողովներից 6-ի աշխատություններն ընդգրկված են Scopus և Web of Science համակարգերում:

Ուրախալի է այն փաստը, որ գնալով ավելանում է միջազգային օլիմպիադաներին, ծրագրերին և մրցույթներին ակտիվորեն մասնակցող մեր ուսանողների թիվը, աճում է նրանց հետաքրքրությունը գիտահետազոտական աշխատանքի նկատմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում ևս նրանցից շատերը լուրջ հաջողություններ են գրանցել՝ միջազգային հարթակներում բարձր պահելով ԵՊՀ վարկանիշը: Մասնավորապես 2017 թ. մայիսի 20-25-ը ԱՄՆ-ում կայացած «ACM-ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլին առաջին անգամ մասնակցել է նաև Հայաստանը: Իսկապես հպարտություն է ներշնչում այն, որ միջազգային այդ հեղինակավոր մրցույթում, որին մասնակցում էին աշխարհի առաջատար համալսարանների 133 թիմեր, մեր երկիրը ներկայացրել է ԵՊՀ թիմը: Նման մրցույթի մասնակցելը արդեն իսկ հաջողություն է: ԵՊՀ թիմը ներկայացրել են Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողներ Ալբերտ Սահակյանը, Հրայր Հարությունյանը և Տիգրան Մամիկոնյանը:

ԵՊՀ ուսանողական մեկ այլ թիմ մասնակցել է 2017 թ. հուլիսի 31-ից օգոստոսի 6-ը Բուլղարիայում կայացած մաթեմատիկայի միջազգային ուսանողական օլիմպիադային՝ գրանցելով լավագույն արդյունք՝ երկու ոսկե և երկու արծաթե մեդալ: Միջազգային այս խոշոր ստուգատեսին մասնակցել են աշխարհի 71 հայտնի բուհերի թիմեր: ԵՊՀ թիմը ներկայացրել են Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ուսանողներ Ալբերտ Գևորգյանը, Վազգեն Միքայելյանը (ոսկե մեդալ), Ավետիք Կարագուլյանը և Գևորգ Մնացականյանը (արծաթե մեդալ): Թիմային հաշվարկով ԵՊՀ թիմը գրավել է 7-րդ տեղը (նախորդ տարի՝ 15-րդը): Միջազգային ուսանողական օլիմպիադայի մեր թիմը արդեն 5-րդ տարին ղեկավարել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դասախոս Կարեն Քեոյանը:

Հաշվետու ուստարում Գիտական քաղաքականության վարչության կողմից մշակվել է ԵՊՀ միասնական հաշվետվողական համակարգի գիտությանն առնչվող հատվածը, որը գործում է [www.intranet.yasu.am](http://www.intranet.yasu.am) հաշվետվողականության ընդհանուր համակարգում: Համակարգը միտված է դյուրացնելու բոլոր այն գործընթացները, որոնք առնչվում են ԵՊՀ աշխատողի գիտակրթական գործունեության հաշվետվությանը, և արդյունավետ համակարգելու այդ հաշվետվության վրա հիմնված այլ գործառույթներ: Մասնավորապես, համաձայն ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի՝ [www.intranet.yasu.am](http://www.intranet.yasu.am) հաշվետվողականության համակարգի միջոցով է իրականացվելու նաև ԵՊՀ աշխատողներին նշված լրավճարների հատկացումը: Համակարգի շրջանակներում վարչության աշխատողները ստուգում են ԵՊՀ աշխատողների կողմից համակարգ ներբեռնված գիտական գործունեությանն առնչվող աշխատությունների մասին համապատասխան տեղեկատվությունը: Կատարվում է համակարգ մուտքագրված գիտական պարբերականների և ժողովածուների դասակարգում՝ ըստ ազդեցության գործակցով ամսագրերի, համաձայն Clarivate Analytics գործակալության ամենամյա Journal Citation Reports (JCR) զեկուցման մեջ ամփոփված ազդեցության գործակցով պարբերականների ցանկի, և ըստ «Web of Science» ու «Scopus» միջազգային գիտական շտեմարանների:

ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության կողմից իրականացվում է նաև որոշ գիտաժողովների մշտադիտարկում՝ համաձայն ԵՊՀ կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված և իրականացված գիտական միջոցառումներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ «Անվտանգության հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում» խորագրով միջազգային գիտաժողով (սեպտեմբերի 29 - հոկտեմբերի 2, 2016), «Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները» խորագրով գիտաժողով (13 ապրիլի, 2017) «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր-5» երիտասարդ գիտնականների 5-րդ միջազգային գիտաժողով (18-21 մայիսի, 2017 թ.), «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով երիտասարդ գիտնականների դպրոց (15 հունիսի, 2017), «Կիսահաղորդչային միկրո- և նանոէլեկտրոնիկա» XI միջազգային գիտաժողով (23-25 հունիսի, 2017 թ.), «Սուպերսիմետրիան ինտեգրվող համակարգերում» միջազգային գիտաժողով (09-15 հուլիսի, 2017 թ.), «Սիմետրիայի մեթոդները ֆիզիկայում» XVII միջազգային գիտաժողով (09-15 հուլիսի, 2017 թ.), երիտասարդ գիտնականների V միջազգային դպրոց՝ «Ինտեգրվող համակարգերի սիմետրիաներ և միջուկային ֆիզիկա» (16-22 հուլիսի, 2017), Վերլուծական փիլիսոփայության 4-րդ ամենամյա երիտասարդ գիտնականների դպրոց ( հուլիսի 31-օգոստոսի 11, 2017):

2016/2017 ուստարում գիտական քաղաքականության վարչության կողմից շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

\* \* \*

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀԻ) հաշվետու ժամանակահատվածում շարունակել է ակտիվ գործունեությունը գիտակրթական ոլորտում:

Ինստիտուտը 2017 թ. ընթացքում հրատարակել է 6 մենագրություն, 22 գիտական հոդված, 6 զեկուցումների թեզիս, 1 ատլաս և 30 քարտեզ: Միաժամանակ արդեն հրատարակության են ներկայացվել մենագրություններ և հոդվածներ: Ինստիտուտի գիտաշխատողները մասնակցել են հանրապետական և միջազգային՝ հայագիտական ուղղվածության բազմաթիվ գիտաժողովների, կլոր սեղանների:

Հաշվետու ժամանակահատվածում համալրվել են ինստիտուտի հայագիտական կայքերը. armin.am և 7 թեմատիկ՝ armenianarchaeology.am, armeniaculture.am, armeniandiaspora.am, historyofarmenia.am, armenianlanguage.am, armeniansgenocide.am, armenianreligion.am կայքերում ընդհանուր առմամբ արդեն իսկ առկա են շուրջ 1300 գիրք, 740 գիտական հոդված, 3300 գիտահանրամատչելի հանրագիտարանային հոդված, 360 քարտեզ, ինչպես նաև, որպես օժանդակ միջոց ծառայող, լուսանկարներ (2729) ու տեսանյութեր (66):

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը համալսարանական և արտահամալսարանական կամավորների հետ վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնին կից շարունակում է իրականացնել «Հայ ազգ» էլեկտրոնային հանրագիտարանի հայերեն տարբերակի խմբագրությունը (<http://am.hayazg.info>): Հոդվածների թիվն արդեն գերազանցում է 3600-ը: 2017 թվականի մարտի սկզբից գործարկվել է հանրագիտարանի անգլերեն տարբերակը (շուրջ 350 հոդված):

2013 թվականից հաջողությամբ իրականացվող «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը շարունակում է համալրվել նոր ուսանողներով: Ծրագիրն ունի 11 ուսանող և արդեն տվել է 20 շրջանավարտ, որից 3-ը ասպիրանտ են, իսկ 5-ը աշխատում են ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Ինստիտուտը ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի հետ համատեղ շարունակում է իրականացնել «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որում ներգրավված ուսանողների ուսման վարձը տրվում է Համազգային հայ կրթական և մշակութային միության կողմից: Ծրագրի նպատակն է սփյուռքի հայկական կրթօջախների համար պատրաստել հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության ուսուցիչներ: «Հայագիտություն» մագիստրոսական ծրագրով այժմ սովորում են 10 ուսանող, 8-ը ավարտել են, իսկ 2-ն արդեն աշխատում են Լիբանանի և Կիպրոսի հայկական դպրոցներում:

Կրթական դաշտում հետզհետե տարածում գտնող հեռաուսուցման համակարգերը ևս ինստիտուտի ուշադրության կենտրոնում են: Հաշվետու ժամանակահատվածում հաջողությամբ իրականացվում է ՀՀԻ «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման եռամսյա ծրագիրը: Որպես հիմնական լսարան դիտարկելով սփյուռքը՝ 2017 թվականի դրությամբ հեռաուսուցման ծրագիրն անցել է 17 ուսանող Սիրիա-

յից, Ռուսաստանից և Բուլղարիայից, իսկ ընդհանուր առմամբ՝ 47 ուսանող: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում ուսանողների թիվն ու աշխարհագրությունը ընդլայնելու, ինչպես նաև նոր ծրագրեր մշակելու և գոյություն ունեցող ծրագիրը հայերենից մի շարք օտար լեզուների վերածելու ուղղությամբ: Պատրաստվել է նաև «Ցեղասպանագիտություն» հեռուսուցման ծրագիրը, որը առաջիկայում կներկայացվի թիրախային լսարանին:

\* \* \*

Բարձր որակավորման գիտական կադրերի պատրաստումը ԵՊՀ գիտական գործունեության կարևոր բաղադրիչներից է: Նկատի ունենալով այն փաստը, որ գիտության երիտասարդացումը դեռևս լուրջ հիմնախնդիր է, համալսարանում կարևորվում է ասպիրանտական ուսումնառությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում գիտական երիտասարդ ներուժի արդյունավետ օգտագործմանը, գիտական աշխատանքներում ասպիրանտների, հայցորդների և մագիստրոսների ակտիվ ներգրավմանը: Կարևորվում է նաև ուսումնական գործընթացներում (դասախոսական աշխատանքում) ասպիրանտների հավուր պատշաճի ընդգրկվածությունը, ինչը նախատեսված է նաև ասպիրանտական պլանով և անչափ կարևոր է սահուն սերնդափոխությունն ապահովելու առումով: Ներկայումս ԵՊՀ ասպիրանտների ընդհանուր թիվը 384 է (95-ը՝ առկա ուսուցմամբ, 289-ը՝ հեռակա):

Հաշվետու ժամանակահատվածում առկա ուսուցմամբ ասպիրանտուրան ավարտել է 35 հոգի, հեռակա ուսուցմամբ՝ 91:

Ուստարվա ընթացքում կազմակերպվել են որակավորման քննությունների՝ գարնանային և աշնանային քննաշրջաններ: Քննությունները հաջողությամբ հանձնել են 49 ասպիրանտ և 34 հայցորդ: Ուսումնական երկու կիսամյակներում էլ կազմակերպվել են 10 առարկայից դասընթացներ՝ կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան:

\* \* \*

Չնայած ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ոլորտում վերոհիշյալ ձեռքբերումներին և հաջողություններին՝ անցած ուստարում եղել են նաև որոշակի բացթողումներ: Մասնավորապես՝

- Ֆինանսական սղության պատճառով ընկել է գիտահետազոտական լաբորատորիաների վերազինման տեմպը:
- Ակտիվ գիտական գործունեությամբ զբաղվող գիտաշխատողների մեջ 35-55 տարեկան գիտաշխատողների թիվը փոքր մաս է կազմում:
- Ստացված գիտահետազոտական արդյունքները, որոնք երբեմն ունենում են կիրառական նշանակություն, չեն վերածվում ներդրման պատրաստ տեխնոլոգիաների:
- Գիտության ոլորտում աշխատավարձերի ցածր մակարդակի պատճառով հնարավոր չի լինում հեռանկարային երիտասարդ մասնագետներին պահել համալսարանում:
- Թեև հաշվետու ժամանակահատվածում գիտահետազոտական ծրագրերում ընդգրկված դասախոսների և ուսանողների թիվն աճել է, սակայն ընդհանուր առմամբ այդ ցուցանիշը միջինում գրեթե նույնն է մնում: Բացի դրանից՝ ցածր է գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրոսների ընդգրկվածությունը:
- Չափազանց բարձր է առաջատար և ավագ գիտաշխատողների միջին տարիքը:

## ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հաշվետու ուստարում գրադարանում տարվել են նպատակային աշխատանքներ՝ ուղղված ժամանակակիցն ու ավանդականն արդյունավետորեն համակցող գրադարանային համակարգի զարգացմանը:

Գիտատեխնիկական առաջընթացի արդի պայմաններում գրադարանային գործում անխուսափելի են առաջին հայացքից փակուղի տանող մի շարք բարդություններ, որոնք պայմանավորված են ինչպես տպագիր արտադրանքի, այնպես էլ վիրտուալ տեղեկույթի անվերահսկելի աճով, գրականության շուկայական գների բարձրացմամբ, համալրմանն անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղությամբ: Նման իրավիճակում հատուկ ռազմավարություն է պահանջվում ապահովելու մի կողմից կրթական հաստատությանն անհրաժեշտ և, մյուս կողմից, բազմաշերտ ընթերցողական պահանջմունքները բավարարող տպագիր և էլեկտրոնային նյութերի ճիշտ ընտրությունը, դրանց մշակման ու համակարգման, ավանդական սպասարկման և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ նորատիպ ծառայությունների օպտիմալ միջոցներն ու եղանակները:

Անշուշտ, այս գործընթացում էականորեն կարևորվում է ֆոնդերի նպատակային համալրումը: Հաշվետու շրջանում գրադարանը համալրվել է 584 անուն 12.570 միավոր գրականությամբ, որի կազմում մտնում են բազմալեզու և բազմաբովանդակ գրքեր, ատենախոսություններ, ամսագրեր և թերթեր: Նշված գրապաշարից 8.354 միավորը գիտական է, 4.173-ը՝ ուսումնական: Պետք է նկատել, որ անցած տարվա ցուցանիշների համեմատ գրանցվել է գիտականի համալրման կրկնակի աճ և ուսումնականի եռակի նվազում: Նման պատկերն առաջին հայացքից մտահոգիչ է թվում, քանի որ կրթական հաստատության գրադարանի կարևորագույն գործառույթներից մեկն էլ ուսումնական գործընթացին անհրաժեշտ գրականությամբ օժանդակելն է: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվային գրադարանի համալրման գործընթացում առաջնությունը միշտ տրվել է ուսումնական գրականությանը, և հետևաբար տարեցտարի ավելացել է դասագրքերի ու ծրագրային այլ ձեռնարկների էլեկտրոնային տարբերակների ֆոնդը, կարող ենք անտեսել դրանց թղթային տարբե-

րակների համալրման բացը: Մինչդեռ գիտական գրականության համալրման աճը կարող ենք գնահատել որպես դրական տեղաշարժ, քանի որ սակավ են այդ աշխատությունների թվային տարբերակները, և բացի դրանից՝ գիտական նորույթների մասին տեղեկատվության հրատապությունը հայրենական գիտության առաջանցիկ զարգացումը խթանող որոշիչ գործառույթ է:

Գրադարանի գործունեության մնացած բոլոր աշխատափուլերը հանգամանորեն թվարկելն ավելորդ է, քանի որ դրանք շարունակական են, և դրանց մասին բազմիցս խոսվել է: Տեղին է անդրադառնալ միայն գրանցված ցուցանիշներին:

Ուշագրավ է հատկապես գրականության մուտքագրման աճը. գրադարանի ավտոմատացման և այլ բաժինների ջանքերով էլեկտրոնային գրացուցակներ են մուտք գործել 43.750 միավոր գրականության տվյալներ, որով անցած տարվա ցուցանիշները գերազանցվել են շուրջ 3,5 անգամ: Հնատիպ գրականության բաժնում մուտքագրվել և քարտագրվել է արդեն «Գյուրենկյան» ֆոնդի (շուրջ 3.400 միավոր) երկու երրորդը: Նույն բաժնում ավարտին է հասցվել ռուսալեզու ֆոնդի մուտքագրումը՝ էլեկտրոնային քարտարանը հարստացնելով 5.500 միավորից ավելի ռուսերեն հնատիպների տվյալներով, որոնց մեջ կան սակավաթիվ տպաքանակով արժեքավոր հրատարակություններ:

Հաշվետու ժամանակահատվածում աճել են սպասարկման ցուցանիշները. ընթերցողներին սպասարկվել է 913.562 միավոր գրականություն, որը շուրջ 1000-ով անցնում է նախորդ տարվանից: Սպասարկված էլեկտրոնային հոդվածների քանակը ևս զգալիորեն ավելացել է՝ կազմելով 3315 միավոր:

Շարունակվել է նաև մատենագիտական-հրատարակչական գործը. ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի աջակցությամբ գրադարանը պատրաստել և հրատարակության է ներկայացրել «Լյուդմիլա Հարությունյանի կենսամատենագիտությունը»:

Հայրենական և արտերկրի գրադարանների ու կազմակերպությունների հետ համագործակցական կապերի շնորհիվ գրադարանային տարածքում շարունակվել է գործել Արժույթի միջազգային հիմնադրամի էլեկտրոնային գրադարանը, որը ընթերցողին անվճար տրամադրել է համաշխարհային տնտեսության վերաբերյալ հրատարակված 14.000 նյութերի հավաքածուն: Գրադարանից օգտվողներին անվճար հասանելի են դարձել նաև ռուսական գիտատեղեկատվական ցանցի ռուսալեզու պար-



բերականների էլեկտրոնային տարբերակները՝ ավելի քան 3.944 անուն թվային ռեսուրսներով:

Համագործակցության շրջանակում ԵՊՀ գրադարանը հայրենական և արցախյան մի շարք գրադարանների ու կազմակերպությունների նվիրաբերել է շուրջ 2.500 միավոր գրականություն: Գրադարանի աշխատակիցները մասնակցել են հայրենական և արտասահմանյան կազմակերպությունների կողմից հրավիրված միջոցառումների, խորհրդակցությունների և գիտաժողովների:

# ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## ԵՊՀ հրատարակչություն

ԵՊՀ հրատարակչությունը հաշվետու ժամանակաշրջանում հրատարակել է գիտակրթական լայն ընդգրկում ունեցող 97 անուն գիրք և 60 համար պարբերական:

Հրատարակվել են մի շարք բուհական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, բառարաններ, մենագրություններ և այլ ակադեմիական գրականություն:

Հատկանշական են Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերը, որոնցից կարելի է առանձնացնել հայագետ, թարգմանիչ Դորա Սաքայանի «Նրանց քշում են անպատները...» գիրքը, որը հասցեագրված է ցեղասպանագետներին և կարող է կարևոր դեր կատարել ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում, ինչպես նաև Ռ. Մելքոնյանի և Ն. Պողոսյանի «Հայկական թեմատիկական ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին - XXI դ. սկզբին)» գրքերը, Հ. Բայրամյանի «Հայոց ցեղասպանության թեման վրացական պարբերականներում 1914-1918 թթ.» արխիվային նյութերի ժողովածուն, «Հայոց ցեղասպանության ասուլսար» (անգլերեն՝ խմբագրությամբ Ա. Սիմոնյանի) և այլ հրատարակություններ:

Կարևոր են նաև Էդիկ Մինասյանի «Հայ հերոսուհի կանայք», Էդիկ Մինասյանի և Տաթևիկ Մինասյանի «Հայ կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հերոսամարտերի տարիներին» գրքերը: Երկու գրքերն էլ շուրջ հինգ տարվա ուսումնասիրության արդյունք են: Հեղինակներն ուսումնասիրել են արխիվային փաստաթղթեր, հուշեր և այլն, ինչպես նաև հայ հերոսուհի կանանց պատմությունները, ովքեր մասնակցել են Սասունի ապստամբությանը, թաթարական ընդհարումներին և ազատագրական պայքարի գրեթե բոլոր փուլերին: Գրքերում շեշտը դրվել է Հայոց ցեղասպանության ժամանակ ինքնապաշտպանական հերոսամարտերին (Մուսա լեռ, Ուրֆա, Տրապիզոն), ինչպես նաև Հայրենական և Արցախյան պատերազմներին մասնակցած կանանց վրա:

Հրատարակվել է Թերեզա Ամրյանի «Եզդիների կրոնական աշխարհայացքը» մենագրությունը, որը նվիրված է եզդիների կրոնական կենտրոնի՝ Հյուսիսային Իրաքի և եզդիական մեկ այլ խոշոր համայնքի ներկայացուցիչների՝ Հայաստանի եզդիների կրոնական հավատալիքների, ավանդույթների և սովորույթների քննությանը:

Պետք է առանձնացնել նաև Արման Եղիազարյանի «Աբաս Բագրատունի: Թագավոր հայոց» գիրքը՝ նվիրված Բագրատունյաց թագավորությանը, Դ. Սաֆարյանի, Գ. Մելիքյանի, Վ. Ոսկանյանի, Ալ. Սաֆարյանի համահեղինակությամբ «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում», ինչպես նաև Ժ. Քալանթարյանի «Քննադատությունն՝ իբրև գործնական գրականագիտություն», Փ. Մեյթիխանյանի «Աստվածաշնչի հատկանվանագիտություն», Հ. Ավանեսյանի «Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը» գրքերը:

Հսկայածավալ աշխատանք է իրականացվել նոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման, ինչպես նաև մի շարք արժեքավոր գրքերի վերահրատարակման ուղղությամբ: Հատկանշական են Յու. Ավետիսյանի, Լ. Ավետիսյանի, Լ. Սարգսյանի, Ռ. Սաղաթեյանի «Հայոց լեզու և խոսքի մշակույթ: Գործնական աշխատանքների ձեռնարկ հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար», Ա. Աբաջյանի, Ն. Դիլբարյանի, Ա. Յուզբաշյանի «Հայոց լեզվի պատմություն», Հ. Բայրամյանի «Վրացերենի դասընթաց (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն)», Լ. Գալստյանի «Բարձրագույն մաթեմատիկա. Մաս II. մեկ փոփոխականի դիֆերենցիալ հաշիվ», բուհական դասագրքերը, ինչպես նաև Ա. Աղաջանյանի, Ա. Թռչունյանի «Բույսերի կենսաքիմիա», Ա. Կիրակոսյանի, Ա. Վարդանյանի, Ա. Ասատրյանի, Ա. Մանասեյանի, Գ. Վերմիշյանի «Պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատոր աշխատանքներ. մաս 1», Ա. Չուբարյանի, Հ. Մովսեսյանի, Ս. Սայադյանի «Հաշվարկելիության բարդության տեսության հիմնադրույթները» ուսումնական ձեռնարկները և Հ. Խաչատրյանի, Տ. Ղոչիկյանի, Ռ. Հարությունյանի «Ընդհանուր քիմիական տեխնոլոգիա» լաբորատոր աշխատանքների ձեռնարկը:

Նշենք նաև, որ 2017 թ. մայիսի 16-ին Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում մեկնարկեց Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի առաջին կոնֆերանս-աշխատաժողովը, որին մասնակցում էր նաև ԵՊՀ հրատարակչությունը: 2017 թ. հոկտեմբերի 3-8-ը ԵՊՀ հրատարակչության տնօրենը Վիեննայի Հայ Առաքելական և կաթոլիկ համայնքներում ներկայացրեց ԵՊՀ-ի վերջին տարիների հրատարակչությունները, իսկ հոկտեմբերի 11-15-ը ԵՊՀ հրատարակչությունը Հայաս-

տանի ազգային տաղավարում ներկայացավ նաև Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին:

ԵՊՀ հրատարակչության կողմից պարբերաբար թարմացվում է նաև <http://publishing.yysu.am/> կայքը, տեղադրվում են ինչպես նոր լույս տեսած, այնպես էլ նախկին տարիներին հրատարակված գրքերը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ հրատարակչությունը, շարունակելով համագործակցությունը ԵՊՀ գրադարանի հետ, զբաղվում է հրատարակված գրքերի թվանշանացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքներով:

## ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ

### «Բանբեր Երևանի համալսարանի»

2016 թ. լրացավ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադրման 50-ամյակը: Այս հիշարժան իրադարձությունը նշվեց ընթացիկ տարվա փետրվարին ԵՊՀ գիտխորհրդի նիստում, ԵՊՀ ռեկտորի և այլ պատասխանատուների կողմից արժևորվեց հանդեսի՝ գիտական բարձր չափանիշներին համապատասխան գործունեությունը: Միջոցառումը լուսաբանվեց նաև մամուլում:

2016-2017 թթ. հաշվետու ժամանակաշրջանում լույս են տեսել՝

«Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն»

հանդեսների երեքական համարներ:

2016 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր լույս են տեսել հանդեսների երրորդ համարները: 2017 թ. հունվարից մինչև սեպտեմբեր հրատարակվել են առաջին և երկրորդ համարները:

Հանդեսների յուրաքանչյուր համարը լույս է տեսել 5 մամուլ ծավալով, 100 օրինակ տպաքանակով՝ բացառությամբ «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսի, որը լույս է տեսնում 120 օրինակով:

«Բանբերում» հայերենից և ռուսերենից բացի՝ հոդվածներ են տպագրվում նաև անգլերեն, ռուսի յուրաքանչյուր հոդված ունենում է երկու լեզվով ամփոփում:

Հանդեսների հրատարակությանը զուգահեռ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ԵՊՀ կայքում դրանց էլեկտրոնային տարբերակի զետեղման աշխատանքները: Ներկա պահին կայքում տեղադրված են 1987-2017 թթ. լույս տեսած բոլոր համարները:

«Բանբերը» շարունակում է համագործակցել ռուսաստանյան «Էլեկտրոնային գիտական գրադարան» ՍՊԸ-ի հետ՝ փոխանակելով տեղեկատվություն:

### **«Գիտական տեղեկագիր»**

«Գիտական տեղեկագիր» հանդեսի «Բնական գիտություններ» սերիան հրատարակվում է 1967 թ-ից: 2009 թ-ից ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ տեղեկագիրը տրոհվել է 3 հանդեսների:

2016 թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել «Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU), «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ», «Քիմիա, կենսաբանություն» (անգլերեն) և «Երկրաբանություն, աշխարհագրություն» հանդեսների 3-րդ համարները:

2017 թ-ից հանդեսը համարակալվում է նաև հերթական հատորի համարով, արդեն լույս են տեսել բոլոր սերիաների 51-րդ հատորի 1-ին և 2-րդ համարները:

«Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» սերիայի 2016 թ. երրորդ և 2017 թ. առաջին համարները նվիրվել են համապատասխանաբար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի տեսական ֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Է. Վ. Չուբարյանի 80-ամյա և նույն ֆակուլտետի պինդ մարմնի ֆիզիկայի

ամբիոնի երկարամյա վարիչ, պրոֆեսոր Պ. Հ. Բեգիրզանյանի 100-ամյա հոբելյաններին:

Եվս մեկական համար լույս կտեսնի մինչև տարեվերջ:

2017 թ-ին, համաձայն 3 սերիաների խմբագրական կոլեգիաների որոշման, «Գիտական տեղեկագիր» պարբերականի 50-ամյակի կապակցությամբ, կիրառարակվի նաև հանդեսի 1967-2017 թթ. մատենագրությունն առանձին, հատուկ թողարկմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հանդեսի թվայնացման և համացանցում տեղակայման աշխատանքները: Բացի այդ, հանդեսի «Ֆիզիկամաթեմատիկական» սերիայի համար ԵՊՀ կայքէջի հարթակում ստեղծվել է նոր, առանձին կայք, որի բացման աշխատանքները կավարտվեն 2018-ի առաջին եռամսյակում:

2014 թ. մայիսից «Գիտական տեղեկագիր» «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» հանդեսը ներկայացված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրապարակվող հնագույն՝ zbMATH Journal ռեֆերատային հանդեսում:

2015 թ-ից հանդեսը ներկայացվում է ՌԴ ԳԱ Ստեկլովի անվան Մաթեմատիկայի ինստիտուտի “Mathnet.ru” մաթեմատիկական ռեֆերատիվ կայքէջում: Այստեղ թվայնացված և ներկայացված են արդեն 2005–2017 թթ. մաթեմատիկայի, մեխանիկայի, ինֆորմատիկայի և ֆիզիկայի ուղղությամբ բոլոր հոդվածները: Հանդեսը 2016 թվականի կտրվածքով ունի 0.239 հղման գործակից (հրապարակված 67 հոդվածների վրա եղած հղումների քանակով):

Հանդեսն ամբողջովին ներկայացված է Google Scholar գիտական հոդվածների որոնման մասնագիտացված կայքէջում, ինչն էլ ավելի է ընդլայնում հրապարակված գիտական աշխատանքների հասանելիությունը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 304 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Հաշվետու ուստարում համագործակցությունը ակտիվ է եղել նրանցից շուրջ 150-ի հետ:

Շարունակվել է համագործակցությունը Արիզոնայի համալսարանի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ), Կահիրեի համալսարանի (Եգիպտոս), Մոնպելյե-1 և 3 համալսարանների, Պրովանսի համալսարանի (Ֆրանսիա), Մ. Լյութերի անվան Հալլե-Վիտենբերգի համալսարանի (Գերմանիա), Կարլի համալսարանի (Չեխիա) հետ: Այսպես, 2017 թ. ապրիլի 25-ից 29-ը ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, մեկնել է Չեխիա՝ Կարլի համալսարանի ղեկավարության հետ քննարկելու երկկողմ համագործակցության հեռանկարները: 2017 թ. մայիսի 14-ին ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, մեկնել է Ֆրանսիա՝ մասնակցելու ԵՊՀ-ի և Պոլ Վալերի Մոնպելյե-3 համալսարանի միջև համագործակցության 30-ամյակին նվիրված գիտաժողովին: 2017թ. հունիսի 20-ից 24-ը ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, մեկնել է Գերմանիա՝ մասնակցելու Վիտենբերգի և Հալլեի Ֆրիդրիխ համալսարանների միավորման 200-ամյակին նվիրված միջոցառմանը:

Հաջողությամբ իրականացվել են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում (շարունակվել են ծրագրերը միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության բնագավառներում, մեկնարկել է ֆարմացիայի ոլորտում իրականացվող ծրագիրը): Կրկնակի դիպլոմներով ծրագրեր մեկնարկել են «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» համալսարանի հետ, 2 ծրագիր մեկնարկել է Բելգորոդի համալսարանի հետ՝ ֆարմացիայի և կենսաբանության բնագավառներում:

Արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համագործակցության շրջանակում 2016/2017 ուսումնական տարում ԵՊՀ-ն ընդունել է հարյուրից ավելի

արտասահմանցի գործընկեր-մասնագետների, որոնք հանդես են եկել դասախոսություններով և իրականացրել են հետազոտական աշխատանքներ:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 33 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, այդ թվում՝ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի (Մանկտ Պետերբուրգ), Ռուսաստանի կրթության ակադեմիայի կրթության ռազմավարության զարգացման ինստիտուտի, Ռուսաստանի պետական ջրաօդերևութաբանական համալսարանի, Հյուսիսային Կովկասի դաշնային համալսարանի (ՌԴ), Շանհայի նորմալ համալսարանի (Չինաստան), Օսիյեկի համալսարանի (Խորվաթիա), Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի (Մեքսիկա), Վայմարի համալսարանի, Կիրառական գիտությունների Աալենի համալսարանի (Գերմանիա), Արդելմալեկ Էսսաադի համալսարանի (Մարոկո) հետ:

Վերակնքվել են Ժնևի, Լիտվայի մենեջմենթի և տնտեսագիտության, Խարկովի ազգային, Պարմայի, Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկի, Դրեզդենի Կիրառական գիտությունների բողոքական, Հալլե Վիտենբերգի Մարտին Լյութեր, Արիստոտելի համալսարանների, Հոկայդոյի համալսարանի սլավոնական-եվրասիական հետազոտական կենտրոնի հետ կնքված պայմանագրերը:

Հաշվետու ուստարում հստակեցվել է ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը՝ ավելի քան 350 դասընթաց, որն առաջիկայում հասանելի կլինի ԵՊՀ կայքում: Կազմակերպվել են օտարալեզու դասընթացներ Ռուսաստանից, Ղազախստանից, Գերմանիայից, Իտալիայից ժամանած ուսանողների համար:

Ինչպես և նախորդ տարիներին, 2016/2017 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միևնույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:



2016/2017 ուսումնական տարում միջազգային միջոցառումներից առավել ուշագրավ է «ՏԵՄՊՈՒՍ ՊԻԿԱՍԱ» ծրագրի շրջանակում 2017 թ. ապրիլի 19-ին և 20-ին համալսարանում կազմակերպված միջազգայնացման ձեռնարկի շնորհանդեսը, որի շրջանակում ԵՊՀ-ում հյուրընկալվել են արտասահմանցի մոտ 50 գործընկերներ: Ի դեպ, « ՊԻԿԱՍԱ»-ն ԵՊՀ-ի կողմից համակարգվող առաջին «ՏԵՄՊՈՒՍ» ծրագիրն է:

Ուշագրավ է նաև ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի՝ ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ 2017 թ-ին կազմակերպած «Սփյուռք» ամսուային դպրոցը:

Հաշվետու ժամանակահատվածում ERASMUS+ դրամաշնորհային ծրագրի շրջանակում շարունակվել է համագործակցությունը Լիլի, Մոնպելյե-3, Էքս ան Պրովանսի (Ֆրանսիա), Մասսոիկի (Չեխիա), Պավիայի, Լ'Օրիենտալե, Կա Ֆոսկարի, Բոլոնիայի (Իտալիա), Գրանադայի, Կադիսի (Իսպանիա), Լյովենի, Հասսելթի (Բելգիա), Սաարլանդի (Գերմանիա), Յասիի (Ռումինիա), Տեխնոլոգիայի Սիլեսյան, Յագելլոնիայի (Լեհաստան), Զալցբուրգի (Ավստրիա), Վառնայի մենեջմենթի (Բուլղարիա), Միննոյի (Պորտուգալիա), Միջինարևելյան տեխնիկական (Թուրքիա), Տամպերեի (Ֆինլանդիա), Կրակովի Յագելլոնյան, Գլիվիցեի, Սիլեսյան տեխնիկական (Լեհաստան) համալսարանների հետ: Համագործակցության շրջանակներում ընդհանուր առմամբ իրականացվել է 60 ուսանողի, 20 պրոֆեսորադասախոսական կազմի և 11 վարչական կազմի փոխանակում:

2016/2017 ուստարում ԵՊՀ մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Այսպես՝ հաշվետու ուստարում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, ԱՄՆ:

Իրականացվել է 686 անձ/գործուղում. գործուղվել են 249 մասնագետ, 208 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 229 անձ:

2016/2017 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 386 օտարերկրացի ուսանող և ասպիրանտ, այդ թվում՝ ԵՊՀ նախապատրաստական դասընթացներում՝ 29 ուսանող, բակալավրիատում՝ 193 (175-ը՝ վճարովի, 18-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 37 (24-ը՝ վճարովի, 13-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 25 (21-ը՝ վճարովի, 4-ը՝ անվճար հիմունքներով), հեռակա՝ 33 ուսանող (23-ը՝ բակալավրիատ, 10-ը՝ մագիստրատուրա) և 69 ստաժորներ:

2016/2017 ուստարվա ընթացքում հաստատության կողմից հատուցվել են համալսարանի երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և ՀԲԸՄ կողմից փոխհատուցվել է նաև ԵՊՀ-ում սովորող 32 սիրիահայ ուսանողների և մագիստրանտների ուսման վարձերի 70 %-ը:

«Վարդանանց ասպետներ» միության (ԱՄՆ) կողմից 12 ուսանողի տրամադրվել է միանվագ անվանական կրթաթոշակ՝ 3000 ԱՄՆ դոլարի չափով:

Կազմակերպվել է լույս տեսնող և նախկինում հրատարակված գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային, ուսումնական կենտրոններ, ինչպես նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամին (Լիսաբոն)՝ Եվրոպայի հայկական համայնքներում դրանք տարածելու նպատակով: 2016/2017 ուսումնական տարում այդ նպատակով առաքվել է շուրջ 120 կտոր գրականություն:

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

## 1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունն իր աշխատանքներն իրականացրել է Մայր բուհի և հասարակության հետ կապերի ամրապնդման գործընթացի, ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախանշված խնդիրների և գործողությունների համատեքստում:

Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանացել ՀՀ զինված ուժերի կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառումները, ինչպես նաև ԵՊՀ 100-ամյակի նախապատրաստական ծրագրերը: Նշված համատեքստում կազմակերպվել են գիտաժողովներ, մշակութային, ուսանողական միջոցառումներ, Երևանի պետական համալսարանի ռեկտորատը հայտարարել է ԵՊՀ 100-ամյա հոբելյանի առթիվ թողարկվելիք նամականիշի դիզայնի և երիտասարդական երգի մրցույթներ:

Տպագրվել է «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը, որն անվճար բաժանվել է ԵՊՀ աշխատողներին, ուսանողներին և բուհի հետ համագործակցող կազմակերպություններին, Հայաստանում գործող այլ բուհերի: Առավել ակտիվ աշխատանքներ են ընթացել համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման ուղղությամբ. պատրաստվել են համալսարանի մասին պատմող տեսանյութեր, ապահովվել է դրանց տարածումը, ամրապնդվել են զանգվածային լրատվության միջոցների հետ նախկին կապերը:

Վարչությունը ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումներին տրամադրել է մասնագիտական խորհրդատվություն ու աջակցություն համալսարանին վերաբերող, հանրային նշանակություն ունեցող, լայն տարածման ենթակա նյութերի (գրքույկներ, բուկլետներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, օրացույցներ և այլն), ինչպես նաև էլեկտրոնային նյութերի պատրաստման հարցում: Վերատպագրվել է նաև «Հեռախոսահամարների տեղեկատուն», ինչպես նաև թարմացվել է տեղեկատուի էլեկտրոնային տարբերակը և տեղադրվել «phone.ysu.am» ինտերնետային կայքում:

Ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը, հրատարակման է պատրաստվել «2015/2016 ուստարվա գործունեություն»

հաշվետվությունը: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ տարվող աշխատանքները, նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված՝ հասարակայնության հետ կապերին, կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանը, (ԿՍՊ), մարքեթինգային գործընթացին և հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանեցմանն առնչվող դրույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում եղել են Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության, Սոցիոլոգիայի, Ժուռնալիստիկայի, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների ներկայացուցիչները: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում մշակվել է ԵՊՀ հանրային կապերի, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և մարքեթինգային գործունեության հայեցակարգի նախագիծը, որը 2017 թվականին հուլիսի 6-ին ընդունվել է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:

Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն շարունակել է փոխգործակցությունը տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրել է տեղեկատվություն, օպերատիվ արձագանքել է նրանց նախաձեռնություններին:

\* \* \*

Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ներով հրապարակվել և լուսաբանվել են ԵՊՀ-ում կազմակերպվող իրադարձային միջոցառումները, տարբեր հեռուստաընկերություններում պարբերաբար հյուրընկալվել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ովքեր, որպես փորձագետներ, ներկայացրել են իրենց, առանձին դեպքում նաև ԵՊՀ-ի տեսակետները և դիրքորոշումները քննարկվող հարցերի շուրջ: Այս աշխատանքներն իրականացվում են «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթներին համապատասխան: Հետևողական աշխատանք է տարվել նաև ուղեցույցի դրույթների

կիրառման ուղղությամբ: Հաշվետու ուստարվա ընթացքում վարչությունն ստացել է հանրային նշանակության միջոցառման 340 հայտ: 50 մամուլի հաղորդագրություն է ուղարկվել ՋԼՄ-ներին:

Իրականացվել է տպագիր ՋԼՄ-ներում, ինտերնետային կայքերում և հեռուստա-ընկերություններում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 810 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը 2769 է: Հայաստանյան հեռուստաընկերություններով ԵՊՀ-ի վերաբերյալ հեռարձակվել է 115 տեսանյութ: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատին:

ԵՊՀ կենտրոնական և մյուս մասնաշենքերի նախասրահների հեռուստաէկրաններին տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 340 է:

\* \* \*

ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Պորտալում ընդգրկված են ավելի քան 95 կայք ու ենթակայք: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1371 նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 280 հայտարարություն:

Մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու «Facebook» սոցիալական կայքի միջոցով ստացված նամակները: ԵՊՀ պորտալում գործող «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացվել են բազմաբնույթ նամակներ (1481՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն), որոնց, ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների մասնագիտական պարզաբանումներից հետո, հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում կայքի այցելուների թիվը նախորդ ուստարվա համեմատ կրկնապատկվել է՝ հասնելով օրական միջինը 14.400-ի:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լու-

սանկարները, խմբագրվել և ավելացել են մոտ 3282 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 24.658 հրապարակում:

Կայքերի կարևորությունը (տվյալների հավաստի լինելը) ու տարածվածությունը որոշելու համար հաճախ օգտագործվում է Google PageRank-ը, որը չափվում է 0-10 վարկանշավորման սանդղակում: Google PageRank-ի տվյալների համաձայն՝ ԵՊՀ պաշտոնական կայքին տրվել է 7 միավոր, ինչը համարվում է բավականին լավ արդյունք և հայաստանյան բուհական համակարգում ամենաբարձրն է:

Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը և նոր դիզայնով ու հավելումներով համալրված բաժինները.

- Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոն (<http://consteonom.yasu.am/>),
- «Ուրիշը, մերձավորն ու օտարը» միջազգային գիտաժողովի կայք (<http://philconf17.yasu.am/>),
- «Կիսահաղորդչային միկրո- և նանոէլեկտրոնիկա» 11-րդ միջազգային գիտաժողովի (<http://icsmn.yasu.am/>):

Թարմացվել են հետևյալ բաժինները՝ «Առաջին կուրսեցու ուղեցույց», «ԵՊՀ կառուցվածք», «Դիմորդ», «Մասնագիտական խորհուրդներ», «Երևանի համալսարան» ամսաթերթ: Անընդհատ աշխատանք է տարվում «Փաստաթղթեր» կայքում, և ավելացվում են նոր փաստաթղթեր: Փոփոխվել և խմբագրվել են նաև «Ֆակուլտետներ» կայքում մուտքագրված պրոֆեսորադասախոսական կազմի անհատական էջերը և լուսանկարները:

Սոցիալական ցանցերում ակտիվորեն գործարկվել են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ «Facebook»-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել, ԵՊՀ «Facebook»-ի էջի հետևորդների թիվը հասել է 40.050-ին:

2016 թ. հունվարից սկսվել է «[twitter.com/YSU\\_official](https://twitter.com/YSU_official)» սոցիալական կայքի վարումը: Մուտքագրվել է շուրջ 701 նորություն (եռալեզու):

«[issuu.com/ysu.am](http://issuu.com/ysu.am)» կայքում 2017 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 112 էլեկտրոնային հրապարակում է մուտքագրված (ԵՊՀ պաշտոնաթերթը, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հրապարակումները, տարբեր տարեթվերի

ԵՊՀ բուկլետները, ԵՊՀ 90-ամյակի ֆոտոալբոմը և այլն): Այս տիրույթում ԵՊՀ հրապարակումներին հետևում են Հայաստանից, Ավստրալիայից, Գերմանիայից, Հունաստանից, Հոլանդիայից և այլն:

2017 թ. մայիսից սկսել ենք վարել նաև ԵՊՀ «Ինստագրամի»՝ [https://www.instagram.com/ysu\\_yerevan\\_state\\_university/](https://www.instagram.com/ysu_yerevan_state_university/) պաշտոնական էջը, որի հետևորդների թիվը սեպտեմբերի 1-ի դրությամբ հասնում է 270-ի:

ԵՊՀ-ի «Youtube» տիրույթում հաշվետու ուստարում մուտքագրվել է 39 տեսանյութ: Ընդհանուր մուտքագրված տեսանյութերի թիվը հասնում է 202-ի:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթղթեր տեղադրվել են օրական երկու անգամ օպերատիվ կերպով: Տեղադրվել են նաև 2017 թ. առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունվածների ցուցակները: Էլեկտրոնային տարբերակով տեղադրվել է 2016/2017 ուստարվա առկա ուսուցման համակարգ ընդունված դիմորդների շարժը՝ ըստ օրերի: Իրականացված աշխատանքների շնորհիվ էապես ավելացել է այցելուների թիվը ինչպես ԵՊՀ պորտալում, այնպես էլ ԵՊՀ Facebook-յան էջում:

«Վեբոմետրիքս» (Webometrics Ranking of World Unisvesuties) կայքի՝ բուհերի վարկանշավորման սանդղակում 2017 թվականի հուլիսի դրությամբ ԵՊՀ-ն 2651-րդ տեղում է: Մայր բուհը միաժամանակ շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը:

Հաշվետու ժամանակաշրջանում «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակմանը զուգընթաց տպագրվել են նաև ուղեցույցներ, բուկլետ (անզլերեն) ու տեղեկատվական գրքույկներ:

2016/2017 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 10 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 47-57 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 420-450 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանում և այլն): ԵՊՀ պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասարակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճա-

նկար»: Օպերատիվ թարմացվել է նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի կայքը:

Կատարվել է 364 լուսանկարահանում (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 28.600 լուսանկար և շուրջ 50 տեսանկարահանում: Շարունակվել են տեսանյութերի և լուսանկարների թվայնացման և արխիվացման աշխատանքները: Վարչության համապատասխան բաժնի աշխատողները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

\* \* \*

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են որակական թեմատիկ հետազոտություններ՝ ուղղված ուսումնասիրելու տարբեր շահառու խմբերի վերաբերմունքը համալսարանի իմիջին, ԵՊՀ ներքին շահառուների վերաբերմունքը ակադեմիական բարեվարքության ու կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներին և այլն:

Իրականացվում է նաև ԵՊՀ-ին 2016 թ. անդրադարձած թերթերի, թերթերում առկա հոդվածների վերլուծություն: Վերջիններս ի սկզբանե առանձնացվել են իրականացվող ամենօրյա մամուլի մոնիթորինգի արդյունքում: Հետազոտության ընթացքում օգտագործվում են կոնտենտ և բովանդակային վերլուծության մեթոդները:

Շարունակական վերլուծության առարկա են վիրտուալ հարթակում ԵՊՀ-ի ներգրավվածությունն ու ակտիվությունը: Ուսումնասիրվել է ԵՊՀ պաշտոնական էջի «Հարց-պատասխան» բաժինը, որը արտաքին լսարանի հետ հետադարձ կապի ապահովման միջոցներից է: Ուսումնասիրվում են նաև ԵՊՀ-ի «Facebook»-ի, «Twitter»-ի, «Linkedin»-ի և «Youtube»-ի պաշտոնական էջերի այցելությունների դինամիկան, տրվող հարցերի քանակը:

## **2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում**

ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը 2016/2017 ուսումնական տարում շարունակել է իր աշխատանքները, որոնք պայմանականորեն բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի՝



- Տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառույթների իրականացում,
- Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում,
- Ներքին համակարգչային և հեռախոսային ցանցի սպասարկում,
- Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում:

\* \* \*

Տեղեկատվական համակարգերի և համակարգչային տեխնիկայի ոլորտում համապատասխան վարչական գործառույթներն իրականացվել են ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից: Մասնավորապես աշխատանքներ են տարվել ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներով նախատեսված խնդիրների իրագործման, վարչության ամենօրյա աշխատանքների ապահովման հարցերի ուղղությամբ:

Ապահովվել են էլեկտրոնային գույքագրման և վարչական գործառույթների ավտոմատացման համակարգերի բնականոն աշխատանքները, մեկնարկել են աշխատանքներ վարչական գործառույթների ավտոմատացման և ինտրանետ համակարգերի ինտեգրման ուղղությամբ:

\* \* \*

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում վերանորոգվել է (այդ թվում՝ տեխնիկական սպասարկում և կարգաբերում) շուրջ 250 համակարգիչ: Պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության տեսաձայնագրման նպատակով համապատասխան լսարաններում ավելացվել է երկու տեսախցիկ IP, իսկ ընդհանուր առումամբ ապահովվել է 67 տեսախցիկների անխափան աշխատանքը: Վարչությունը համակարգչային տեխնիկայի սպասարկման աշխատանքների շրջանակներում արձագանքել է շուրջ 1700 կանչի՝ առաջացած ծրագրային և տեխնիկական խնդիրները տեղում լուծելու համար:

\* \* \*

Հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները ներհամալսարանական ցանցի ընդլայնման ուղղությամբ. ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր ձեռք բերված, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 150 համակարգիչ): ԵՊՀ ներքին ցանցին միացված ընդհանուր կետերի (սարքերի) թիվը հասել է 2810-ի, իսկ անլար ինտերնետ կապինը (WiFi)՝ 125-ի: Ապահովվել է ԵՊՀ-ում ինտերնետային կապի կայուն թողունակությունը, և միջինը կազմել է 60 Mb/s:

Վերանորոգումից հետո ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնը, քաղաքացիական պաշտպանության ամբիոնը, ԵՊՀ հյուրատունը ամբողջովին միացվել են ԵՊՀ համակարգչային ցանցին: ԵՊՀ հյուրատունը լիովին ապահովվել է անլար ինտերնետ կապով: Արդիականացվել են պլանային վերանորոգման ենթարկված լսարանների և մասնաշենքերի ներքին համակարգչային ցանցերը:

Ընդլայնվել է հեռախոսային ցանցը, մասնավորապես վերանորոգված մարզահամալիրի և նորակառույց Հյուրերի տանը տեղադրվել է նոր ավտոմատ հեռախոսակայան (ԱՀԿ): Ներքին ԱՀԿ-ի հեռախոսահամարների ընդհանուր թվաքանակը 734 է:

Ներդրվել է ինտերնետ հասանելիության կառավարման և մշտադիտարկման նոր համակարգ: Նախագծվել և ավարտին է հասցվել ԵՊՀ-ի սերվերային համակարգերի վիրտուալացման գործընթացը, որի արդյունքում հնարավոր է դարձել առավել արդյունավետորեն օգտագործել սերվերային ռեսուրսները և պահուստային պատճենների իրականացումը դարձնել ավելի ճկուն: Վիրտուալացման արդյունքում ներկայումս 6 ֆիզիկական սերվերների վրա մշտապես աշխատում են 30 վիրտուալ սերվերներ:

\* \* \*

Ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի [www.yasu.am](http://www.yasu.am) պորտալի 96 կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում) և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը: ԵՊՀ աշխատողներին տրամադրվել է շուրջ 266 նոր էլեկտրոնային փոստի հասցե [ysu.am](mailto:ysu.am) դոմեյնում (աշխատողների էլեկտրոնային փոստի հասցեների ընդհանուր թիվը շուրջ 3000 է):

Շարունակվել է ԵՊՀ ուսանողների (շրջանավարտների) էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրման գործընթացը, և հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական էլփոստի հասցեների թիվը կազմել է շուրջ 30300:

\* \* \*

2016/2017 ուսումնական տարվա ընթացքում մշակվել և ստեղծվել է «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթ» («Ինտրանետ», intranet.ySU.am) համակարգը, որը հնարավորություն է ընձեռում ԵՊՀ աշխատողներին՝ մուտքագրելու տեղեկատվություն իրենց աշխատանքների մասին (հոդվածներ, գիտաժողովի նյութեր, մենագրություններ, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսություններ, արտոնագրեր, դրամաշնորհներ, քարտեզներ), ինչպես նաև դյուրին է դարձնում հավաքագրված տեղեկատվության վերամշակմամբ տարբեր տեսակի հաշվետվություններ կազմելը: Համակարգից օգտվող աշխատողների թիվը 1634 է, իսկ մուտքագրված և հաստատված աշխատությունների թիվը՝ մոտ 5320:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են «Ուսանող-Համալսարան» վիրտուալ տիրույթի (ուսանողական ինտրանետ, virtual.ySU.am) ստեղծման աշխատանքները: Ստեղծվել է տիրույթի հիմքը: «Ուսանող-Համալսարան» վիրտուալ տիրույթի նպատակն է ապահովել սովորողի և համալսարանի դասախոսների, տարբեր կրթագիտական և վարչական կառույցների միջև տեղեկատվության արդյունավետ փոխանակման գործընթացը, ավտոմատացնել աշխատանքային մի շարք գործառույթներ և նպաստել ուսումնական և կազմակերպչական գործընթացներում կիրառվող տեղեկատվական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

«Ուսանողական ինտրանետ» համակարգում ստեղծվել է մոդուլ, որը ուսանողի համար ստեղծված էլեկտրոնային փոստի հասցեն ավտոմատ կերպով գրանցում է SS կրթական և հետազոտական կենտրոնի կողմից վարվող «ԵՊՀ Moodle <http://iterc.ySU.am>» համակարգում՝ օգտագործելով ուսանողի էլփոստի հասցեն և գաղտնաբառը, այսինքն՝ ուսանողը հնարավորություն է ստանում «մեկ պատուհան» գաղափարի միջոցով մուտք գործել և օգտվել ԵՊՀ տեղեկատվական համակարգերի ուսումնական/գիտական տարբեր ռեսուրսներից:

2016/2017 ուստարվա ընթացքում թարմացվել են ԵՊՀ սերվերների ծրագրային համակարգերը՝ ֆիզիկական սերվերներից անցում կատարելով վիրտուալ սերվերների օգտագործմանը:

\* \* \*

Վերոհիշյալով հանդերձ՝ հանրային կապերի և տեղեկատվական համակարգերի աշխատանքներում առկա են նաև թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Համալսարանի հանրային կապերի աշխատանքների և ԵՊՀ գործունեության արդյունքների տարածման համատեքստում ուսանողներն ու աշխատողները հաճախ ունեն պասիվ դերակատարություն:
- Հանրային կապերի գործիքները արդյունավետ չեն օգտագործվում առևտրայնացման նպատակով, արդյունավետ չեն իրականացվում մարքեթինգի հետ կապված միջոցառումները:
- ԵՊՀ համակարգչային ցանցի բաժանիչ սարքերը հին սերնդի են, անհրաժեշտություն է զգացվում դրանք փոխարինելու «խելացի» բաժանիչ սարքերով (Smart switch):
- Էլեկտրոնային փոստի հասցեների թվաքանակի աճին զուգընթաց անհրաժեշտ է պարբերաբար ավելացնել սերվերային պահոցների տարողունակությունը:
- ԵՊՀ կառավարման մեկ միասնական տեղեկատվական համակարգը դեռևս ձևավորված չէ:

# ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

## 1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների (ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն) աշխատանքներին մշտապես ցուցաբերել է կազմակերպչական և մեթոդական աջակցություն, ինչպես նաև իրականացվել են ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստելու ուսանողական կառույցների կարողությունների զարգացմանը:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին և ուսանողական կառույցներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատ:

Կենտրոնի և համապատասխան կառույցների համատեղ իրականացրած աշխատանքների մեջ առանձին խումբ են կազմում Արցախի Հանրապետությունում կազմակերպված ծրագրերը (Շուշիում՝ Խ. Աբովյանի անվան դպրոցում, Վարդան Ստեփանյանի (Դուշման Վարդան) 50-ամյակին նվիրված միջոցառում, Վարդան Ստեփանյանի անվան դասարանի բացում, դպրոցին համակարգիչների և գրքերի նվիրաբերություն, Վարդան Ստեփանյանի անվան պուրակի հիմնում Շուշիի վարչական շրջանում, համալսարանական-ազատամարտիկ Լ. Ազգալոյանի 75-ամյակին նվիրված մշակութային միջոցառում ԱՀ ՊԲ Տոնաշենի զորամասում, Լ. Ազգալոյանի անվան պուրակի հիմնում Բերձորում, տարբեր հանդիպումներ, քննարկումներ, ԱՀ ՊԲ մի շարք զորամասերում մշակութային միջոցառումներ՝ նվիրված Շուշիի ազատագրման 25-ամյակին և այլն):

2016 թ. նոյեմբեր – 2017 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում անցկացվել են Լ. Ազգալոյանի անվան մարտական պատրաստության ակումբի անդամների զինպատրաստության գործնական պարապմունքներ ԱՀ պաշտպանության բանակի՝ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում, նաև կրակային պատրաստության դասեր՝ Նուբարաշենի զորամասում: Մեծածավալ ծրագրերից

հարկ է առանձնացնել «Համահայկական ուսանողական ռազմական քանակումը» Արցախի Հանրապետությունում և ԵՊՀ ուսանողների զարգացման ծրագիրը Ծաղկաձորում: Վերջինիս արդյունքում ձևավորվել է «Հաջողության նախագիծ» ծրագիրն իրականացնող խումբ, որը աչքի է ընկել տարբեր գործիչների հետ հանդիպումների կազմակերպմամբ, որոնք հանդես են եկել թե՛ տարածաշրջանին վերաբերող, թե՛ հաջողության հասնելու բանալիների, հոետորիկայի ու նմանատիպ այլ թեմաներով դասախոսություններով: Յոթնօրյա «Համահայկական ուսանողական ռազմական քանակումը» ԱՀ-ում ընդգրկել է շուրջ 10 բուհ ներկայացնող 160 ուսանողի Հայաստանից, Արցախից ու Ջավախքից:

ԵՊՀ Լ. Ազգալոյանի անվան մարտական պատրաստության ակումբի կողմից կազմակերպվել են մի շարք հանդիպումներ ռեժիսոր Արշակ Զաքարյանի, ԱՄԱԼԱ-ի մարտիկ Վարուժան Կարապետյանի և այլ անձանց հետ: Իրականացվել է նաև Հայաստանում ականների վտանգի իրազեկման մասին դասախոսություն:

Կենտրոնի կողմից կազմակերպվել է հանդիպում ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի հետ: 2016 թվականի աշնան ամիսներին կենտրոնի աջակցությամբ պատկերվել են ապրիլյան մարտերում հերոսաբար զոհված Ռ. Աբաջյանի, Ա. Ուրֆանյանի, Բ. Եղոյանի (Մոնթե) ժամանակակից որմնանկարները (գրաֆիտի) համալսարանի տարբեր մասնաշենքերի պատերին:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնում իրենց գործունեությունն են սկսել ԵՊՀ բնապահպանական ակումբը և ԵՊՀ ավագների խորհուրդը: Իրականացվել են Ավագների խորհրդի կազմավորման մոտիվացիոն-ուսուցողական ծրագիրը Ծաղկաձորում, Բնապահպանական ակումբի «Կանաչ անկյուն» ծրագիրը ԵՊՀ-ում, «Ուսանողները հանուն բնության» ծրագիրը Դիլիջանում:

Կենտրոնի ամենամյա ծրագրերի շարքում ուրույն տեղ ունի «Լավագույն ուսանող» մրցույթի կազմակերպումը:

Իրականացվել են նաև մի շարք մշակութային և մարզական միջոցառումներ, ինչպիսիք են՝ Կոմիտասի մասին ֆիլմի ցուցադրությունը, վոլեյբոլի և բասկետբոլի միջֆակուլտետային ուսանողական առաջնությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը հանդես է եկել նաև բարեգործական ծրագրերով՝ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի անապահով ընտանիքների երեխաների հետ հանդիպում Բերդ քաղաքում, ամանոթյա համերգային-բարեգործական ծրագիր Արցախի Հանրապետության և Տավուշի սահմանամերձ բնակավայրերի մանուկների համար:

\* \* \*

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ուսանողական խորհրդի (ՈւԽ) գործունեությունը ներառել է նախկին գումարման ուսանողական խորհրդի և նոր գումարման ուսանողական խորհրդի աշխատանքները (ՈւԽ նախագահի ընտրությունները տեղի են ունեցել 2016 թ. դեկտեմբերի 27-ին): Չնայած որ տեղի են ունեցել ղեկավար մարմինների անդամների փոփոխություններ, այդ թվում՝ ֆակուլտետային ՈւԽ կազմի թարմացումներ, հնարավոր է եղել ապահովել ՈւԽ աշխատանքների անընդհատությունն ու ավանդույթների շարունակականությունը:

2016/2017 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈւԽ-ն կազմակերպել է շուրջ 600 միջոցառում: ՈւԽ նոր գումարման նախագահությունը, համագործակցելով վերակազմավորված ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների հետ, ապահովել է ՈւԽ բնականոն գործունեությունը, սահմանել համընդհանուր ռազմավարական նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև ներդրել է նոր մոտեցումներ և մեխանիզմներ արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

ՈւԽ աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝

- Ուսանողների իրավունքների պաշտպանություն, տարբեր խնդիրների բարձրաձայնում:
- Մասնակցություն համալսարանի և ֆակուլտետների ղեկավար մարմինների աշխատանքներին:
- Ուսանողների տեղեկացվածության մակարդակի բարձրացում, իրավունքների, պարտականությունների և ներհամալսարանական տարբեր գործընթացների մասին իրազեկում:
- Ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված ծրագրեր:
- Աջակցություն սոցիալական խնդիրների լուծմանը:

- Մշակութային և ժամանցային միջոցառումներ:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունն ու ծրագրերի իրականացումը՝ ՀՀ օրենսդրության, ԵՊՀ կանոնադրության, ներքին իրավական ակտերի և ԵՊՀ ՈւԽ կանոնադրության համաձայն պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները:

Ուսանողական խորհուրդն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել համալսարանի կառավարմանը տարբեր հարթակներում (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ)՝ բարձրաձայնելով ուսանողությանը հուզող խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները: Ուսանողները մասնակցել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, համագործակցել ԵՊՀ ղեկավարման տարբեր օղակների և ստորաբաժանումների հետ: ՈւԽ-ն իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման դասընթացներ, սեմինարներ և միավորել է համալսարանի ուսանողական կառույցների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը:

ԵՊՀ ՈւԽ-ն ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների համակարգված և հստակորեն ուղղորդված աշխատանքով նպաստել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրների բարձրաձայնմամբ և լուծմամբ:

ՈւԽ աշխատանքներում առաջնային նշանակություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Այս առումով կազմակերպվել են քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ, մասնավորապես՝ 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու, ինչպես նաև գործող կրթական համակարգը ուսանողների համար ավելի մատչելի դարձնելու նպատակով: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է ամենամյա «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի



մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ծրագրին մասնակցել է շուրջ 230 առաջին կուրսեցի, որոնց մեծ մասը հետագայում համալրել է ՈւԽ անդամների շարքերը:

ՈւԽ կայքը և ֆեյսբուքյան էջը գործել են բավական ակտիվ և ունեցել զգալի որակական տեղաշարժեր: Հաշվետու ժամանակաշրջանում մեկնարկել են «Ալեք Մանուկյան 1» ՈւԽ ամսագրի վերահրատարակման աշխատանքները (հրատարակվել է երկու համար): Համապատասխանաբար վերագործարկվել է նաև «Ալեք Մանուկյան 1» ամսագրի կայքը:

Ուսանողական խորհրդի գործունեության առաջնայնությունների շարքում են եղել ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները, որոնց թվում՝ հանդիպումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտաժողովներ համալսարանում, ինչպես նաև այցելություններ զորամասեր, սահմանամերձ գյուղեր, պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմի անդամները չորս տարբեր մեծ ծրագրերով այցելել են Արցախի Հանրապետություն: Ամանորի նախօրյակին ՈւԽ անդամները այցելել են Արցախի և Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջաններ, իրականացրել տոնական միջոցառումներ և նվերներ հանձնել ավելի քան 2000 երեխաների: ՈւԽ աջակցությամբ Արցախում կազմակերպվել է Դուշման Վարդանի և Լեոնիդ Ազգալոյանի հիշատակին նվիրված միջոցառումների շարք: Արցախի Հանրապետության պաշտպանական գրեթե բոլոր շրջաններում կազմակերպվել են մշակութային միջոցառումներ՝ նվիրված մայիսյան եռատոներին: ՈւԽ-ն ակտիվորեն մասնակցել է նաև Հաղթութի շրջանի Տոդ գյուղում հուլիսին կազմակերպված «Համահայկական ուսանողական ռազմական բանակում» ծրագրի կազմակերպչական աշխատանքներին:

Հաշվետու ուստարում ՈւԽ-ն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ (կրթաթոշակներ, հանգստի կազմակերպում և այլն):

Հայրենաձանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 3000 ուսանող մասնակցել է ՈւԽ-ի կազմակերպած էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՈւԽ կազմում ակտիվորեն գործել է «Բանավեճի ակումբը», որի իրականացրած բանավեճի ակումբային առաջնությանը մասնակցել է շուրջ 32 թիմերի 200 ուսանող: Հիմնադրվել է նաև ՈւԽ «Զարգացում» դպրոցը, որի նպատակը ոչ ֆորմալ կրթության միջոցով ուսանողների հմտությունների ու կարողությունների զարգացմանը նպաստելն է: «Զարգացում» դպրոցում հաշվետու ժամանակաշրջանում սովորել է շուրջ 80 ուսանող:

Ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ անցկացվել են «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի, «Գուշակիր մեղեդին»-ի, «Կինոմանիա»-ի, «Ամենախելացի»-ի և այլ ինտելեկտուալ մրցակցային առաջնություններ: Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է ամենամյա «Ուսանողական ռեկտորատ 2016» միջոցառումը, երբ ուսանողները մեկ օրով ստանձնում են համալսարանը «ղեկավարելու» պարտականությունները:

Արդեն 3-րդ անգամ (սկսած 2014 թ-ից) 2016 թ. դեկտեմբերին ՈւԽ-ն կազմակերպել է «Ուսանողական կառույցների ազդեցությունը և դերը բարձրագույն կրթական համակարգում» խորագիրը կրող ուսանողական միջազգային համաժողովը: Տասնմեկ երկրների առաջատար համալսարանների շուրջ 50 ուսանողներ հավաքվել էին Հայաստանում՝ քննարկելու իրենց միավորող ու մտահոգող խնդիրները:

Միջոցառումներ են կազմակերպվել համալսարանի ծննդյան 98-ամյակի և ՈւԽ հիմնադրման 23-ամյակի առիթներով: Անցկացվել է ավանդական դարձած «Ուսանող-2017» մրցանակաբաշխությունը, որի հիմնական նպատակն է խրախուսել հասարակական ակտիվություն և/կամ ներհամալսարանական մասնակցություն ու բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին:

Իրականացվել է մարզական միջոցումների շարք, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, բասկետբոլի, վոլեյբոլի ներֆակուլտետային և միջֆակուլտետային մրցումներ: Կազմակերպվել են ավանդական «Երգող համալսարանական», «Պարող համալսարանական», «Ասմունքող համալսարանական» մրցույթները: ՈւԽ կողմից իրագործվել է նաև «Հաջողության նախագիծ» ծրագիրը, որի շրջանակներում իրենց հաջողակ պատմություններով կիսվել են արվեստի և գիտության ոլորտում փորձառու մարդիկ, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի անդամները, քաղաքական և պետական գործիչներ և այլք: Հաշվետու ժամանա-

կաշրջանում տեղի է ունեցել «Հաջողության նախագծի» ավելի քան երկու տասնյակ հանդիպում:

Հաշվետու ուստարում ևս ԵՊՀ ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի հետ: ՈւԽ-ն Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ կազմակերպությունների հետ կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ և այլն:

\* \* \*

2016/2017 ուստարում Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է ընդհանուր թվով 516 միջոցառում, այդ թվում՝ հանրապետական, միջբուհական ու համահամալսարանական գիտաժողովներ ու աշխատաժողովներ, սեմինար-քննարկումներ, դասախոսություններ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դատախազներ, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ և այլն:

Համաձայն ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 6.2.4. կետի, այն է՝ նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, ՈԻԳԸ-ն կազմակերպել է գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունների զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնցից են «Գիտախոս» գիտահանրամատչելի զեկուցումների մրցույթը, «Գրքամարտ» ինտելեկտուալ մրցույթը, ինչպես նաև ուսանողական գիտական ճամբարները՝ կազմակերպված Կենսաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության, Ֆիզիկայի ֆակուլտետների ՈԻԳԸ-ների կողմից: Միջբուհական ու ֆակուլտետային գիտաժողովներ և աշխատաժողովներ են անցկացվել Աշխարհագրության և երկրաբանության, Արևելագիտության, Իրավագիտության, Հայ բանասիրության, Ռոմանագերմանական բանասիրության, Ռուս բանասիրության, Պատմության և Սոցիոլոգիայի ֆակուլտետներում:

Ուստարվա ընթացքում ՈԻԳԸ-ն հաստատել կամ ընդլայնել է տարբեր ձևաչափի համագործակցությունը ներհամալսարանական և արտահամալսարանական կա-

ռույցների հետ, ինչի արդյունքում ավելացել է այլ բուհերի կողմից կազմակերպվող գիտաժողովներին ու համաժողովներին ԵՊՀ մասնակիցների թիվը: Դրանց թվում կարելի է շեշտել ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության և «Դասավանդի՛ր, Հայաստան՛» կրթական հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, որով կողմերը կարևորում են կրթության հիմնախնդիրների լուծմանը նպաստելու անհրաժեշտությունը, նորարարությունը, գիտամանկավարժական գործունեությանն օժանդակումը: Համագործակցային նախագծերի իրականացման արդյունքում ավելացել է նաև ԵՊՀ ՈԻԳԸ գիտաժողովներին այլ կրթական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությունը:

2016/2017 ուստարում ՈԻԳԸ մեծաթիվ անդամներ արժանացել են ԵՊՀ և ՀՀ «Լավագույն ուսանող» կոչմանը, ինչպես նաև ՏՏ ոլորտում՝ ՀՀ նախագահի կրթական պարգևների ու նվաճել մրցանակներ միջազգային օլիմպիադաներում: ՈԻԳԸ անդամները մասնակցել են նաև միջազգային միջոցառումների, այդ թվում՝ կոնֆերանսների, սիմպոզիումների, համաժողովների ու վերապատրաստման դասընթացների ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Վրաստանում և այլուր:

ԵՊՀ ՈԻԳԸ-ն, կարևորելով նաև կրթագիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մասնակցություն է ունեցել ԱրՊՀ-ի, ԵՊՀ ԻՄ-ի, ՎՊՀ-ի, ՇՊՀ-ի և հայաստանյան այլ բուհերի կողմից կազմակերպվող գիտաժողովներին:

Ուստարվա կարևորագույն իրադարձություններից հարկ է նշել «ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականի հերթական 7 համարների տպագրությունը: Այստեղ տեղ են գտել շուրջ 200 հարյուր ուսանողի, ասպիրանտի ու երիտասարդ գիտնականի հոդվածներ, որոնք ներկայացվել էին 2015 թ. տարեկան գիտական նստաշրջանին:

Ուստարվա ընթացքում մեկնարկել են նաև ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածուի 2017 թ. համարների խմբագրական աշխատանքները՝ ներգրավելով մեծ թվով ներկայացուցիչների ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից: Ժողովածուի հերթական համարների տպագրությունը նախատեսվում է իրականացնել 2017/2018 ուստարում:

Ուսումնական տարվա ընթացքում մեկնարկել են ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 70-ամյակին նվիրված միջոցառումները, որոնց շարքում առանցքային միջոցառումը

ՈԻԳԸ 4-րդ միջազգային գիտական նստաշրջանն է, որի իրականացումը նախատեսված է 2017/2018 ուստարվա ընթացքում:

\* \* \*

«Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է ինչպես արդեն ավանդական դարձած ծրագրերն ու միջոցառումները, այնպես էլ ուսանողների կողմից առաջարկված նոր և հետաքրքիր նախաձեռնություններ:

Մասնավորապես հարկ է առանձնացնել «Անմահները հրամայում են ...», «Դասը վարում են համալսարանականները», «Երիտասարդությունը ընդդեմ ցեղասպանության», «Նժդեհյան ընթերցումներ» ծրագրերը, «Տարածաշրջանը և մենք» ամառային դպրոցը, «Միացյալ Հայաստան-2017» ուխտագնացություն-արշավը Արցախ, «Կրթությունը՝ ՀՀ անվտանգության համատեքստում» խորագրով գիտապրակտիկ կոնֆերանսը: Հրատարակվել է նաև «Վարդանանք» պարբերականը:

## 2. Մշակութային գործունեություն

2016/2017 հաշվետու ուստարվա ընթացքում ԵՊՀ մշակույթի կենտրոնն առանձնացել է նոր և բազմաբովանդակ գործունեությամբ: Կենտրոնի գործունեության մասին իրազեկելու, ինչպես նաև գործող խմբերը նոր տաղանդավոր ուսանողներով համալրելու համար Մշակույթի կենտրոնի աշխատակազմը հանդիպումներ է ունեցել առաջին կուրսեցիների հետ:

Նոր ձևաչափով են իրականացվել համալսարանականների կողմից սիրված ավանդական միջոցառումները, որոնց թվում են «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը», որը 2016 թվականին նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին, «Լավագույն ուսանող 2016» հանդիսավոր համերգ-մրցանակաբաշխությունը (ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի հետ համատեղ), Մբ Վարդանանց նահատակների նվիրված միջոցառումը, որն արդեն 8-րդ տարին իրականացվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համատեղ, Գարնանային տոներին նվիրված՝ «Գարուն, սեր...» միջո-

ցառումը, ԵՊՀ ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի հետ 8 տարի շարունակ իրականացվող «Ֆրանսիական երգի փառատոնը»:

Կազմակերպվել են հոբելյանական միջոցառումներ՝ Դուշման Վարդանի հիշատակի ցերեկույթը Արցախում, Առնո Բաբաջանյանի 95-ամյակին նվիրված տոնական համերգը՝ «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնի հետ համատեղ, Կոմպոզիտորների միության 85-ամյակին նվիրված համերգը:

Առանձահատուկ և մասշտաբային բնույթ էին կրում ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված հետևյալ միջոցառումները՝

- ԵՊՀ երգչախմբի մասնակցությունը ՀՀ երիտասարդական նվագախմբի նախաձեռնած «Անկախության սերունդ» նախագծի համահայաստանյան երգչախմբի կատարմանը (2016 թ. սեպտեմբերի 21-ին),
- Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի և Երևանի պետական համալսարանի համատեղ համերգը՝ նվիրված հայ-վրացական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին,
- «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ԵՊՀ ռուսանոդական մշակութային եռօրյա մրցույթ-փառատոնը՝ նվիրված ՀՀ անկախության 25 –ամյակին,
- «Դիպված» հաղորդաշար՝ «ԵՊՀ-ի դերը անկախության կայացման գործում» թեմայով:

2016/2017 ուստարում կազմակերպվել և իրականացվել են մի շարք թեմատիկ միջոցառումներ, այդ թվում՝

- Անուշ Բաբայանի ստեղծագործությունների ցուցահանդեսը՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին,
- Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված՝ Իսրայելի Թել Ավիվ քաղաքի «Շառլոտտա» երգչախմբի համերգները ԵՊՀ-ում, Ծիծեռնակաբերդում, Երևանի Կամերային երաժշտության տանը և Իջևանի մարզպետարանի դահլիճում,
- «Թանգարանային գիշեր» միջազգային փառատոն-տարազների ցուցադրությունը և համերգային ծրագիրը Էրեբունի պատմահնագիտական թանգարան-արգելոցում՝ նվիրված Վան քաղաքին,

- Լիբանանահայ լուսանկարիչ Գաբրիել Փանոսյանի, ԵՊՀ ուսանողներ և Մշակույթի կենտրոնի սաներ Գայանե Թադևոսյանի և Մերի Բադայանի «Լույսը խավարում» պատկերագրքի շնորհանդեսը,
- «Մշակութային դաստիարակություն» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են երաժշտության, կերպարվեստի, գրականության, թատրոնի և կինոյի, դիզայնի վերաբերյալ դասախոսություններ և վարպետության դասեր հայտնի մասնագետների մասնակցությամբ:

Հաշվետու ուստարում ևս ԵՊՀ մշակույթի կենտրոնը կինոակումբի գործունեության շրջանակներում Հայաստանի Ազգային կինոկենտրոնի հետ համատեղ «Կինոաշուն» և «Ոսկե ծիրան» փառատոների ընթացքում և Ֆրանկոֆոնիայի օրերին յուրաքանչյուր չորեքշաբթի համալսարանականների համար ցուցադրել է հայկական և արտասահմանյան արտադրության նոր 10 ֆիլմ, որոնց դիտումից հետո տեղի են ունեցել քննարկումներ ֆիլմերի ստեղծագործական խմբերի անդամների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ): Տեղի է ունեցել «Կյանք ու կռիվ. 25 տարի անց» ֆիլմի պրեմիերան ԵՊՀ ուսանողների համար:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի սաները հաշվետու շրջանում ևս մասնակցել են հանրապետական և միջազգային մրցույթների և փառատոների՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր: Այսպես, միջբուհական ունիվերսիտադայի պարարվեստի մրցույթում Անի Օրդյանը զբաղեցրել է 2-րդ տեղը, ֆրանսիական երգի մրցույթում (Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում) «Լավագույն արտիստիզմ» անվանակարգում հաղթող է ճանաչվել Մարիցա Թիլիքյանը, «De Armicitia» միջազգային ծրագրի շրջանակներում, «Donkey Caravan» մշակութային փառատոնում՝ ԵՊՀ մշակույթի կենտրոնի աղջիկների պարային համույթի մենապարուհի Մարիա Ղազարյանը:

Սողոմոն Թեղերյանի և «Նեմեսիս» ծրագրի մասնակիցների փառաբանմանը նվիրված ցերեկույթով համագործակցային նոր հիմքեր են դրվել Էրեբունի պատմահնագիտական թանգարան-արգելոցի հետ: Խարկովի հայկական համայնքի հետ ունեցած համագործակցության արդյունքում Խարկովի «Արաքս» պարային համույթի և ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Էթնո բենդ» համույթի անդամները համատեղ մասնակցել են միջազգային «FOLK» փառատոնին: ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի ամառային դպրոց 2016» ծրագրի շրջանակում ազգային երգի ու պարի դասընթաց-

ները արդեն 6-րդ տարին է կազմակերպել է ԵՊՀ մշակույթի կենտրոնը: Մշակույթի կենտրոնը հաշվետու ուստարում ևս մասնակցել է Հայաստանի Շախմատի ակադեմիայի կողմից կազմակերպված՝ Մարտունիում անցկացվող «Սևանա լիճ 2017» շախմատի միջազգային երիտասարդական մրցաշարի փակման արարողության համերգային ծրագրին:

Կենտրոնի սաները մասնակցել են մի շարք համերգային ծրագրերի, այդ թվում՝ ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի փակման արարողությանը, Հայաստանի պարի պետական անսամբլի մենահամերգին, «Հարթակ» միջազգային երիտասարդական փառատոնին, Մ. Մկրտչյանի անվան արտիստական թատրոնում «Փշրված պատրանքներով մի գիշեր» (ռեժ.՝ Գ. Մադոյան) և «Բոհեմ» թատրոնում «Ճտերն աշնանն են հաշվում» (ռեժ.՝ Ն. Դուրյան) ներկայացում դիտում-քննարկումներին:

### **3. Կարիերայի խթանում, աշխատանք շրջանավարտների հետ, ձեռներեցության զարգացում**

2016/2017 ուսումնական տարում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության հիմքում ընկած միջոցառումներն ու ծրագրերը կարելի է դաս դասել ըստ հետևյալ ուղղությունների՝

- ֆակուլտետային հանդիպում-խորհրդատվություններ,
- պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներ,
- ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակում ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ, այցելություններ,
- թեստավորման, ինտերնշիփերի, կամավորական աշխատանքների և ուսանողական պրակտիկայի կազմակերպում,
- աշխատանքային հնարավորությունների ընձեռում,
- շրջանավարտների տվյալների բազայի համալրում:

2016/2017 ուսումնական տարվա սկզբին Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը նախաձեռնեց ֆակուլտետային հանդիպում-խորհրդատվությունների շարք ուսանողների և շրջանավարտների հետ: Հանդիպումների ընթացքում կենտրոնի մասնագետների կողմից ուսանողներին ներկայացվեցին արդի աշխատաշուկայի



հիմնական պահանջները, գործատուների կադրային քաղաքականությունը, տեղեկատվություն փոխանցվեց համապատասխան ոլորտի կազմակերպություններում առկա թափուր աշխատատեղերի, դասընթացների, պրակտիկաների ու կամավորական աշխատանքների վերաբերյալ:

Վերոնշյալ հանդիպում-խորհրդատվություններին մասնակցել են 181 ուսանող և շրջանավարտ 7 ֆակուլտետից:

Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներին հաշվետու ուստարվա ընթացքում մասնակցել են 934 ուսանող և շրջանավարտ: Կենտրոնը կարևորում է տարաբնույթ սեմինար-դասընթացների անցկացումը՝ հաշվի առնելով ոչ ֆորմալ կրթության անհրաժեշտությունը ուսանողների և շրջանավարտների զարգացման և կարիերայի կառուցման գործընթացում:

2016/2017 ուսումնական տարում անցկացված սեմինար-դասընթացների թեմատիկ և իրականացնող գործընկեր կազմակերպությունների ոլորտային շրջանակը լայն է՝ ընդգրկելով աշխատաշուկայի մրցակցային առանձնահատկությունները, գործարար միջավայրի խնդիրները, հանրային դիվանագիտությունը, նախագծերի կառավարումը, մարքեթինգը, անձի հոգեբանական գործընթացները և այլն: Նշված ժամանակահատվածում ևս կենտրոնը շարունակել է առցանց հեռարձակման ձևաչափով դասընթացների կազմակերպումը:

Կենտրոնի կողմից ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակում ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներն ընդգրկում են ապահովագրության և բանկային ոլորտները: Ուսանողները և շրջանավարտները հանդիպումներ են ունեցել «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ: Երկու հանդիպումների նպատակն էլ ուսանողներին առկա առաջարկների ներկայացումն ու կազմակերպության կադրերի համալրումն էր: Կենտրոնի նախաձեռնությամբ շրջայցի ձևաչափով հանդիպում է անցկացվել նաև «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ: Շրջայցի ընթացքում համապատասխան մասնագիտացում ունեցող համալսարանականները ծանոթացել են ընկերության արտադրամասի աշխատանքներին, կազմակերպության կադրային քաղաքականությանը և հնարավորություն են ստացել հենց տեղում հանձնել իրենց CV-ները՝ առկա աշխատանքային և այլ առաջարկների համար:

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներին ու այցելություններին մասնակից է եղել 157 համալսարանական:

Հաշվետու ուսումնական տարում կենտրոնն իրականացրել է նաև թեստավորման, ինտերնշիփերի, կամավորական աշխատանքների և ուսանողական պրակտիկաների կազմակերպում: Վերոնշյալ գործընթացների շրջանակում կենտրոնը համագործակցել է ՀՀ և միջազգային 23 կազմակերպությունների հետ. ծրագրերում ներգրավված է եղել 221 համալսարանական:

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններից է շրջանավարտներին թափուր աշխատատեղերի և այլ հնարավորությունների մասին տեղեկացնելը: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կենտրոնի գործընկեր կազմակերպությունների կողմից թափուր հաստիքների համալրման նպատակով ներկայացվել է 104 դիմում-հայտ, որոնց արձագանքած 1821 համալսարանականից աշխատանքի հնարավորություն է ստացել 72-ը:

2016/2017 ուսումնական տարում կենտրոնը մասնակցություն է ունեցել Ուրալի ֆեդերալ համալսարանի (ՈւԻՖՀ) կողմից կազմակերպված «Երիտասարդության նորարարական ներուժը. համաշխարհայնացում, քաղաքականություն, ինտեգրում» խորագրով 6-րդ միջազգային գիտահետազոտական կոնֆերանսի աշխատանքներին:

Հարկ է առանձնացնել 2016/2017 ուսումնական տարում անցկացված «Լիդերության դերը կարիերայի զարգացման գործում. բուհ-ձեռնարկություն համագործակցության նոր ձևաչափ» խորագրով ծրագիրը, որն իրականացվել է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, Հայաստանում «Beeline» ընկերության, «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի համագործակցության շրջանակում: Ծրագրի ընթացքում մասնակիցները հանդիպումներ են ունեցել ՀՀ աշխատաշուկայում մեծ պահանջարկ վայելող ոլորտների կազմակերպությունների ղեկավար անձանց հետ, մասնակցել կազմակերպիչների կողմից անցկացվող դասընթացներին, իսկ ավարտին լավագույնները կազմակերպությունների կողմից ստացել են պրակտիկայի կամ աշխատանքի առաջարկ: Նշված ծրագրի շրջանակում համագործակցության հուշագրեր են ստորագրվել 2 խոշոր ձեռնարկությունների՝ «Beeline» ընկերության ու «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հետ: Ծրագրում ներգրավված է եղել 90 ուսանող:

2016/2017 ուսումնական տարում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը իրականացրել է նաև շրջանավարտների տվյալների հավաքագրում և տվյալների բազայի համալրում: Կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊՀ շրջանավարտների դիպլոմների հանձնումը և շրջաթերթերի լրացումն իրականացվել են միաժամանակ՝ օրն ավելի տոնական և հիշարժան դարձնելով:

\* \* \*

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ձեռներեցության զարգացման նորաստեղծ կենտրոնը, համագործակցելով ձեռներեցության և ստարտափների խթանման ուղղությամբ գործող տարբեր կառույցների հետ, շարունակել է իրականացնել ուսանողների նորարարական և ձեռներեցական նախաձեռնություններին նպաստող ծրագրեր: Կազմակերպվել են նաև մի շարք դասընթացներ, որոնցից հատուկ շեշտադրման կարիք ունեն հատկապես «Ուսանողների ձեռներեցական հմտությունների զարգացումը ստարտափ նախաձեռնությունների համատեքստում» խորագիրը կրող մեկամսյա դասընթացների շարքը և Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի (ISTC) հետ համատեղ կազմակերպած «ԵՊՀ ամառային ստարտափ մրցույթ-2017»-ը: Կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊՀ գրադարանի մասնաշենքում «Ռոստելեկոմ» ընկերության աջակցությամբ բացվեց ճարտարագետ, գյուտարար գունավոր հեռուստացույցի հայտնագործող Հովհաննես Ադամյանի անվան սրահը:

Կենտրոնը, համագործակցելով ԵՊՀ ուսանողների և երիտասարդ մասնագետների հետ, նախաձեռնել և իրականացրել է ԵՊՀ նորակառույց մարզահամալիրի տարածքում շուրջ 5Kwt հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի տեղադրման ծրագիրը, որի հիմնական նպատակների թվում հարկ է առանձնացնել «կանաչ» տեխնոլոգիաների կիրառման մշակույթի խթանումն ու արևային էներգետիկայի ոլորտում նորարարությունների համար նպաստավոր գիտաուսումնական և փորձարարական միջավայրի ձևավորումը:

\* \* \*

Վերոհիշյալով հանդերձ՝ ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներում առկա են նաև թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Ուսանողական կառույցների կողմից հարցումների (ուսումնասիրությունների) և հետադարձ կապի ապահովման համակարգը գործում է ոչ լիարժեք:
- Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների (ֆիզիկական դժվարություններ, ծանր սոցիալական խնդիրներ ունեցող և այլ անձինք) ուսումնառության համար դեռևս առկա են էական խոչընդոտեր:
- Դիլիջանի մարզաառողջարանային համալիրի և Հանքավանի ու Բյուրականի ուսումնասարտադրական բազաների վիճակը բավարար չէ ուսանողական ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման համար:
- Շրջանավարտների զբաղվածության վիճակագրական բազան ձևավորելու անհրաժեշտություն է զգացվում:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ռեկտորատի ու արհեստակցական կազմակերպության համար շարունակել է առաջնային մնալ ԵՊՀ աշխատողների սոցիալական վիճակի բարելավումը: Այդ և սոցիալական գործընկերության մակարդակի բարձրացման նպատակով մի շարք աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ՝ ուշադրության կենտրոնում պահելով համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործումը: Արդյունքում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից օգնության կարգով համալսարանի 369 աշխատողների, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացվել է 17301000 (տասնյոթ միլիոն երեք հարյուր մեկ հազար) դրամի օգնություն: 2016/2017 ուստարում ԵՊՀ աշխատողների ԵՊՀ-ում սովորող 160 երեխաների համար կիրառվել է ուսման վարձի մինչև 80 % զեղչ՝ ԵՊՀ ֆինանսական միջոցներից հատկացնելով 52701500 (հիսուներկու միլիոն յոթ հարյուր մեկ հազար հինգ հարյուր) դրամ, իսկ խրախուսման և օգնության նպատակով 82 աշխատողի հատկացվել է 15150000 (տասնհինգ միլիոն հարյուր հիսուն հազար) դրամ:

Աշխատողների շուրջ 2220 երեխաների և թոռնիկների ամանորյա ուրախ տրամադրությունն ապահովելու նպատակով ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր ֆինանսական միջոցների հաշվին կազմակերպել է միջոցառումներ՝ ամանորյա ներկայացման տոմսերի և նվերների հատկացմամբ, իսկ հունիսի 1-ը՝ Երեխաների պաշտպանության օրը իսկական տոն դարձնելու համար ձեռք է բերել մանկական երաժշտական ներկայացման 1200 տոմս:

Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ ֆակուլտետներում և ստորաբաժանումներում 1516 կին աշխատողների համար իրականացվել են միջոցառումներ՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից ծախսելով երեք միլիոն յոթ հարյուր իննսուն հազար յոթ հարյուր հիսուներեք դրամ գումար:

Համալսարանականների արտահամալսարանական մշակութային ժամանցն ապահովելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհեստակցա-

կան կազմակերպությունը ձեռք է բերել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացրել է համերգային և թատերական տարբեր ներկայացումների 771 տոմս:

Հաշվետու շրջանում Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազայում հատկացված ուղեգրերով իրենց հանգիստն են կազմակերպել համալսարանի մոտ 880 աշխատողներ, նրանց ընտանիքի անդամներ և ուսանողներ (2872 մարդ-օր): Սոցիալապես առավել անապահով աշխատողների նկատմամբ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը կիրառել է ուղեգրերի արժեքը 50 տոկոսով զեղչելու սկզբունքը:

Շարունակելով «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագիրը՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը հաշվետու ժամանակահատվածում 78 աշխատողի ընդհանուր առմամբ հատկացրել է երկու միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումար (26-ը առաջին երեխայի համար, 33-ը՝ երկրորդի, 18-ը՝ երրորդի, 1-ը՝ հինգերորդի համար):

2016/2017 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության աջակցությամբ որոշ ֆակուլտետների և ստորաբաժանումների 11 կոլեկտիվներ մեկօրյա արշավներ են կազմակերպել դեպի Հայաստանի տարբեր տեսարժան վայրեր:

2015 թ-ից ԵՊՀ արհկոմիտեն համալսարանական նորապսակ աշխատողներին ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցների հաշվին հատկացնում է Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազայի անվճար հնգօրյա ուղեգիր: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրից օգտվել է 15 զույգ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում շարունակում է գործել անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայությունը ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ: Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրից օգտվել է 96 ԵՊՀ աշխատող:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը հաշվետու ուստարում փոխհատուցել է ԵՊՀ 162 աշխատողի և ուսանողի՝ իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրական վճարի 10 %-ը:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության առաջարկությամբ 2016 թ. հունվարի 1-ից իրականացվող ԵՊՀ հաշմանդամություն ունեցող աշխատողների համար սոցիալական ծրագրից ուստարվա ընթացքում օգտվել է 69 աշխատող՝ ստանալով 770000 (յոթ հարյուր յոթանասուն հազար) դրամ հավելավճար: Ծրագրի շրջանակ-

ներում ԵՊՀ հաշմանդամություն ունեցող բոլոր աշխատողները աշխատավարձի հավելավճար են ստանում ըստ հաշմանդամության խմբի (1-ին խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողները՝ 20000 դրամի չափով, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողները՝ 15000 դրամի չափով, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողները՝ 10000 դրամի չափով):

2016 թ. ապրիլին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների վիճակը բարելավելու նպատակով ԵՊՀ-ն 2016 թ. հունիսի 1-ից իրականացնում է զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու ծրագիր: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը քառասուն հազար ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ քսան հազար ՀՀ դրամ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախաձեռնությամբ և ԵՊՀ աջակցությամբ 2016 թվականի հոկտեմբերի 10-13-ը Երևանում՝ Մայր բուհում, կայացավ Եվրասիական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ասոցիացիայի 29-րդ համագումարը: 7 երկրներից ժամանած շուրջ 50 մասնակիցներ քննարկեցին աշխատողների և ուսանողների սոցիալական, իրավական պաշտպանվածության խնդիրները, ինչպես նաև արհմիությունների դերը աշխատողների իրավունքների պաշտպանության գործում: Տարբեր երկրների բուհերի արհմիությունների ներկայացուցիչները հանդես եկան զեկուցումներով՝ ներկայացնելով իրենց փորձը, բարձրաձայնեցին ոլորտին առնչվող խնդիրներն ու փորձեցին համատեղ լուծումներ գտնել:

ԵՊՀ-ն 2017 թվականի հունվարի 1-ից իր հիմնական աշխատողների համար «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերությունից մրցութային կարգով ձեռք է բերել բժշկական ապահովագրության փաթեթ, որը հնարավորություն է տալիս ապահովագրության միջոցով իրականացնել տարեկան կանխարգելիչ հետազոտություն, աշխատակիցների տարեկան պարտադիր բժշկական զննում, շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն, պայմանագրով նախատեսված հիվանդությունների ամբուլատոր և ստացիոնար բուժում, քրոնիկ հիվանդությունների սրացման բուժում:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված ԵՊՀ մինչև 40 տարեկան 40 դասախոսների և գիտաշխատողների համար ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ ապրիլի 8-ից սկսած՝ մեկ ամսվա ընթացքում ամեն շաբաթ օր իրականացրել է քառօրյա նախնական զինվորական պատրաստության դասընթաց: Համալսարանականները մասնակցել են ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ դաշտային պարապունքների, ծանոթացել հավանական հակառակորդի բանակի կառուցվածքին, սպառազինությանն ու մարտավարությանը, ուսումնասիրել հրաձգային զենքերը, սովորել հրաձգության հիմունքներն ու կանոնները, մարտի դաշտում առաջին բուժօգնության կանոնները:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ տնտեսական գործունեությունը կազմակերպվել ծախսերի և եկամուտների նախահաշվով հատկացված միջոցների շնորհիվ: 2016/2017 ուստարվա ընթացքում ձեռք են բերվել շուրջ 80,8 մլն դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկա, համակարգչային պահեստամասեր, պատճենահանող և տպիչ սարքեր, ինչպես նաև՝ 20,5 մլն դրամի կենցաղային սարքավորումներ և էլեկտրատեխնիկա, 53,2 մլն դրամի տնտեսական ապրանքներ ու սանհիգիենիկ միջոցներ, 238,2 մլն դրամի քիմիական նյութեր և լաբորատոր սարքավորումներ, 40,1 մլն դրամի կահույք, 14,7 մլն դրամի գրենական պիտույքներ, 2,7 մլն դրամի տպագրական նյութեր, 4.9 մլն դրամի ավտոպահեստամասեր, 15.5 մլն դրամի ավտոմեքենայի վառելանյութեր:

2016/2017 ուստարում կատարվել են շուրջ 585,6 մլն դրամի շինարարական և վերանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվել է ԵՊՀ ուսանողական հանրակացարանի (Ծարավ աղբյուրի 55ա) «Դ» մասնաշենքը: Կատարվել են ԵՊՀ ուսումնական մասնաշենքերի աշխատասենյակների, լսարանների, լաբորատորիաների, նկուղային հարկերի, միջանցքների, սանհանգույցների, տանիքների, ջեռուցման համակարգերի վերանորոգման, ինչպես նաև շենքերի երեսպատման, բակերի բարեկարգման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ավտոպարկը իրականացրել է 327 ուղերթ, այդ թվում՝ 122-ը՝ գիտաժողովների և հյուրերի սպասարկման համար, 98-ը՝ ուսումնաարտադրական պրակտիկայի և էքսկուրսիաների համար, 107-ը՝ ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների համար:

Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում պատշաճ ձևով կազմակերպվել են ուսումնաարտադրական պրակտիկայի հետ կապված աշխատանքները, ինչպես նաև համալսարանի աշխատողների և ուսանողների հանգիստը:

Ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժինը համալսարանի մասնաշենքերի հարակից տարածքների ծաղկազարդման համար գնել և բարեխղճորեն խնամել է 1100 թուփ ու ծաղիկ:

Հաշվետու ժամանակահատվածում հակահրդեհային ծառայությունը Ավանի ուսանողական հանրակացարանի «Գ» և «Դ» մասնաշենքերում տեղադրել է հրդեհի ինքնաշխատ ազդարարման համակարգ (7,4 մլն դրամ): Նույն մասնաշենքի տանիքի փայտյա կառուցատարրերը պատվել են հրակայուն լուծույթով (1,0 մլն դրամ): Ձեռք են բերվել 12 հրդեհաշիջման սկզբնական միջոցներ և 300 օրինակ մասնագիտական ցուցապաստառներ:

«Alfa-Delta» անվտանգության ծառայության կողմից անհրաժեշտ քանակի տեսախցիկներով համալրվել են Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Սոցիոլոգիայի և Ֆիզիկայի ֆակուլտետները: Տեղադրվել են ավտոմեքենաների մուտքը սահմանափակող մետաղյա արգելափակոցներ (Ալեք Մանուկյան և Չարենցի փողոցների կողմից):

## ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային գործունեություն իրականացնող հաստատություն է: Նրա առաքելությունն է նպաստել հանրապետության հյուսիսարևելյան սահմանամերձ գոտում գտնվող տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղը 2016-2020 թթ. զարգացման ծրագրի համաձայն է պլանավորում իր գործունեությունը, որի գերակա նպատակն է ապահովել բարձրորակ կրթություն, իր գիտական հետազոտություններով, նորարարական ուսուցմամբ ժողովրդական հին ու նոր արհեստները արվեստին մոտեցնելու և կիրառելի դարձնելու հետևողականությամբ նպաստել տարածաշրջանում հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացմանն ու նորովի մատուցմանը: Մասնաճյուղը կարևորում է իր դերը տարածաշրջանում, իր արտաքին և ներքին շահակիցների ցանկությունները, գնահատում իր հնարավորությունները, կադրային ներուժը և կազմակերպում արդարացված և նպատակային ուսումնառություն: Ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Մասնաճյուղն իր ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, ձգտում է աշխատողներին և ուսանողներին տրամադրելու բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր, իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովելու որակի շարունակական բարելավում և այլն:

Մայր բուհի անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ մասնաճյուղը պատվով ծավալում է իր գործունեությունը տարածաշրջանում: Նրա կարևոր ձեռքբերումներն են աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագիտություններով ուսումնառության կազմակերպումը, կրթական վերջնարդյունքներով ձևակերպված և ներդրված 16 կրթական ծրագրերն ու դասավանդվող բոլոր դասընթացների համար փաթեթները, որակի ներքին ապահովման գործընթացը, կրեդիտային համակարգի և էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» համակարգի լիարժեք կիրառումը:

Մասնաճյուղի ունեցած հեղինակության և մատուցած որակյալ կրթության մասին են վկայում շրջանավարտների երախտագիտության խոսքերը և նրանց տված գնահատականները: Մասնաճյուղի առկա ուսուցմամբ 165 շրջանավարտների 92,4 %-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 97,5 %-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից: Շրջանավարտների 92 %-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ: Մասնաճյուղը հպարտանում է իր՝ տարածաշրջանի աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտներով (արտաքին շահակիցների կարծիքով): 2016/2017 ուստարում միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ է հանձնվել մասնաճյուղի 416 շրջանավարտի (165-ը՝ առկա և 251-ը՝ հեռակա ուսուցման):

Մասնաճյուղն իր կատարած ուսումնասիրությունների շնորհիվ անմիջապես արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ վերաբացելով կամ փոխարինելով մասնագիտություններն ավելի ժամանակակից մասնագիտություններով: Արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով 2016/2017 ուստարում ընդունելության կազմակերպումը, որն ունեցավ 44 առաջին կուրսեցի, ուղղակի արձագանքն էր տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջների: Արդարացված էր նաև «Դիզայն» կրթական ծրագրով ուսումնառության կազմակերպումը:

Հաշվետու ուստարում որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան՝ մասնաճյուղում կազմվել և հաստատվել են «Սոցիալական աշխատանք», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը՝ 2017/2018 ուստարում դրանցով ուսումնառություն կազմակերպելու համար:

2016/2017 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների գծով ընդունվել է 196 դիմորդ (նախորդ ուստարվա 161-ի փոխարեն), այդ թվում 38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 201 դիմորդ (նախորդ ուստարվա 217-ի

փոխարեն): Նախորդ տարվա համեմատ նկատելի է դիմորդների թվի էական աճ առկա ուսուցման համակարգում:

Մասնաճյուղի դիմորդների շուրջ 99 %-ը (228 դիմորդից 225-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են: Ընդունելության համակարգի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Կրթօջախն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 970 աշակերտների հետ: Պարբերաբար կազմակերպվել են նաև դպրոցների բարձր դասարանների աշակերտների ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ: Հաշվետու ուստարում համագործակցության շրջանակն ընդլայնվել է, և Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը հանդիպումներ է կազմակերպել նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի 6 դպրոցներում: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը մասնաճյուղում շարունակելու գործընթացի շրջանակներում: Հաշվետու ուստարում կրթությունը շարունակելու նպատակով մասնաճյուղի 7 մասնագիտությունների գծով քոլեջներից շուրջ 18 հայտ է ներկայացվել:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպություններին են տրամադրվել ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույցը», մասնաճյուղի, Կիրառական արվեստի ֆակուլտետի և հեռակա ուսուցման բաժնի նաև վրացերեն և պարսկերեն լեզուներով պատրաստված գովազդային բուկլետները (350 օրինակ) և տեսաերիզները: Առաջին կուրսեցիների համար կազմվել և մասնաճյուղի կայքում տեղադրվել է «Առաջին կուրսի ուսանողի

ուղեցույցը», որի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել մասնաճյուղի կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին ու պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական կառույցներին ու նրանց գործունեությանը: Այս ուղեցույցն ունի ոչ միայն մեթոդական, այլև գովազդային կարևոր նշանակություն:

2016/2017 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 1685 ուսանող, նրանցից 1533-ը՝ վճարովի համակարգում:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 115 ուսանող (այդ թվում՝ 4-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 140 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 10 ուսանող: 2016/2017 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 470 ուսանող, այդ թվում՝ 183-ը՝ առկա ուսուցման համակարգում:

Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման (շուրջ 1781 ք. մ.) աշխատանքներ, 365 ք. մ. փայտե հատակ վերանորոգվել կամ փոխարինվել է, հիմնանորոգվել է 300 ք. մ. ցեմենտբետոնե ծածկույթ, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում և այլն: Ուսումնառության գործընթացը կազմակերպվել է հետևյալ ռեսուրսներով՝ տեսասարքով համալրված համակարգչային 5 սրահ և 5 լսարան, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան, 1 մասնագիտական լաբորատորիա, 8 արվեստանոց: Հատուկ պետք է նշել ԵՊՀ-ի թանկարժեք նվիրատվության մասին՝ էլեկտրոնային տախեոմետր, որով «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի ուսումնառողները զարգացնում են իրենց մասնագիտական կարողությունները: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 53 տպող և պատճենահանող սարքերով, ձեռք է բերվել 2 գունավոր տպող սարք, գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 172 համակարգիչ:

Մասնաճյուղում կայուն ներդրված է որակի ներքին ապահովման համակարգը, որի գործընթացների շրջանակներում իրականացվել են որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդրում, իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ, ներքին և արտաքին շահակիցների շրջանում անց են կացվել պլանավորված հարցումներ, կատարվել են դրանց արդյունքների համալիր վերլուծություններ: Կազմակերպվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման հերթական՝ 3-րդ զեկույցի հրապարակայնությունը և տպագրումը:

Ներդրվել և արդյունավետ գործում է մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելը՝ բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտը», որը մասնաճյուղում ստեղծել է ինքնագարգացող մանկավարժական միջավայր: Ըստ մասնաճյուղի զարգացման 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցի՝ կրթական ծրագրերի ղեկավարները Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետների անմիջական աջակցությամբ վերանայել են գործող ծրագրերի կրթական վերջնարդյունքները ՈԱՇ-ի պահանջներին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան, դասախոսների և 4-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպել են դրանց քննարկումներ: Այնուհետև համապատասխանեցվել են ծրագրի և նրա բաղկացուցիչ մաս կազմող դասընթացների կրթական վերջնարդյունքները, կազմակերպվել են դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից փորձի և բակալավրի կրթական ծրագրերում դրանց կիրառման հնարավորության ուսումնասիրություններ և քննարկումներ, ապա վերանայվել են կրթական վերջնարդյունքների ձևավորման համար ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդները: Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում առցանց հարցման միջոցով կատարված ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ դասախոսների 78 %-ն իր գիտական գործունեության արդյունքները ներառում է դասախոսություններում, դասընթացները կազմակերպվում են բավարար մակարդակի հետազոտական տարրի ընդգրկմամբ՝ դրա միջոցով ուսումնառության ընթացքում ուսանողի մեջ ձևավորելով վերլուծական և քննադատական հմտություններ: Արդյունավետ գործում են նաև բանավեճի ակումբը

և կրթական ծրագրերի ղեկավարներին աջակցող ուսանողական հանձնաժողովները, որոնց նպատակն է ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր: Պարբերաբար իրականացվում են հանդիպում-քննարկումներ ֆոկուս-խմբերի հետ և այլն:

Համալրվել և վերլուծվել են մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ 2011-21016), կազմվել է համապատասխան հաշվետվություն:

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և հաջողության հիմնական գրավականը նրա գիտամանկավարժական կազմն է: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 126 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.4 %), 38 դոցենտ (30,1 %), 51 ասիստենտ և 34 դասախոս (67.5 %), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 66 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 50 %-ից ավելի է: Մասնաճյուղում դասախոսների միջին տարիքը 47 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 30 է (23,8 %), 36-65 տարեկան՝ 87 (69,1 %), 65-ից բարձր՝ 9 (7,1 %): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 45,25 %-ը (57): 2016/2017 ուստարում մասնաճյուղն ունեցել է 1 դոկտորանտ, 2 ասպիրանտ և 9 հայցորդ: Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է 20,6:

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում, որն աջակցում ու խրախուսում է նրանց ինքնակրթության և ինքնազարգացման բոլոր դրսևորումները: Հաշվետու ուստարում անբասիր աշխատանքի համար մասնաճյուղի երկու դասախոս պարգևատրվել են ԵՊՀ-ի հուշամեդալով, 5-ը երաշխավորվել են դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

Մասնաճյուղում հաջողությամբ գործում է Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը, որի կազմակերպած դասընթացները նպատակ ունեն բարձրացնելու երիտասարդ դասավանդողների որակավորումը, կատարելագործելու նրանց դասավանդման մեթոդիկան, նպաստելու ուսումնական գործընթացում կրթական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը: Հաշվետու ուստարում կենտրոնի կողմից երիտասարդ դասախոսների համար կազ-



մակերպվել են նպատակային 7 դաս-քննարկումներ: Ընդ որում՝ երիտասարդները պարբերաբար մասնակցում են փորձառու դասախոսների դասերին կամ նրանց հրավիրում են իրենց դասերին: Ուսանողների և երիտասարդ դասախոսների համար արդյունավետ գործում են նաև անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցման կենտրոնները:

Դասախոսների գիտական գործունեությանն աջակցում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատողների հոդվածները: Հաշվետու ուստարում «Ակունք»-ում հրատարակվել է մասնաճյուղի դասախոսների ավելի քան 35 հոդված:

Հաշվետու ուստարում հրատարակվել են նաև մասնաճյուղի դասախոսների 2 մենագրություն, 5 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 63 գիտական հոդված, զեկուցման 1 թեզիս: 1 դասախոս ընդգրկված է ՀՀ ԳԿ 2 պետական դրամաշնորհային ծրագրերում, 10 դասախոս մասնակցել է տարբեր գիտաժողովների, որից 3-ը՝ ՀՀ-ում, 5-ը՝ արտերկրում: 6 դասախոս մասնակցել է 12 հանրապետական և 4-ը՝ մեկական միջազգային ցուցահանդեսների, 2 դասախոս կազմակերպել է անհատական ցուցահանդես (ՀՀ-ում, ԱՄՆ-ում): Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է ստացել մասնաճյուղի 1 երիտասարդ դասախոս:

ԵՊՀ Իմ-ի դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով: 2016/2017 ուստարվա 1-ին կիսամյակի հարցումների արդյունքների համաձայն՝ բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաքանակական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.65-ից:

Համալսարանականներին ու մարզի քաղաքացիներին զեղազիտական, համամարդկային արժեքներ փոխանցելու գործում իր ուրույն տեղն ունի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետը, որի ուսանողների և դասախոսների կողմից կազմակերպված զեղարվեստական աշխատանքների ցուցահանդեսները, նրանց կարած հագուստների ցուցադրություններն ընդունվում են ոգևորությամբ: 2016/2017 ուստարում կազմակերպվել են ցուցահանդեսներ՝ նվիրված Մայրության և զեղեցկության տոնին, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, Հաղթանակի օրվան, ընդ որում՝ ցուցահան-

դեսներին մասնակցելու համար առաջադրանք տրվել է բոլոր ուսանողներին, ապա մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվել են ցուցադրության արժանի աշխատանքները: Հաշվետու ուստարում ֆակուլտետի ուսանողները դասախոսների դեկավարությամբ կատարել են պլեներային աշխատանքներ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում:

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գրավականներից է պրակտիկաների ճիշտ և նպատակային կազմակերպումը: Ըստ մասնաճյուղի զարգացման ռազմավարական պլանի՝ վերանայվել կամ կազմվել են ուսանողների գործնական հմտությունների, ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը միտված նպատակային պրակտիկաների ծրագրեր, որոնք ապահովում են նաև կապը կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների հետ: Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ: Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, նաև ուսանողների առաջարկները, որոնք հավաքագրվել են տարբեր ուսումնասիրությունների միջոցով: Հաշվետու ուստարում արտադրական և մանկավարժական պրակտիկա են անցել առկա ուսուցման 184 և հեռակա ուսուցման 207 ուսանողներ: Հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Ուսումնական պրակտիկա են անցել առկա ուսուցման 129 և հեռակա ուսուցման 105 ուսանողներ:

Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի 4 ուսանող ընդգրկված են եղել VivaCell MTS-ի կրթական ֆոնդում, 9 ուսանող՝ ՀՕՖ-ի Մաթևոսյան կրթաթոշակի ծրագրում: Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀԵՀ) կողմից 2016/2017 ուստարվա երկրորդ կիսամյակում հայտարարված մրցույթի արդյունքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից կրթաթոշակի են արժանացել 25 ուսանող:

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի (<http://ijevan.y-su.am/>) միջոցով (եռալեզու տարբերակի իրականացումն ընթացքի մեջ է), «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի, ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերի միջոցով:

Կառավարման գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և ուսանողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից մեծ է կայքի՝ որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 403 ուսանողներից 203-ը 2017 թ. հարցման ժամանակ պատասխանել է, որ կայքից օգտվում է «շատ հաճախ» ու «հաճախ»: 4.6-ից բարձր միջին գնահատականներով նրանք փաստել են, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից և լիարժեքությունից: Մասնաճյուղի պաշտոնական կայքը 2017 թ. օգոստոսի դրությամբ ունի 204 էջ (նախորդ տարվա 194 էջի փոխարեն), տեղադրված է 1825 նյութ, 7936 ֆայլ (նախորդ տարվա 6051 ֆայլի փոխարեն): Կայքի «ԶԼՄ-ները մեր մասին» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր: Հաշվետու ուստարում 1-ին լրատվականով, “YouTube”-ով, տարբեր կայքերով լուսաբանվել են շուրջ 13 իրադարձություն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը հաշվետու ուստարում համալրվել է շուրջ 700 միավոր գրականությամբ և ներառում է 15324 գիրք, որից 6510-ը դասագիրք է,

2921-ը ծրագրային գեղարվեստական, 3357-ը՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր են, գրադարանը համալրված է 1950 էլեկտրոնային-տեղեկատվական և 586 այլ նյութերով՝ գիտական տեղեկագրեր ու հանդեսներ, քարտեզներ և այլն: Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը:

Կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է շուրջ 70 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն ուսանողական համապատասխան կառույցները: Հաշվետու ուստարում ուսանողական խորհրդի (ՈԻԽ) կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և մարզական շուրջ 39 միջոցառումներ, մրցույթներ և հանդիպումներ: ՈԻԽ անդամները մասնակցել են համապետական ուսանողական եռօրյա խորհրդածողովին, ՄԱԿ-ի ազգային ասոցիացիայի կազմակերպած եռօրյա դասընթացներին, համագործակցել են ՀԵՀ Տավուշի մարզային կենտրոնի, Ինֆոտանի, ՀՈԻԱԱ-ի «Կրթական ավտոբուս» ծրագրի, ՀԿ-ների և բարձրագույն կրթության կազմակերպման փորձագետների հետ՝ կազմակերպելով խաղեր, թեմատիկ դասընթացներ: Մասնաճյուղի 4 ուսանող մասնակցել է «Բազել-2016» հավաքին, նրանցից 2-ն արժանացել են մրցանակների: Մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները հերթական անգամ մասնակցել են ԱՄՆ խաղաղության կորպուսի կողմից կազմակերպված «WRITE ON! COMPETITION 2017» էսսեների մրցույթին: Հանրապետական փուլի 541 մասնակիցների մեջ մասնաճյուղի 3 ուսանող գրավել են 1-ինից 3-րդ տեղերը, իսկ իրենց երկրներում առաջին տեղ գրաված 22 երկրների ներկայացուցիչների մեջ միջազգային փուլում 2-րդ մրցանակային տեղ գրաված Հայաստանի 2 մասնակիցներից մեկը մասնաճյուղի ուսանողն էր: Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) կողմից կազմակերպվել են զեկուցումների շարքեր ֆակուլտետներում, սեմինարներ, խորհրդատվական դասընթացներ: ՈԻԳԸ անդամները մասնակցել են «Երիտասարդության

խնդիրները և պետության զարգացման միտումները» խորագրով հանրապետական գիտաժողովին:

Հարկ է նշել, որ ինչպես միշտ, 2016/2017 ուստարում ևս Իջևանի մասնաճյուղի գործունեությունը գտնվել է ԵՊՀ ուշադրության կենտրոնում, նրա ամբողջ գործունեությունը, ձեռքբերումներն ու նվաճումները պայմանավորված են Մայր բուհով:

\* \* \*

Ամփոփելով Երևանի պետական համալսարանի 2016/2017 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ներկայացվածը՝ փաստենք, հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ գործունեության տարբեր բնագավառներում արձանագրվել են զգալի հաջողություններ ու ձեռքբերումներ, որոնք նպաստել են համալսարանի առաջընթացին ու զարգացմանը: Մակայն միաժամանակ եղել են թերացումներ ու բացթողումներ, որոնք էականորեն դանդաղեցրել են այդ առաջընթացը, երբեմն պատճառ դարձել ձախողումների: Պետք է նշել, որ բացթողումների մի մասը գալիս է նախորդ տարիներից և դեռևս չի հաղթահարվել: Ուստի անելիքները շատ են, չպետք է բավարարվել ձեռք բերածով, այլ մշտապես պետք է ձգտել թերացումները շտկելու, հաջողությունները բազմապատկելու: Միայն գործի հանդեպ մեծ պատասխանատվության և համատեղ ջանքերի շնորհիվ կարող ենք և պարտավոր ենք պահպանել մայր կրթօջախի առաջատար դերը մեր երկրում, ապահովել նրա բարձր վարկանիշը թե՛ մեր հանրապետությունում և թե՛ միջազգային գիտակրթական ասպարեզում:

**ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2015-2018 ԹԹ.  
ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ (2017 Թ.)**

**Հակակոռուպցիոն քաղաքականություն, աշխատանքային  
գործընթացներ և միջոցառումներ**

ԵՊՀ զարգացման և արդյունավետ գործունեության համար ռազմավարական նշականություն ունի կոռուպցիոն երևույթների կանխարգելումն ու դրանց չեզոքացումը: Այս նպատակով համալսարանում արդեն երկու տարի է գործում է ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը, որն ընդունվել է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2015 թ. փետրվարի 19-ին: Ծրագրի հիմնական նպատակը կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարն է համալիր միջոցառումների պլանավորման և իրականացման միջոցով: Այս ծրագրի շրջանակներում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները և միջոցառումները.

- ուսումնական գործընթացին առնչվող տարբեր խնդիրներ (քննություններ, դասավանդում, գրականության ձեռքբերում, գնահատում, ուսանողի շարժունակություն, հեռացումներ և այլն) և այդ գործընթացի թափանցիկության ապահովմանն ուղղված միջոցառումներ,
- ԵՊՀ ներքին իրավական ակտերի կատարելագործման գործընթաց,
- անձնակազմի արդյունավետ կառավարմանը, աշխատողների աշխատանքի ընդունման/ազատման, պաշտոնական առաջխաղացման, խրախուսման, պարգևատրման թափանցիկության ապահովմանն ուղղված միջոցառումներ,
- ԵՊՀ աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

2017 թ. ընթացքում ԵՊՀ-ն շարունակել է իր գործունեությունը՝ հաշվի առնելով վերոհիշյալ ծրագրով առաջադրված խնդիրները, միջոցառումների ուղղությունները: Շարունակվել են ԵՊՀ ռեկտորի 2014 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով ձևավորված

ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի պարբերական բնույթ ունեցող նիստերն ու խորհրդակցությունները, որոնց ընթացքում քննարկվել են իրականացված հակակոռուպցիոն միջոցառումները և հետագա գործողությունների պլանը: 2017 թ. հունիսի 13-ին ռեկտորի հրամանով հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի կազմը փոփոխվել է. որոշ աշխատողներ և ուսանողներ դուրս են եկել հանձնաժողովի կազմից, ինչպես նաև փոխվել է հանձնաժողովի քարտուղարը (նախկին քարտուղարը ԵՊՀ-ից տեղափոխվել է այլ աշխատանքի):

Կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի ծրագրի շրջանակում շարունակվել է համագործակցությունը այլ կառույցների և ծրագրերի հետ: Այս համատեքստում մասնավորապես կարևոր է նշել Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կողմից իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում համագործակցությունը:

### **Կրթական գործընթաց, գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում, փոխաստեղծումներ**

«Կրթական գործընթացում կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում» խնդիրների շրջանակում առանձնահատուկ պետք է նշել 2017 թ. մայիսի 4-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված որոշումը՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում» փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Փոփոխությունները հիմնականում վերաբերում են քննությունների և ստուգարքների կազմակերպմանը, գիտելիքների ստուգմանը և գնահատմանը, ուսանողի՝ դասերին մասնակցելու խնդիրներին, ակադեմիական պարտքերի մարմանը և այլն: Համաձայն կարգի՝ ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվելու է միայն ուսանողի ներկայությամբ: Նոր կարգի համաձայն՝ փոխվել է նաև ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի կազմակերպումը: Հանվել է մասնակցության համար նախկինում տրվող երկու միավորը:

Վերանայվել են բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերն ու դրանց կառուցվածքը և բովանդակությունը:

ԵՊՀ ուսումնասեթոդական վարչության ստորաբաժանումներն իրականացրել են ստուգումներ ԵՊՀ-ում ուսումնական գործընթացին առչվող գործառույթների շրջանակներում:

Ամփոփիչ ատեստավորումների (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզի պաշտպանություն) թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով շահագործվել են լսարաններում տեսաձայնագրող սարքերը, և բողոքարկումներն անցկացվել են տեսանյութի քննարկման հիման վրա:

ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել են «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. մարտի 2-ի թիվ 5 նիստում) և «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. հոկտեմբերի 12-ի թիվ 1 նիստում): Վերոնշյալ կարգերով հստակեցվել են թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման գործընթացները, մտցվել են դրանց կատարման ընթացքի մոնիթորինգի մեխանիզմներ, գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Երկու փաստաթղթով էլ նախատեսված են նաև գրագորությունը կանխելու միջոցառումներ:

Ստեղծվել է «Ուսանող-համալսարան» վիրտուալ տիրույթը, որը պետք է ապահովի սովորողի փոխգործակցությունը համալսարանական տարբեր կրթական և կազմակերպական գործունեություն իրականացնող օղակների հետ: ԵՊՀ ռեկտորի 2017 թ. հոկտեմբերի 25-ի 187Ց82 հրամանի համաձայն սահմանվել է, որ ԵՊՀ սովորողներին առնչվող հրամանները, դասացուցակները, ժամանակացույցները, հայտարարությունները և այլ տեղեկատվություն ուղարկվելու է միայն համալսարանական փոստի միջոցով:

Աշխատանքներ են տարվել ուսանողների փոխատեղման գործընթացը առավել թափանցիկ դարձնելու նպատակով: ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. հուլիսի 6-ի նիստում հաստատվել է «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստ-



ների, պետական և ներբուհական կրթաթոշակների հասկացման կարգը՝ փոփոխություններով և լրացումներով: Համաձայն կարգի՝ ԵՊՀ մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակները մեկօրյա ժամկետում պետք է ուղարկվեն ուսանողների էլեկտրոնային հասցեներին: Դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն համալսարանի մանդատային հանձնաժողովին:

Ըստ «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի»՝ թեզի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում պաշտպանության, իսկ պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ուսանողների տեղափոխության (այլ բուհերից, միջին մասնագիտական հաստատություններից, ներքին տեղափոխություն, ուսուցման համակարգի փոփոխություն, երկրորդ մասնագիտությամբ ուսուցում) արդյունքում առաջացող առարկայական տարբերությունների հանձնումը իրականացվում է ԵՊՀ ռեկտորի 2017 թ. հոկտեմբերի 10-ի հրամանով ձևավորած հանձնաժողովներով:

Մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացքում հնարավոր խախտումները կանխելու նպատակով ԵՊՀ ռեկտորի հրամանով ձևավորվել են հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվել են ամբիոնի վարիչը, դասընթացը վարող դասախոսը, դեկանը (դեկանի տեղակալը) և ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչը՝ ըստ անհրաժեշտության:

### **Քարոզչական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում**

2017 թ. ընթացքում ԵՊՀ-ում շարունակվել են հակակոռուպցիոն ծրագրի շրջանակում իրականացվող հանդիպումները, քննարկումները և կարգավորման համապատասխան միջոցների ներդնումը բուհական կյանքում: Մի շարք գործընթացներ ու դրանց վերաբերյալ քննարկումներն առավել թափանցիկ դարձնելու և ԵՊՀ ներքին շահառուների տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով բոլոր

հանդիպումները լուսաբանվել են, իսկ համապատասխան նյութերն իրենց տեղն են գտել ԵՊՀ պաշտոնական կայքում և ամեն ամիս լույս տեսնող «Երևանի համալսարան» թերթում:

ԵՊՀ ռեկտորատի անդամները (պրոռեկտորի, դեկանների և ռեկտորատի այլ անդամների մասնակցությամբ) հատուկ նպատակային հանդիպումներ են ունեցել առաջին կուրսեցիների հետ, նրանց տեղեկացրել ներհամալսարանական տարբեր գործընթացների մասին:

ԵՊՀ ներքին հաղորդակցության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով բուհում ընդունված կամ փոփոխության ենթարկված կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկվել է ԵՊՀ աշխատողների և ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեներին: Նրանց իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար թարմացվել է ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» կայքը (<http://documentation.y-su.am/>). ընդունված կամ փոփոխման ենթարկված ԵՊՀ հրամաններն ու կանոնակարգերը, աշխատանքային գործընթացը կարգավորող բոլոր փաստաթղթերը, տարբեր մակարդակների կառավարման մարմինների նիստերի արձանագրությունները տեղադրված են վերոհիշյալ կայքում:

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի վարչությունը 2017 թ. ընթացքում շարունակել է պարբերաբար տեղեկատվություն տրամադրել ԵՊՀ-ին վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ: ԵՊՀ պորտալի «Հարց-պատասխան» բաժինը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի համար, ակտիվորեն կիրառվել է՝ ապահովելով բուհի մասին ճշգրիտ տեղեկատվության շրջանառումը: «Հարց-պատասխան» առցանց գործիքի միջոցով 2017 թ. ընթացքում ստացվել է 1481 նամակ, որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ: Հետադարձ կապ է ապահովվում նաև ԵՊՀ ֆեյսբուքյան էջի և էլեկտրոնային փոստի միջոցով:

«Երևանի համալսարան» ամսաթերթում և պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվել են կոռուպցիոն խնդիրների կանխարգելմանը, հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմանը վերաբերող նյութեր:

Ուսումնական գրականության ապահովման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու և, միաժամանակ, հնարավոր կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու

նպատակով ԵՊՀ ռեկտորի 2017 թ. սեպտեմբերի 22-ին հրամանով սահմանվել է, որ հանձնարարվող գրքերն ուսանողների կողմից ձեռք են բերվում կամավորության սկզբունքով: Նշված հրամանով նաև շեշտադրվել է ուսանողներին պրոֆեսորադասախոսական կազմի և այլ աշխատողների կողմից գրականության ձեռքբերման վերաբերյալ առաջարկությունների, խորհուրդների կամ ուղղորդումների առնչությամբ էթիկական խնդիրների հանգամանքը (խնդիրը հետագայում կանոնակարգվելու է համապատասխան էթիկայի կանոնակարգի շրջանակներում):

Համալսարանական համակազմի իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ակտիվորեն օգտագործվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի հնարավորությունները: Ուսանողների տեղեկացվածությունն ապահովելու նպատակով ԵՊՀ կայքում տեղադրվել են «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգով սովորող ուսանողների համար (<http://ysu.am/education/hy>): Ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ թարմացվել է «Առաջին կուրսեցու ուղեցույցը» (առցանց):

### **Ներքին իրավական ակտերի մշակում**

2017 թ. ընթացքում շարունակվել են ներքին իրավական նոր ակտերի քննարկման և հաստատման, ինչպես նաև հին իրավական ակտերի վերանայման և փոփոխման գործընթացները: Արդյունքում ընդունվել, վերամշակվել և/կամ վերահաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

- ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- 2017/2018 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ,
- 2017/2018 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ,

- Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ (նոր ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ աշխատողների օտարերկրյա գործուղումների ձևակերպման կանոնակարգ (նոր ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր,
- ԵՊՀ մեթոդական խորհրդի կանոնակարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ (կատարվել են փոփոխություններ և լրացումներ),
- «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթուղթ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),

- Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ (նոր ընդունված փաստաթուղթ):

### **Մարդկային ռեսուրսներ, ֆինանսական կառավարում, գնումների գործընթաց**

ԵՊՀ անձնակազմի խրախուսման և պարզևատրման գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով 2017/2018 ուսումնական տարվանից սկսել է գործածվել ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը: Վերջինս ներառում է հստակ ձևակերպված և չափելի կետեր, որոնց համաձայն տրամադրվում են լրավճարներ՝ ծավալած համապատասխան գործունեության համար: Այս կանոնակարգը հստակ ուրվագծում է խրախուսման ենթակա աշխատանքների արդյունքները և նպաստում բոլորի համար թափանցիկ, կանխատեսելի և չափելի գործընթաց: Միաժամանակ ամբողջապես շահագործվել է «Համալսարանի աշխատողների ներքին տիրույթը» (ինտրանետ համակարգ), որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները, աջակցել ԵՊՀ միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը:

2017 թ. հունվարի 31-ին ռեկտորի հրամանով ստեղծվեց աշխատանքային խումբ՝ ԵՊՀ-ում մարդկային ռեսուրսների (ՄՌ) կառավարման հայեցակարգը մշակելու նպատակով: Այս խմբի աշխատանքների արդյունքում ԵՊՀ գիտխորհրդի 2017 թ. հուլիսի 6-ի նիստում հաստատվեց «ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգը»: Վերջինս սահմանում է ԵՊՀ-ում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխումների տեսլականը, շեշտադրում է աշխատողների աշխատանքի ընդունման, խրախուսման ու կարգապահական տույժերի ենթարկելու, աշխատանքային պարտականությունները սահմանելու, աշխատանքի արդյունքները գնահատելու և ՄՌ կառավարման այլ խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:

ԵՊՀ ներքին իրավական ակտերի համաձայն իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների անցկացման,

դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացի խրախուսման աշխատանքներ: 2017 թ. ընթացքում հայտարարվել է պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմի պաշտոնների 145 մրցույթ: ԵՊՀ-ում թափուր աշխատատեղերի մրցույթի հայտարարությունները տարածվել են հնարավորինս լայն շրջանակներում՝ ԵՊՀ ինտերնետային պորտալում, հանրապետական մամուլում:

Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման, ծրագրային ապահովման նպատակով ներդրված «Հայկական ծրագրեր, 6-րդ տարբերակ»-ը 2017 թվականի վերջին փոխարինվելու է ավելի կատարելագործված 7-րդ տարբերակով: Կատարելագործվել է նաև ներդրված «Հայկական ծրագրեր-Ձեռնարկություն» ծրագիրը, որը համատեղ շահագործվում է ԵՊՀ հաշվապահության և կադրերի բաժնի կողմից: Դեռևս ներդրման և փորձարկման փուլում է գտնվում «Ուսանող» ծրագիրը, որը շահագործվելու է ԵՊՀ հաշվապահության և ուսումնամեթոդական վարչության կողմից:

Գնումների, պլանավորման և պահեստավորման նորաստեղծ վարչությունը 2017 թ. ապահովել է գնումների առավել արդյունավետ և կանոնակարգված գործընթաց: Գնումներն իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերով՝ ապահովելով ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների մասնակցությունն ու ներգրավումը: Համալսարանի ֆինանսական կառավարման հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը բարձրացնելու նպատակով 2018 թ. եկամուտների ու ծախսերի նախահաշիվն ու 2017 թ. կատարողականը ներկայացվել են ԵՊՀ գիտխորհրդի քննարկմանը: ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեությունը ենթարկվել է համապատասխան աուդիտի, արդյունքները հրապարակված են ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» բաժնում:

### **Ուսանողների և ուսանողական կազմակերպությունների մասնակցություն**

ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումներում էապես կարևորվում է ուսանողների ակտիվ մասնակցությունը, որն ապահովվում է ինչպես ուսանողական կազմակերպությունների (Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն) համապատասխան գործունեությամբ, այնպես էլ ուսանողական հարցումների և այլ միջոցառումների իրականացմամբ:

Հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մոնիթորինգի, ուսանողների հետ հետադարձ կապի ահապովման համատեքստում ինչպես և նախորդ տարիներին, յուրաքանչյուր կիսամյակ անցկացվել են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցումներ և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Ի դեպ, ինչպես ուսանողների, այնպես էլ շրջանավարտների հարցումները անցկացվել են առցանց եղանակով: Տեղի են ունեցել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքների քննարկումներ ԵՊՀ գիտական խորհրդում և ֆակուլտետներում: Ուսանողական հարցումների տեղեկատվական հատվածի երեք հարցերից երկուսը վերաբերում են կոռուպցիոն ռիսկերի դրսևորմանը:

- Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք):
- Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով:

Հարցման արդյունքները քննարկվել են գիտական խորհրդում և տրամադրվել են ֆակուլտետներին: Հավելվածի թիվ 1 ներդիրում ներկայացված են 2016/2017 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների հարցումների արդյունքները: Առկա ուսուցման համակարգում 2016/2017 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողների 0.7 %-ը դրական է պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու մասին հարցին (նախորդ տարի այս ցուցանիշը կազմել է 1.6 %), իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու վերաբերյալ հարցին դրական է պատասխանել 1.5 %-ը (նախորդ տարի այս ցուցանիշը կազմել է 2.4 %): 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողներից վերոհիշյալ հարցերին դրական են պատասխանել համապատասխանաբար՝ 0.7 %-ը և 1.5 %-ը (նախկինում՝ 1.7 % և 2.4 %՝ համապատասխանաբար):

2016/2017 ուստարվա հարցումների արդյունքով վերոհիշյալ ցուցանիշները բավարարիատի և մագիստրատուրայի համակարգերում տարբերվում են: 2016/2017 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած մագիստրատուրայի ուսանողների շրջանում վերոհիշյալ հարցերից յուրաքանչյուրին դրական է պա-

տասխանել հարցվածների համապատասխանաբար 0.1 %-ը և 0.9 %-ը, իսկ բակալավրիատի ուսանողների՝ 0.4 %-ը և 0.2 %-ը:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներն ընդգրկում են ողջ ուսումնառության ընթացքը և արտացոլում ցուցանիշների գրեթե նույն պատկերը (Հավելվածի թիվ 2 ներդիրում ներկայացված են 2016/2017 ուստարվա շրջանավարտների հարցումների արդյունքները):

Դրամի դիմաց գնահատական ստանալու հարցին դրական են պատասխանել հարցմանը մասնակցած բակալավրիատի շրջանավարտների 0.48 %-ը (նախորդ ուստարում՝ 1.9 %) և մագիստրատուրայի՝ 1.2 %-ը (նախորդ ուստարվա համեմատ փոփոխություն գրեթե չկա): Բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատական կամ ստուգարք ստանալու վերաբերյալ հարցին դրական են պատասխանել՝ բակալավրիատի շրջանավարտների 2.3 %-ը (նախորդ ուստարում՝ 3.4 %) և մագիստրատուրայի՝ 0.9 %-ը (նախորդ ուստարում՝ 2.0%):

Ուսանողական կազմակերպությունները պարբերաբար կազմակերպել են հանդիպումներ ռեկտորի և պրոռեկտորների հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են ուսանողներին հուզող մի շարք խնդիրներ: Կազմակերպվել են ուսանողների ներհամալսարանական մասնակցությունը խթանող դասընթացներ, որոնց ընթացքում ներկայացվել են ներհամալսարանական կառավարման խնդիրներն ու գործընթացներ: ՈւՄ կողմից հիմնադրված «Զարգացում» դպրոցի, «Հաջողության նախագիծ» նախաձեռնության, «Բանավեճի ակումբի» շրջանակներում իրականացվող ծրագրերի արդյունքում զարգացվել են ուսանողների առաջնորդության հմտություններն ու կարողությունները, ԵՊՀ տարբեր մակարդակների կոլեգիալ կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողները տեղեկացվել են բուհական և կրթական ոլորտի հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների մասին:

### **Համագործակցություն ԵՄ հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակում**

ԵՊՀ աշխատողներն ու ուսանողները 2017 թ. ընթացքում պարբերաբար ներգրավված են եղել ոչ միայն բուհում ընթացող, այլև մի շարք համագործակցությունների շրջանակներում իրականացվող ծրագրերում, որոնք նպաստում են կոռուպցիոն



դիսկերի դեմ պայքարի վերաբերյալ գիտելիքի և փորձի հարստացմանը: Այս համատեքստում կարևոր է շեշտադրել Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող ծրագրերին ԵՊՀ ներակայացուցիչների ակտիվ մասնակցությունը: Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համագործակցությամբ իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, քննարկումներ, դասընթացներ, սեմինարներ որոնք ներկայացված են ստորև՝

1. «Էթիկայի կանոնագրքի մշակումը բուհերում. միջազգային փորձ և պրակտիկ հմտություններ» դասընթաց (2017 թ. մայիսի 10-11, Երևան):
2. Ուսումնական ծրագրերի մշակման և ուսանողների գնահատման հաշվետվողականության և թափանցիկության գործիքակազմին նվիրված աշխատաժողով (2017 թ. հունիսի 19-20, Երևան):
3. Առցանց հաշվետվությունների հարթակի իրականացմանը նվիրված սեմինար (2017 թ. սեպտեմբերի 27-28, Երևան):
4. Բուհերի մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) թափանցիկության և հաշվետվողականության խթանման աշխատաժողով (2017 թ. հոկտեմբերի 26-27, Երևան):
5. «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի արդյունքների ամփոփիչ համաժողով (2017 թ. նոյեմբերի 30, Երևան)

«Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում 2017 թ. հունիսի 14-ին տեղի է ունեցել ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ընդլայնված նիստ, որի ընթացքում ծրագրի համակարգողների և փորձագետների մասնակցությամբ քննարկվել են բուհերում էթիկայի կանոնակարգերի ներդրման խնդիրները: ԵՊՀ իրավաբանական բաժնի ջանքերով մշակվել է ԵՊՀ էթիկայի կանոնակարգի նախագիծ, որը սահմանված կարգի համաձայն կքննարկվի ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2018 թ. ընթացքում:

**Հավելվածի ներդիր 1.**

**Երևանի պետական համալսարան**  
**Ուսանողական հարցման «Տեղեկատվական հատված»-ի արդյունքներ**  
**2016/2017 ուստարի, 1-ին կիսամյակ**

**Առկա ուսուցում**

**Հարցմանը մասնակցել է 7040 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	50	6531	6581
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	105	6465	6570

**Բակալավրիատ**

**Հարցմանը մասնակցել է 6156 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	44	5672	5716
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	102	5604	5706

**Մագիստրատուրա**

**Հարցմանը մասնակցել է 884 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	6	859	865
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	3	861	864

**Բակալավրիատ**

**1-ին կուրս**

**Հարցմանը մասնակցել է 1642 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	15	1452	1467
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	24	1441	1465

**2-րդ կուրս**

**Հարցմանը մասնակցել է 1570 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	13	1430	1443
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	41	1400	1441

### 3-րդ կուրս

#### Հարցմանը մասնակցել է 1573 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	8	1483	1491
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	22	1463	1485

### 4-րդ կուրս

#### Հարցմանը մասնակցել է 1371 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	8	1307	1315
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	15	1300	1315

### Մագիստրատուրա

#### 1-ին կուրս

#### Հարցմանը մասնակցել է 552 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	3	536	539
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	1	538	539

**2-րդ կուրս**

**Հարցմանը մասնակցել է 332 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	3	323	326
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	2	323	325

**2016/2017 ուստարի, 2-րդ կիսամյակ**

**Հարցմանը մասնակցել է 5864 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	41	5237	5278
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	82	5175	5257

**Բակալավրիատ**

**Հարցմանը մասնակցել է 5331 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	39	4717	4756
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	81	4657	4738

**Մագիստրատուրա**

**Հարցմանը մասնակցել է 533 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	2	520	522
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	1	518	519

**Բակալավրիատ**

**1-ին կուրս**

**Հարցմանը մասնակցել է 1319 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	9	1177	1186
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	32	1149	1181

**2-րդ կուրս**

**Հարցմանը մասնակցել է 1656 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	12	1391	1403
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	26	1367	1393

### 3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1268 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	5	1107	1112
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	9	1098	1107

### 4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1088 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	13	1042	1055
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	14	1043	1057

### Մագիստրատուրա

#### 1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 533 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	2	520	522
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	1	518	519

**Հավելվածի ներդիր 2.**

**Երևանի պետական համալսարան  
Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ  
շրջանավարտների հարցման արդյունքներ  
2017 թ.**

**Բակալավրիատ**

**Հարցմանը մասնակցել է 1041 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	5	1022	1027
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	24	1003	1027

**Մագիստրատուրա**

**Հարցմանը մասնակցել է 327 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	4	315	319
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	3	315	318